

# **ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

## **Ալֆրեդ Ռուբենի Սադոյան**

**Ազգային իրավական համակարգը և դրա զարգացման  
հիմնախնդիրները գլոբալացման պայմաններում  
(պատմատեսական-իրավական վերլուծություն)**

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

**Գիտական ղեկավար՝  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Գ.Հ. Սաֆարյան**

**Երևան 2016**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|                          |          |
|--------------------------|----------|
| <b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b> | <b>3</b> |
|--------------------------|----------|

### **ԳԼՈՒԽ 1**

#### **ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ**

#### **ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

|                                                                                            |    |
|--------------------------------------------------------------------------------------------|----|
| 1.1. Ազգային իրավական համակարգի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները.....  | 18 |
| 1.2. Ազգային իրավական համակարգի պատմական զարգացման հիմնական ուղենիշները.....               | 40 |
| 1.3. Ազգային իրավական համակարգի հասկացությունը, կառուցվածքը, համակարգաձևավորող կապերը..... | 58 |

### **ԳԼՈՒԽ 2**

#### **ԳԼՈՒԽԱՅՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**

#### **ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

|                                                                                             |     |
|---------------------------------------------------------------------------------------------|-----|
| 2.1 Գլոբալացումն իրավական ոլորտում. զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկությունները..... | 102 |
| 2.2 Իրավագիտությունը և ազգային իրավական համակարգի զարգացման հիմնախնդիրները.....             | 124 |
| 2.3 Ազգային իրավունքի զարգացման միտումները իրավական գլոբալացման պայմաններում.....           | 133 |

|                      |            |
|----------------------|------------|
| <b>ԱՄՓՈՓՈՒՄ.....</b> | <b>141</b> |
|----------------------|------------|

|                                           |            |
|-------------------------------------------|------------|
| <b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b> | <b>146</b> |
|-------------------------------------------|------------|



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի հետազոտության արդիականությունը.** Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն ծավալային պատմական փոփոխություններով, որոնք վերջին տասնամյակներում տեղի են ունեցել հայ հասարակության կյանքի սոցիալական, տնտեսական, քաղաքական և իրավական ոլորտներում: Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև մեզանում ընթացող սահմանադրական և դատական-իրավական բարեփոխումներով: Այս կապակցությամբ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը», որում մասնավորապես նշված է, որ «Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավական համակարգի և դատական իշխանության ապահովումն է»<sup>1</sup>:

Ձևավորված նոր աշխարհաքաղաքական պայմաններում առավել սոցիալական նշանակություն են ձեռք բերում Հայաստանի պետաիրավական զարգացման հետագա ուղիների որոնման խնդիրները, ինչն առաջ է քաշում ոչ միայն իրավական հիմնահարցերի մի ամբողջ ասպեկտը, այլև կանխորոշում է իրավական երևույթների վերլուծության անհրաժեշտությունը դրանց փոխկապակցվածության և միասնականության մեջ: Դրանց թվից է նաև Հայաստանի իրավական համակարգի բնույթի, աշխարհի իրավական քարտեզի վրա դրա տեղի ու նշանակության հարցը: Այդ բոլոր խնդիրները բարդ են, բազմաշերտ, և դրանց լուծման համար նախկին մեթոդաբանական գիտանոցը այլևս բավական չէ: Անհրաժեշտ են նոր մեթոդներ, որոնց թվում առավել հեռանկարային են ներկայանում սոցիալական արմատների ընդհանրությամբ կապակցված սոցիալական իրականության տարբեր ֆենոմենների համակարգային, միջդիսցիպլինային հետազոտությունը:

Տեսական-գործնական առումով «իրավական համակարգ» կատեգորիայի դիտարկումը հեռանկարներ է բացում կոնկրետ իրավական երևույթների ավելի խոր և հանգամանալից իմաստավորման, օրենսդրության և իրավակիրառ գործունեության կատարելագործման, իրավական կարգավորման արդյունավետության բարձրացման

---

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», № 33 (907), 11 հուլիսի 2012, էջ 16:

անհատական, ինչպես նաև հասարակական իրավական մշակույթի և իրավագիտակցության զարգացման համար և այլն:

Իրավական համակարգի հետազոտությունը արդիական է և մեծ հետաքրքրություն է հարուցում նաև այն պատճառով, որ իրավունքը իմաստավորվում է հասարակական գիտակցության մեջ արտացոլվող որպես օբյեկտիվորեն անհրաժեշտ նորմատիվ կարգավորիչ: Իրավունքը կարևոր դեր է խաղում նաև հասարակության հոգևոր մշակույթի զարգացման գործում:

Բացի նշվածից, իրավական համակարգի արդյունավետությունն ու կենսունակությունը դրսևորվում է այն չափով, որքանով ժամանակակից պետությունը կապում է դրա զարգացումն իրավական գիտակցության ձևավորման հետ, իրավական մշակույթի կատարելագործման, ներպետական ու միջազգային հարաբերություններում իրավական կայունության հաստատման հետ:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալացման գործընթացների ինտենսիվացումը չի կարող ազդեցություն չգործել ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ իրավունքի ճյուղային գիտությունների շրջանակներում իրավական համակարգի մասին ուսմունքի հետագա զարգացման վրա: Նշված հանգամանքները սահմանում են հետազոտման ընտրված ոլորտի տեսական ու կիրառական ասպեկտները, որոնք անքակտելիորեն փոխկապակցված են միմյանց հետ հետևյալ պատճառներով:

Առաջին, պետության ինստիտուտները շոշափող գլոբալացման գործընթացների համատեքստում ազգային իրավական համակարգի զարգացման բնույթի ու միտումների տեսամեթոդաբանական իմաստավորման և դրա գիտական հետազոտության պահանջը հատուկ արդիականություն է ձեռք բերում:

Երկրորդ, նոր հարադրությունների վրա է կառուցվում պետության ու իրավունքի գիտության մեջ իրավական համակարգի բուն ուսումնասիրությունը, որը մեծ նշանակություն ունի իրավական գիտակցությունը ձևավորելու, հասարակության մեջ իրավական պետության սկզբունքներն իրացնելու համար:

Երրորդ, իրավական համակարգի տեսական վերլուծության կիրառական նշանակությունն արդիականանում է նաև համաշխարհային զարգացման այսպիսի էական

գործոնների առկայությամբ, ինչպիսիք են ժամանակակից իրավական համակարգերի փոխգործությունը, դրանց երկխոսությունն ու ընդհանուր մեթոդաբանական հիմքերի վրա փոխընկալման անհրաժեշտությունը:

Այդ հիմնախնդիրների ուսումնասիրման արդիականությունն կարևորում է նաև այն պատճառով, որ անհրաժեշտ է սահմանել ու բացահայտել իրավունքի՝ իբրև ժամանակակից իրավական համակարգի կյանքում մշակույթի տարի բարձրացող դերն ու նշանակությունը, որի նպատակն է ապահովել գլոբալացվող աշխարհի պայմաններում ազգային պետությունների կայունության ու արդյունավետ գործառնության ապահովումը: Հենց այդ հանգամանքներն են պայմանավորել սույն ատենախոսական հետազոտության թեմատիկան: Ըստ հեղինակի մտահաղացման տվյալ աշխատանքի բովանդակությունը կոչված է որոշ չափով կարգավորել հիշյալ հարցադրումները և էմպիրիկ նյութ տրամադրել իրավունքի տեսության և փիլիսոփայության բնագավառներում հետագա պետական-կիրառական աշխատանքների համար:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի գիտական հետազոտության արդիականությունը:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Իրավական համակարգի հիմնահարցերի ուսումնասիրումը արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ ունի բավականին ամուր ավանդույթներ:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ իրավական համակարգի ուսումնասիրությունը հիմնականում<sup>2</sup> և հատուկ հետազոտության օբյեկտ չի հանդիսացել:

Այս առումով, սույն ատենախոսական հետազոտությունը առաջիններից մեկն է հայրենագիտական գրականության մեջ, որում համակողմանի և համակարգված վերլուծության է ենթարկվում ազգային իրավական համակարգի կառուցվածքային տարրերը, և զարգացման հեռանկարները:

Իրավական համակարգերի վերլուծման հիմքը դրել է Հ.Կելզենը դեռ 1946

---

<sup>2</sup> Տե՛ս Սաֆարյան Գ.Հ. Պետության և իրավունքի տեսություն (Ուսումնական ձեռնարկ): Երևան, 1996, էջ 51-56, Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն - 2: Դասախոսություններ: Երևան, 2011, էջ 212-213: Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա.Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, էջ 639-656:

թվականին, իր կարծիքն արտահայտելով իրավական համակարգի էության վերաբերյալ: Զգալիորեն ավելի ուշ նրա մտքերը զարգացրել է Զ. Ռազը, որը շեշտեց իրավական համակարգերի հետազոտման ընթացքում համակարգային մոտեցման անհրաժեշտությունը: Իրավական համակարգի տարբեր առումներին նվիրված են Զ. Հարիսի, Զ.Մ. Ֆիննիսի աշխատությունները:

Իրավական համակարգն ուսումնասիրելիս արտասահմանյան գիտնականներն, առաջին հերթին, շեշտում են «իրավական համակարգ» երևույթի հանդեպ տերմինաբանական հստակության անհրաժեշտությունը: Այս առումով նրանք տարբերակում են՝ 1) իրավական համակարգը, 2) իրավական իրականությունը, 3) իրավական վերնաշենքը և 4) իրավական կարգավորման մեխանիզմը: Արտասահմանյան տեսաբանների, ինչպես նաև իրավունքի տեսության հարցերով զբաղվող ռուս գիտնականների մոտեցումները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի ներկայացուցիչները նույնացնում են իրավունքը և իրավական համակարգը, իսկ երկրորդ խմբի կողմնակիցները հիմնավորում են այդ հասկացությունների հստակ տարբերակման անհրաժեշտությունը: Հետաքրքիր է նաև գերմանացի գիտնականների համեմատաբար վերջերս կատարված փորձը դիտարկել իրավական համակարգը էվոլյուցիայի և քառսի տեսանկյունից:

Հարկ է նշել, որ վերջին երկու տասնամյակներին արտասահմանյան իրավական գիտության մեջ զգալի ուշադրություն է տրվում ոչ թե իրավական համակարգերի տեսական հետազոտումներին, այլ իրավական համակարգերի դասակարգման հիմնահարցերին և այդ դասակարգումների չափանիշներին: Գիտական հետազոտությունների ժամանակակից վեկտորը նկատելի է այն գիտնականների աշխատություններում, որոնք տարբերակում են գոյություն ունեցող իրավական համակարգերը նախեառաջ մշակույթի տեսակետից:

Համեմատական-իրավական շատ հետազոտությունների վերաբերյալ առաջ եկան նաև քննադատական գնահատականներ: Այդ իսկ պատճառով կոմպարատիվիստները ջանքեր են գործադրում իրավական համակարգերի գոյություն ունեցող դասակարգումների կատարելագործման ուղղությամբ: Հատուկ ուշադրության է արժանի իտալացի կոմպարատիվիստ Ու. Մատտեի փորձը վերանայել իրավական

համակարգերի դասակարգում: Բազմամակարդակ դասակարգում է առաջարկում Մ. Անտոկոլսկայան: Իր վերջին աշխատություններում Հ. Կյոտցը մասամբ վերանայել է իր հայացքները և կասկած ու առարկումներ է արտահայտում իրավական շրջանների տեսության նպատակահարմարության վերաբերյալ: Խորհրդային երկրում իրավական համակարգի իբրև ինքնուրույն իրավական կատեգորիայի հետազոտումը սկսվել է 1970-ականների վերջում - 1980-ականների սկզբում, երբ լույս են տեսել Յու.Ա. Տիխոմիրովի, Ս.Ս. Ալեքսենի, Վ. Ն. Կուդրյավցևի, Ն. Ի. Մատուզովի հոդվածները, որոնց մեջ արտահայտված է իրավական համակարգի կարևորությունն ու ինքնուրույնությունը և նշված տվյալ երևույթը հետազոտելու անհրաժեշտությունը: 1985թ. հոկտեմբերի 21-ին Զվենիգորոդում տեղի ունեցավ Համամիութենական գիտատեսական կոնֆերանսը, որը նվիրված է սոցիալիզմի իրավական համակարգի զարգացման միտումներին:

1980-ականների վերջում - 1990-ականների սկզբում հատուկ հետաքրքրություն առաջավ իրավական համակարգի տարբեր ասպեկտների հետազոտության նկատմամբ, որը պահպանվում է մինչ այսօր: Հատկապես հարկավոր է առանձնացնել Վ.Վ. Սորոկինի հետազոտությունը, որը նվիրված է անցումային շրջանի իրավական համակարգին:

Իրավական համակարգի հիմնախնդիրների հետազոտման նկատմամբ հիմնական մոտեցումները և դրանց տեսամեթոդաբանական հիմնախնդիրներն իրենց աշխատություններում դիտարկում են իրավունքի տեսության գիտնականներ՝ Բ.Մ. Աշավսկին, Ա.Ս. Բլինովը, Վ.Պ. Բրանսկին, Է.Գ. Կոչետովը, Մ.Ն. Մարչենկոն, Վ.Ի. Պանտինը, Ս.Դ. Պոժարսկին, Մ.Գ. Պոտապովը, Վ.Վ. Սորոկինը, Ա.Ի. Ուտկինը:

Վերջին տասնամյակներում իրավաբանական գրականության մեջ հայտնվել են մեծ թվով աշխատանքներ, որոնց հեղինակները նախապատվությունը տալիս են գլոբալացման իրավական կողմերի ուսումնասիրմանը: Դրանց թվին կարելի է դասել Ն.Վ. Արխիպովայի, Վ.Շ. Այուպովի, Մ.Գ. Բալյանի, Օ.Ն. Բրատուսեվայի, Ի.Ա. Դոբրինինի, Ի.Ի. Լուկաշուկի, Ե.Ա. Լուկաշևայի, Ե.Գ. Լուկյանովայի, Բ.Վ. Մակոգոնի, Մ.Ն. Մարչենկոյի, Ն.Կ. Նիկիտինայի, Ս.Վ. Պոլենինայի, Յու.Ա. Տիխոմիրովի, Ս.Ա. Շչետինինի, Վ.Մ. Շումիլովի, Վ.Վ. Յակնովի հետազոտությունները:

Սակայն այսօրվա դրությամբ համաշխարհային գլոբալացման գործընթացների իրավական կողմերի լուրջ մենագրական հետազոտություններն այնքան էլ շատ չեն: Արժե նշել, որ ընդհանուր առմամբ հրատարակվող նյութերը վկայում են այն գործընթացների բազմակողմանիության, բազմազանության ու հակասության մասին, որոնց ազդեցության ներքո է տեղի ունենում գլոբալացման պայմաններում ազգային իրավական համակարգի զարգացումը:

Գլոբալացման տարբեր կողմերն ակտիվորեն հետազոտվում են նաև արտասահմանյան գիտնականների կողմից: Առավելապես հեղինակավոր հետազոտությունների թվին կարելի է դասել Մ. Արչերի, Պ. Բերգերի, Գ. Բրյուգմեյերի, Ա. Հիդենսի, Լ.Ժ. Կոնստանտինեսկու, Ռ. Քոթերելայի, Մ. Օդբրոուի, Տ. Ռազեհորնի, Ռ. Ռոբերտսոնի, Բ. Սանտոսի, Լ. Ֆրիդմանի, Ս. Հանթինգտոնի, Հ. Հեյսի աշխատությունները:

Իրավունքի տեսաբանների ջանքերով էական ներդրում է կատարվել իրավական համակարգի՝ իբրև պետության ու իրավունքի ընդհանուր տեսության մասի հիմնավորված տեսության ձևավորման գործում: Առկա են համալիր և դրա հետ միասին բավականաչափ կոնկրետ, համատեսական քաղաքաիրավական հետազոտություններ իրավական համակարգի բնույթի՝ հասարակական հարաբերությունների նոր կարգին անցումային վիճակի պայմաններում:

Միևնույն ժամանակ հարկավոր է նշել իրավական համակարգի հետագա մշակման անհրաժեշտությունը, քանի որ մեկ մենագրական հետազոտության մեջ, անգամ շատ հանգամանալից ու որակյալ, հնարավոր չէ սպառիչ լրիվությամբ լուծել այդչափ բազմակողմանի ու բարդ հիմնախնդիրը: Պետք է ինչպես զուտ գիտական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող այդ երևույթի տարբեր կողմերի հետազոտությունների համալիր:

Կարծում ենք, որ ազգային իրավական համակարգի մասին առկա պատկերացումները գլոբալացման գործընթացների պայմաններում լրիվ չեն արտահայտում գոյություն ունեցող իրողությունը, ինչը պայմանավորում է հետագա հետազոտությունների անհրաժեշտությունը: Չհավակնելով սպառիչ պատասխանի, և դրա հետ մեկտեղ նպատակ ունենալով կոնկրետ ներդրում կատարել իրավական համակարգի ուսումնասիրման գործում, դուրս հանել տվյալ տեսությունն ավելի բարձր ու

հանգամանալից մակարդակ, նպատակահարմար ենք համարում արտահայտել մեր դատողությունները, շարադրել «իրավական համակարգի» կատեգորիայի իմաստավորման սեփական պատկերացումները և մոտեցումները:

**Ատենախոսական հետազոտության օբյեկտ** է հանդիսանում ազգային իրավական համակարգը՝ իբրև ամբողջական ու կառուցվածքային առումով որպես դիֆերենցված երևույթ:

**Որպես հետազոտության առարկա** հանդես է գալիս գլոբալացման պայմաններում ազգային իրավական համակարգի կատարելագործման և զարգացման հիմնական միտումները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Աշխատանքի նպատակը կայանում է ժամանակակից իրավագիտության համար իրավական համակարգի էության ու բովանդակության կարևոր տեսամեթոդաբանական հարցերի հետազոտման գործում, ինչպես նաև ազգային իրավական համակարգերի, մասնավորապես՝ ազգային իրավական համակարգի զարգացման վրա գլոբալացման ազդեցության հետևանքների բացահայտման խնդիրը, այդ հետևանքների գնահատումը իրավական համակարգերի գործառնության և իրենց միջև փոխգործության տեսակետից:

Դրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ **խնդիրները**.

- սահմանել ազգային իրավական համակարգի վերլուծության հիմնական տեսական-մեթոդաբանական սկզբունքները.

- վերլուծել ազգային իրավական համակարգի պատմական զարգացման հիմնական ուղենիշները.

- առանձնացնել ու բնութագրել իրավական համակարգի կառուցվածքային տարրերը, բացահայտել դրանց միջև առկա անմիջական ու միջնորդականացված կապերը.

- ներկայացնել գլոբալացման՝ իբրև համաշխարհային երևույթի ընդհանուր բնութագիրը, որը սահմանում է իրավական համակարգերի զարգացման համար ընդհանուր հանդիսացող բովանդակությունն ու սահմանազատում է այն հարակից երևույթներից ու գործընթացներից.

- հայեցակարգային առումով բնութագրել իրավական գլոբալացման ձևերն ու

եղանակները.

– հետազոտել ազգային իրավական համակարգի զարգացման միտումներն ու հիմնախնդիրները գլոբալացման պայմաններում, վերլուծել այդ գործընթացում արտասահմանյան դրական փորձի հնարավոր օգտագործման հնարավորությունները:

**Հետազոտության մեթոդաբանական հիմունքները:** Որպես իրավական համակարգի՝ իբրև տեսաիրավական կատեգորիայի հետազոտման մեթոդաբանական հիմք օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները: Ընդհանուր գիտական մեթոդ հանդիսացավ համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, որը ենթադրում է իրավական երևույթների ընկալումը դիալեկտիկայի օրենքների և կատեգորիաների տեսակետից:

Հետազոտության արդյունքների վրա ազդած մեթոդների թվում կիրառվել են նաև պատմական, տրամաբանական, համակարգային, համեմատական, ձևական-իրավաբանական, կառուցվածքային գործառնական մեթոդները, իրավաբանական մարդաբանության սկզբունքներն ու մեթոդները, իրավունքի սոցիոլոգիայի, իրավունքի փիլիսոփայության, սիներգետիկայի, ինչպես նաև քաղաքակրթական մոտեցումը:

**Հետազոտության տեսական հիմք** են հանդիսացել գիտական տարբեր ուղղություններին և դպրոցներին պատկանող գիտնականների աշխատությունները: Որպես տեսական աղբյուրներ՝ ատենախոսն օգտագործել է հայրենական և օտարերկրյա գիտնականների՝ Գ.Գ. Հարությունյանի, Գ.Բ. Դանիելյանի, Գ.Ս. Ղազինյան, Գ.Հ. Սաֆարյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Ն.Գ. Ալեքսանդրովի, Ս.Ս. Ալեքսենի, Մ.Ի. Բայտինի, Վ.Դ. Գրաֆսկու, Յու.Ի. Գրեցովի, Ա.Ա. Դոբրովինսկու, Գ.Վ. Զագրյադսկու, Բ.Ս. Կիստյակովսկու, Դ.Ա. Կերիմովի, Ի.Յու. Կոզլիխինի, Է.Վ. Կուզնեցովի, Վ.Վ. Էազարևի, Ռ.Զ. Լիվշիցի, Ե.Ա. Լուկաշևայի, Գ.Վ. Մալցևի, Օ.Վ. Մարտիշինի, Մ.Ն. Մարչենկոյի, Ն.Ի. Մատուգովի, Ա.Գ. Մոսկվինաի, Գ.Ի. Մուրոմցևի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ա.Վ. Պոլյակովի, Ռ.Ա. Ռոմաշովի, Վ.Պ. Սալնիկովի, Վ.Դ. Սորոկինի, Վ.Ի. Սինյուկովի, Լ.Բ. Տիունովայի, Յու.Ա. Տիխոմիրովի, Ի.Ն. Չեստնովի, Վ.Ա. Չետվերնինի, Լ.Ս. Յավիչի, Ռ. Ալեքսիի, Մ. Անջելի, Մ. Անտոկոլսկայայի, Զ. Բալկինի, Դ.Զ. Բեդերմանի, Զ.Լ. Բերգելի, Ն. Բերմանի, Մ. Բոգդանի, Վ.Ա. Բաթերի, Բ. Մարդոզոյի, Լ.Զ. Կոնստանտինեսկոյի, Ռ. Քոթթերելի, Պ. Կոուզի, Ռ. Դավիդի, Բ. Էջվորթի, Կ, Ինգիշի, Ն. Ֆոսթերի, Մ.



Ֆրիդմանի, Մ. Գլենդոնի, Լ. Գլեննոյի, Բ. Գրոսֆելդի, Ռ. Հարլանդի, Ռ. Քյոթզի, Պ. Լանդաուի, Բ. Լեյթերի, Լ. Լիբեսնիի, Ա. Մալմսթյոմի, Բ. Մարկեսինիսի, Ու. Մաթթեի, Զ. Մերրիմանի, Ս. Օսաքվեի, Ա. Ժոզներ Ուչարդի, Ս. Քուիգլի, Ե. Լաբելի, Զ.Լ. Խամուելի, Լ. Շոլլերի, Պ. Սմիթի, Վ. Թվինինգի, Ս. Ուրբինայի, Ռ. Վորների, Ֆ. Վիեքերի, Կ. Զվեյգերթի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության փորձարարական (էմպիրիկ) ու նորմատիվ հիմքն են կազմում** գլոբալացման պայմաններում ժամանակակից իրավական համակարգերի զարգացման ու փոխգործության հիմնախնդիրների գծով հայրենական ու արտասահմանյան հեղինակների տեսական ու գիտակիրառական մշակումները, ՀՀ Սահմանադրությունը (2015թ. փոփոխություններով), գործող օրենսդրությունը այլ նորմատիվ-իրավական ակտերը, սահմանադրական և դատաիրավական հայեցակարգերը:

**Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը** կայանում է ինչպես դիտարկվող հարցերի համալիրի ընտրության ու սահմանման մեջ, այնպես է վերլուծության արդյունքների հիման վրա ձևավորված եզրակացություններում և առաջարկություններում:

Գիտական նորույթը սահմանվում է հիմնախնդրի բուն սահմանմամբ: Հեղինակը համակողմանի վերլուծել է ազգային իրավական համակարգի զարգացումը ժամանակակից իրավական համակարգերի գլոբալացման ու մշակույթների երկխոսության գործընթացների համատեքստում, բացահայտել, թե ինչպիսի նոր օրինաչափություններ է ձեռք բերում ազգային իրավական համակարգը, առաջադրել ու հիմնավորել մի շարք տեսական դրույթներ, որոնք վերաբերվում են ազգային իրավական համակարգի կատարելագործմանը՝ սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

Ատենախոսության նորույթը սահմանվում է նաև հետազոտության խնդիրների լուծման նկատմամբ առաջարկված մոտեցմամբ: Հեղինակը հաջորդաբար կառուցում է գլոբալացման պայմաններում իրավական համակարգերի ընդհանուր ու հատուկ հատկությունների հետազոտման տեսական-մեթոդաբանական հիմքերը, որտեղ իրավաբանական կոմպարատիվիստիկայի մեթոդաբանությունը զուգորդվում է

սոցիոլոգիական ու մշակութաբանական մոտեցումների հետ: Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքում.

- դիտարկվել են հիմնական մոտեցումները գլոբալացման գործընթացների իմաստավորման նկատմամբ, վերլուծվել են դրա ձևերն ու ուղղությունները.

- գլոբալացումը հստակ սահմանազատված է հարակից գործընթացներից ու երևույթներից.

- ձևակերպված է իրավական ու մշակութային գլոբալացման ընկալումը.

- վերլուծվել է իրավական գլոբալացման իրավաբանական բնույթը՝ մշակութաբանական, քաղաքական, սոցիոլոգիական և այլ ուղղությունների հետ փոխադարձ կապի մեջ.

- բացահայտված է ազգային իրավական համակարգի սահմանադրաիրավական փոփոխությունների առանձնահատկությունը՝ գլոբալացման գործընթացների ազդեցության ներքո:

Գիտական նորույթը կայանում է նաև իրավական համակարգի էության համալիր վերլուծության հիման վրա ստացված արդյունքներում իրավական համակարգի բաղադրիչների բացահայտումը, ազգային իրավական համակարգի զարգացման հիմնական միտումները գլոբալացման պայմաններում:

**Հետազոտության գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.**

1. Սիներգետիկայի տեսակետից ազգային իրավական համակարգի հետազոտությունը ցույց է տալիս, որ իրավական համակարգն ունակ է սոցիալական ինքնակազմակերպմանը, որը ենթադրում է որոշակի արդյունք ու միտում:

Ազգային իրավական համակարգի վերլուծությունը ցույց տվեց, որ իրավական համակարգի կատարելագործումն անվերջ է, քանի որ առկա է սոցիալական հակասությունների հաղթահարումը նոր հակասություններ է ծնում, որոնք նորի ազդակ են տալիս զարգացման համար: Փոխբացառող այս միտումները՝ դեպի առավելագույն կայունությունն ու նոր փոփոխականությունը, կարող են համատեղվել միայն առաջացող հակասությունների նվազեցման պայմանով, այսինքն՝ իրենց աստիճանական մեղմացնամ միտման պայմանով:

2. Աշխատանքում հեղինակը հիմնավորում է, որ իրավական համակարգի սահմանային կատարելիությանը մոտ վիճակը տեսականորեն հնարավոր է, սակայն գործնականում հասանելի չէ վերջավոր (տեսանելի) ժամանակահատվածում: Հետևաբար, ազգային իրավական համակարգի՝ հետազոտությունը մշտական ու անհրաժեշտ շարունակական գործընթաց է, քանի որ հարկ է լինում հաղթահարել նորանոր սոցիալական հակասություններ ու ձգտել առավելագույն կայունությանը՝ միջազգային փոխգործության գործընթացների համատեքստում: Հատկապես կարևորվում է իրավական համակարգի կատարելագործման հնարավոր միտումների հետազոտումը գլոբալացման պայմաններում, քանի որ դրանք բազմազան և բազմաշերտ են:

3. Արդի մարտահրավերների մոտեցման տեսակետից «իրավական համակարգ» կատեգորիան կարելի է բնութագրել իբրև հարաբերական կայուն և հարաշարժ համակարգ, որը բնութագրվում է միջավայրի հետ մշտական փոխանակմամբ: Ընդ որում իրավական համակարգն այդպիսի հասկացության մեջ ստեղծում է սեփական սահմաններ շրջակա միջավայրի նկատմամբ ինչպես նաև կազմակերպում, վերարտադրում ու պահպանում իր ինքնությունն ու առանձնահատկությունները՝ սեփական գործողությունների միջոցով:

4. Ազգային իրավական համակարգի զարգացման ու կատարելագործման գործընթացը հարկավոր է դիտարկել նաև իմացաբանական ու արժեքաբանական (աքսիոլոգիական) առումով:

Իմացաբանական առումով՝ իրավական համակարգը բարդ և բազմաշերտ իրավական երևույթների և ինստիտուտների հանրագումար է, որոնք միմյանց հետ շաղկապված են բազմաթիվ կապերով ու փոխազդեցություններով: Այս առումով, իրավական համակարգը երեք հիմնական հատվածների համակարգված ամբողջական միասնություն է՝ հարաբերական կայուն և, միևնույն ժամանակ, հարաշարժ իրավական երևույթների առկայությամբ: Այդ երեք հիմնական հատվածներն են՝ նորմատիվային (իրավական նորմերի, ինստիտուտների, ենթաճյուղերի, ճյուղերի և համալիր ճյուղերի հանրագումար), կազմակերպական (իրավական հաստատությունների և մարմինների հանրագումար) և գաղափարական (իրավական ավադույթների, գաղափարների,

ուսմունքների և հայեցակարգերի հանրագումար): Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ ազգային իրավական համակարգը՝ սոցիալ-իրավական և կազմակերպական-կառուցվածքային համակարգ է, որը ներառում է ազգային իրավական մշակույթի ողջ սպեկտրը՝ իրավունքը, օրենսդրությունը, իրավաբանական պրակտիկան և իրավական գաղափարախոսությունը, ավանդույթը և մշակույթը:

5. Արժեքանության (աքսիոլոգիայի) առումով իրավական համակարգը ձևավորված ազգային մշակույթի անքակտելի մասն է, որում միահյուսվում են պատմականն ու արդիականը, տրամաբանականը և իրավաբանականը: Բացի այդ, արժեքանության տեսանկյունից իրավական համակարգը հասարակական բարիք է, որն իր նորմատիվային արտացոլումն է գտնում սոցիալական արդարության, հասարակության բնականոն գործառնության և իրավասօրինականության ապահովման, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության մեջ:

6. Աշխատանքում հեղինակը առանձնացնելով իրավական համակարգի ձևական ու բովանդակային բաղադրիչները, նշել է, որ հենց ձևական բաղադրիչն առավելապես ենթարկվում է տարբեր տեսակի փոփոխություններին ու կատարելագործմանը, իսկ բովանդակայինը սահմանում է իրավական համակարգի կազմի մեջ մտնող բոլոր ձևական գործընթացների, երևույթների, ինստիտուտների էությունն ու բովանդակությունը:

7. Իրավական մշակույթի՝ իբրև համալիր երևույթի հետազոտման ժամանակ նպատակահարմար է թվում իրավական համակարգի նմանությամբ առանձնացնել իրավական մշակույթի ձևական /նյութական/ բաղադրիչն ու բովանդակային /հոգևոր/ բաղադրիչը:

Ձևական բաղադրիչի տեսակետից իրավական մշակույթը ներառում է իր մեջ ինստիտուցիոնալ ու գործառնական ասպեկտները՝ օբյեկտիվ իրավունքը իբրև իրավական նորմերի ամբողջականություն, որոնք օբյեկտիվ են մարդու կամքի ու գիտակցության նկատմամբ, իրավակիրառ պրակտիկան, իրավական կարգավորման միջոցներն ու մեթոդները, իրավահարաբերությունն ու իրավաչափ վարքագիծը:

8. Իրավական մշակույթի հոգևոր բաղադրիչը կազմված է իրավական արժեք-

ներից, գաղափարներից, համոզմունքներից, իրավագիտակցությունից, իրավական մտածելակերպից, դրդապատճառից ու իրավաչափ վարքագծի ձևերից:

Հենց իրավական մշակույթի հոգևոր բաղադրիչն է հանդիսանում կայուն, ինչպես բուն իրավական մշակույթի, այնպես էլ իրավական համակարգի ինքնավարությունը պայմանավորող հենքը:

9. Սահմանելով իրավական մշակույթի ու իրավական համակարգի հարաբերակցությունը, հարկավոր է նշել դրանց գոյության ու փոխգործության ընդհանուր ու տարբեր ասպեկտները:

Ազգային իրավական համակարգի առանձնահատկությունը պայմանավորվում է գործնականում նույն գործոններով, ինչպես և ընդհանուր առմամբ հասարակության իրավական մշակույթը: Նրանց վրա ազդում են հետևյալ գործոնները.

- գլոբալացման գործընթացները, որոնք կրում են համաքաղաքակրթական բնույթ, որոնց արդյունքն է դառնում մշակույթների երկխոսությունն ու ժամանակակից իրավական համակարգերի փոխգործությունը.

- հատուկ պայմաններ, սահմանող խմբեր, որոնք միավորվում են ըստ ընդհանուր որակավորման հատկանիշների, օրինակ՝ իրավական ընտանիքներ, իրավական մշակույթներ.

- միավորման պայմաններ, որոնք հատուկ են միայն կոնկրետ սոցիո-մշակութային միջավայրին /իրավական մտածելակերպ, պատմական գենեզիս/:

10. Իրավական մշակույթը սահմանվում է տարբեր բնույթ կրող մի շարք գործոններով, որոնք պայմանավորում են կոնկրետ սոցիալական ընդհանրության յուրահատկությունը: Յուրահատկությունը, իր հերթին, սահմանվում է այնպիսի պայմաններով, ինչպիսիք են ազգային մտածելակերպի, իրավագիտակցության առանձնահատկությունը, իրավաընկալման գերիշխող տեսակը, որը պայմանավորված է ազգային իրավական ավանդույթով, իրավաբանական գործունեության մեջ արժեքային առաջնահերթություններով և այլն:

11. Իրավական մշակույթը չի կարող նույնացվել ոչ իրավական համակարգի, ոչ իր որևէ առանձին տարրի հետ: Իրավական համակարգն արտացոլում է իրավաբանական երևույթների համալիրի և միասնական ամբողջականության վիճակը, իսկ իրավական

մշակույթը՝ իրավական իրողության արժեհամակարգը, այս կամ այն իրավական համակարգի անհատականությունը: Այս առումով, իրավական մշակույթն իրենից ներկայացնում է կատեգորիա, որը թույլ է տալիս, մի կողմից, նկարագրել իրավական համակարգի ու իր տարրերի որակական վիճակը, իսկ մյուս կողմից՝ իրավական մշակույթը հանդիսանում է իրավական համակարգի աշխարհայացքային հիմք, հենարան, որը պայմանավորում է վերջինի ինքնավարությունն ու արժեքանությունը:

12. Ազգային իրավական համակարգի ինքնությունը պայմանավորվում է հատկանիշների համակարգի առկայությամբ, որոնք հատուկ կերպով են արտահայտվում մտավոր, իրավական ու գաղափարական մակարդակներում:

Մտավոր մակարդակում ինքնությունն արտահայտվում է լեզվային ու ձևական բնութագրերի միջոցով, ինչպիսիք են հայերեն լեզուն, դրոշը, զինանշանը, օրհներգը:

Իրավական մակարդակն իր մարմնավորումն է գտնում ազգային իրավական համակարգի ինքնատիպության մեջ, որը պայմանավորված է դրա պատմամշակութային զարգացմամբ և գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործոններով:

Գաղափարախոսական մակարդակը բնութագրվում է հատուկ իրավամտաճողական դիրքորոշումների, արժեքների, գնահատականների ու շահերի հատուկ համակարգի առկայությամբ:

**Հետազոտության տեսական և գործնական-կիրառական նշանակությունը:** Ժամանակակից իրավական համակարգերի ու մասնավորապես ազգային իրավական վերլուծությունը գլոբալացման գործընթացների համատեքստում ունի ինչպես տեսական, այնպես գործնական-կիրառական նշանակություն:

**Հետազոտության տեսական նշանակությունը** նրանում է, որ դրանում ձևակերպված տեսական դրույթները և եզրահանգումները զարգանում և լրացնում են պետության և իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի պատմության, համեմատական իրավագիտության առանձին բաժինները: Ստացված արդյունքները կարող են որոշակի ներդրում հանդիսանալ պետության և իրավունքի տեսության հիմնահարցերի մշակման գործում, ինչպես նաև կարող են օգտագործվել «իրավական համակարգ» կատեգորիայի հետագա գիտական վերլուծության համար:

**Հետազոտության գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ դրանում պարունակվող եզրակացություններն ու ընդհանրացումները կարող են օգտագործվել՝

1) գիտահետազոտական գործունեության ընթացքում Հայաստանի իրավական համակարգի արդի վիճակը և զարգացման հեռանկարներն ու միտումները վերլուծելիս,

2) պետական մարմինների պրակտիկ գործունեության մեջ Հայաստանի սահմանադրական և իրավական-դատական համակարգի բարեփոխման զանազան տարբերակներ մշակելիս հաշվի առնելով հետազոտման ժամանակակից գիտական մոտեցումների հիման վրա ստացված եզրահանգումներն ու ընդհանրացումները և ստացված արդյունքները,

3) պետության և իրավունքի տեսության, պետության և իրավունքի պատմության վերաբերյալ դասընթացների, դասախոսությունների, ինչպես նաև սեմինարների և պրակտիկ պարապմունքների կազմակերպման համար,

4) իրավական համակարգի, իրավահասկացման և համեմատական իրավագիտության հիմնախնդիրների վերաբերյալ հատուկ դասընթացների ուսումնառության ընթացքում:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունը:** Ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է սույն աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

**Աշխատանքի կառուցվածքը.** Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, վեց ենթագլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

## ԳԼՈՒԽ 1

# ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

### 1.1. Ազգային իրավական համակարգի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները

Մինչև ազգային իրավական համակարգի առանձնահատկության վերլուծությանն անմիջապես անցնելը ժամանակակից դարաշրջանում, անհրաժեշտ է սահմանել դրա տեսաիրավական վերլուծության հիմնական ելակետային դրույթները:

Եվ առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի հանգամանքին, որի առկայությամբ էլ պայմանավորված է, գլխավորապես, դիտարկվող հարցի լուծման անհրաժեշտությունը. Հայրենական ու արտասահմանյան իրավական տեսության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է իրավական համակարգի ընկալման նկատմամբ մոտեցումների ու սահմանումների բազմազանությամբ<sup>3</sup>:

Սույն ենթագլխում պարունակվող դատողությունները բացարձակապես որպես իրենց առաջնահերթ խնդիր չունեն իրավական համակարգի ու դրա բաղադրիչային կազմի տարբերակների հնարավոր բոլոր սահմանումների ուսումնասիրությունը դրանց լավ կամ վատ կողմերը պարզելու համար, այլ խնդիրը կայանում է նրանում, որպեսզի հետազոտողների ուշադրությունը դարձնեն այն նյութերին, որոնք հատկապես պիտանի են իրավական համակարգի՝ իբրև տեսաիրավական կատեգորիայի, մշակելու փորձն իրականացնելու համար:

Իրավական համակարգը ամենալայն և ամենաբարդ իրավական երևույթ է, որը ներառում է իրավունքի հետ կապված հասարակական հարաբերությունները<sup>4</sup>:

Ազգային իրավական համակարգը սոցիալական համակարգի կարևոր բաղադրիչն է և հասարակական հարաբերությունների կանոնակարգման միջուկը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Վ.Ն. Սինյուկովը «Իրավական համակարգը սոցիալա-

<sup>3</sup> Տե՛ս **Азми Д.М.** Система права и ее строение: методологические подходы и решения. М., 2014;  
**Сорокин В.В.** Концепция эволюционного развития правовой системы в переходный период. Дисс. ... д-ра юрид. наук. Екатеринбург. 2003:

<sup>4</sup> Տե՛ս Проблемы теории государства и права. Под ред. профессора **А.В. Малько**. М., 2012, էջ 187-188:



կան կազմակերպություն է, որը ներառում է ազգային իրավական մշակույթի հիմնական բաղադրիչները՝ իրավունքը, օրենսդրությունը, իրավաբանական պրակտիկան, ինչպես նաև երկրում գերիշխող իրավական գաղափարախոսությունը (դոկտրինը)»<sup>5</sup>:

Իրավական համակարգը բարդ ու բազմաշերտ իրավական երևույթների և հաստատությունների հանրագումար է, որոնք միմյանց հեա շաղկապված են բազմաթիվ կապերով ու փոխազդեցություններով: Այս առումով, իրավական համակարգն իրենից ներկայացնում է երեք հիմնական հատվածների համակարգված ամբողջական միասնություն: Երեք հիմնական հատվածներն են՝ նորմատիվ (իրավական նորմերի, ինստիտուտների և ճյուղերի հանրագումար) կազմակերպական (իրավական հաստատությունների հանրագումար) և գաղափարական (իրավական գաղափարների, հայացքների, ուսմունքների, հայեցակարգերի, ավանդույթների հանրագումար):

Ընդհանրապես, իրավունքին բնութագրական է համակարգվածությունը, որպես իրավական նյութերի ինստիտուտների, ճյուղերի, աղբյուրների և այլ իրավական երևույթների հետևողականության, համաձայնության, ստորադասվածության, փոխկապակցվածության միասնական ամբողջականություն: Իրավունքն առանց համակարգվածության, չի կարող կատարել իր սոցիալական առաքելությունը, այսինքն հանդիսանալ հասարակական հարաբերությունների համապարփակ նորմատիվ կարգավորիչ և ապահովել հասարակության բնականոն զարգացումը, անձի ազատությունը, անվտանգությունը հասարակության համապարփակ քաղաքական կազմակերպության (պետության) բնականոն գործառնությունների ապահովումը:

Իրավական համակարգի հասկացությունը հեղինակների մեծամասնության մոտ ծառայում է իբրև կազմակերպող իմաստային սկզբունք՝ որոշակի պետության շրջանակներում իրավական գործառնության իրողություններն իմաստավորելու համար: Ընդ որում որոշ հեղինակներ փորձ են անում տալ իրավական համակարգի սահմանումը, մյուսներն էլ պարզապես օգտվում են այդ հասկացությունից՝ առանց բացատրելու այդ երևույթի հեղինակային տեսողությունը, երրորդները ձգտում են առաջարկել նոր եզրեր, որոնք կարող են, իրենց կարծիքով, փոխարինել «իրավական համակարգ»

---

<sup>5</sup> **Синюков В.Н.** Российская правовая система. Введения в общую теорию. 2-е изд., доп. М., 2010, с.8-9.

հասկացությունը: Խոսքը գնում է այնպիսի եզրերի մասին, ինչպիսիք են «իրավական կյանքը», «իրավական իրողությունը», «իրավական ոլորտը» և այլն:

Օրինակ, իրավաբանական գրականության մեջ առաջարկություն էր արվել դիտարկել իրավական համակարգը իբրև «սահմանային լայն» կատեգորիա, իսկ «իրավական կյանքը»՝ իբրև մի երևույթ, որը ոչ պակաս հարուստ է իր բովանդակությամբ, քան հասարակության «քաղաքական» ու «մշակութային» կյանքը<sup>6</sup>: Սակայն, մեր կարծիքով, այդպիսի տեսակետը թույլ չի տալիս բավականաչափ կոնկրետ կողմնորոշվել իրավական համակարգի կառույցի հասկացության հետ: Բանը նրանում է, որ իրավունքի տեսության մեջ առկա են նաև այլ կատեգորիաներ, որոնք հիմնովին կարելի է դասել սահմանային լայների թվին՝ «իրավական վերակառույց», «պետական ու հասարակական կյանքի իրավական հիմք»: Վերջին ժամանակներում դրանց է գումարվել «իրավական հասարակություն» հասկացությունը<sup>7</sup>: Այդ հասկացությունների բովանդակությունը բավականաչափ հստակ սահմանված չէ:

Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում վերլուծել իրավական համակարգի ձևական բնութագրերը, բացահայտել դրա տարրական կազմը, սահմանել դրանց միջև կապերի ու փոխհարաբերությունների բնույթը, բացահայտել իրավական համակարգի ու դրա գոյության համատեքստի միջև հետադարձ կապերը:

Միայն այդպիսի մոտեցման ժամանակ, մեր կարծիքով, հնարավոր է պարզություն մտցնել ուսումնասիրվող առարկայի մեջ և հասկանալ դրա զարգացման հետագա միտումները:

Ժամանակակից ժամանակաշրջանի իրավունքի գիտության մեջ գոյություն ունեն իրավական համակարգի սահմանման նկատմամբ բազմաթիվ մոտեցումներ: Իրենց ողջ բազմազանությունը կարելի է բերել երկու մոտեցումների՝ նեղ ու լայն: Նեղ մոտեցման ժամանակ իրավական համակարգը հանգեցվում է օբյեկտիվ իրավունքին: Այդպես, օրինակ, Յու.Ա. Տիխոմիրովը համարում է, որ «իրավական համակարգ» հասկացությունն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների վրա ամբողջական իրավական ազդեցության կառուցվածքային-ինտեգրված եղանակ:

<sup>6</sup> См. **Малахов В.П.** Право в контексте форм общественного сознания. Принцип правопонимания. М., 2015, էջ 83-84:

<sup>7</sup> См. **Матузов Н.В., Ушанова Н.В.** Возможность и действительность в Российской правовой системе. М., 2013, էջ 26-27:

Որպես իրավական համակարգի տարրեր այն առանձնացնում է իրավական կարգավորման նպատակներն ու սկզբունքները, իրավական ակտերի ու դրանց միավորման հիմնական տարատեսակները, համակարգաստեղծ կապերը, որոնք ապահովում են բոլոր տարրերի փոխգործությունն ու համակարգի ամբողջականությունը: Ա.Ս. Ալեքսենն իրավական համակարգի այդպիսի մեկնաբանումն անվանեց «բավականաչափ նեղ», նշելով, որ համակարգաստեղծ կապերը չի կարելի համարել իրավական համակարգի տարր, ավելի շուտ դա վերջինի հատկություն է<sup>8</sup>:

Իրավունքի սահմանման նկատմամբ հստակ մոտեցումն առավելապես ակնհայտ է դիտվում Ն.Ի. Մազուտովի դիրքորոշման մեջ: Նա իրավական համակարգը դիտարկում է իբրև բարդ հավաքական ու բազմակողմանի հասկացություն, որն արտացոլում է հասարակության իրավաբանական երևույթների ողջ ամբողջությունը: Իրավական համակարգի հասկացության մեջ Ն.Ի. Մազուտովը ներառում է այնպիսի տարրերը, ինչպիսիք են. «իրավունքը /պետության կողմից ստեղծվող ու պահպանվող նորմերի ամբողջություն/, օրենսդրությունն ու այլ նորմատիվ ակտերը, պետության իրավական քաղաքականությունը, դատական և այլ իրավաբանական փորձն իրականացնող իրավական հաստատությունները, իրավական կարգավորման մեխանիզմը, իրավաիրացման գործընթացը, սուբյեկտիվ իրավունքը, իրավական հարաբերությունները, օրինականությունն ու իրավակարգը, իրավական գաղափարախոսությունը, իրավունքի սուբյեկտներին, համակարգաստեղծ կապերը, իրավական այլ երևույթները»<sup>9</sup>:

Իրավունքի տեսաբանների ժամանակակից աշխատություններում<sup>10</sup> տրվում են իրավական համակարգի ընդհանուր առմամբ նմանատիպ սահմանումները, որոնք տառապում են վերացարկվածությամբ ու լայնությամբ: Այդպես, օրինակ, մի շարք հեղինակներ իրավական համակարգը սահմանում են իբրև գերհամակարգ<sup>11</sup>, ուրիշները նշում են, որ «իրավական համակարգը բավականաչափ բարդ բազմակողմանի

<sup>8</sup> **Тихомиров Ю.А.** Правовая система развитого социализма // Советское государство и право 1979. N 7. С. 33; **Алексеев С.С.** Общая теория права. М., 1981. Т. 1. С. 90.

<sup>9</sup> **Матузов Н.И.** Правовая система развитого социализма // Советское государство и право 1983. N 1. С. 18-19; Տե՛ս **Матузов Н.И.** Правовая система и личность. Саратов, 1987. С. 26.

<sup>10</sup> **Марченко М.Н.** Тенденции развития права в современном мире. М., 2015, 376 с.

<sup>11</sup> **Федорченко А.А.** Правовая система // Теория государства и права / Под ред. **М.М. Рассолова.** М., 2004. С. 349-355.

գոյացություն է»<sup>12</sup>:

Հանդիպում են նաև իրավական համակարգի ավելի ծավալուն սահմանումները «իբրև ներքուստ համաձայնեցված, փոխկապակցված, սոցիալապես միասեռ իրավաբանական միջոցների /երևույթների/ ամբողջություններ, որոնց օգնությամբ հրապարակային իշխանությունը կարգադրիչ-կազմակերպող ու կայունացնող ազդեցություն է գործում հասարակական հարաբերությունների, մարդկանց ու իրենց միավորումների վարքագծի վրա...»<sup>13</sup>:

Վ.Յա. Լյուբաշիցի, Ա.Յու. Մորդովցևի, Ի.Վ. Տիմոշենկոյի տեսակետից իրավական համակարգը կարելի է սահմանել իբրև «իրավական երևույթների մի ամբողջական համալիր, որը պայմանավորված է կոնկրետ հասարակության զարգացման առանձնահատկությամբ, սոցիալական ու քաղաքական հեղափոխության բազմապիսի գործոններով /օբյեկտիվ ու սուբյեկտիվ, օրինաչափ ու պատահական/, որը գիտակցված ու մշտապես վերարտադրվում է մարդկանց ու կազմակերպությունների կողմից /պետության, ոչ պետական քաղաքական ու ոչ քաղաքական կազմակերպությունների/, օգտագործվում է իրենց կողմից որոշակի նպատակներին հասնելու համար»<sup>14</sup>:

Յավոք, հարկ է լինում նշել «իրավունքի համակարգ» ու «իրավական համակարգ» հասկացությունների անհաղթահարելի շփոթումը: Չնայած նրան, որ հետազոտողները վերջին տարիների ընթացքում ընդգծում ու համոզիչ կերպով ապացուցում են այդ երկու հասկացությունների նույնացման անթույլատրելիությունը և ժամանակակից իրավաբանական գրականության մեջ կարելի է հակառակը հանդիպել: Օրինակ, 2009 թ.-ին լույս տեսած «Պետության և իրավունքի տեսության արդիական հիմնախնդիրները» ուսումնական ձեռնարկում պրոֆ. Ի.Ա. Իվաննիկովը նշում է. «Այն պատճառով, որ «գումարելիների տեղափոխումից գումարը չի փոխվում», «իրավական համակարգը» և «իրավունքի համակարգը»՝ նույնական հասկացություններ են, որոնք բնու-

<sup>12</sup> **Иванников И.А.** Актуальные проблемы теории государства и права. М., 2009. С. 281; **Рассолов М.М., В.П. Малахов, А.А. Иванов.** Актуальные проблемы теории государства и права. М., 2010. С. 237.

<sup>13</sup> Теория государства и права / Под ред. **Н.И. Матузова и А.В. Малько.** М., 2013. С. 179-180.

<sup>14</sup> **Любащиз В.Я., Мордовцев А.Ю., Тимошенко И.В.** Теория государства и права. Ростов н/Д., 2014. С.160-161.

թագրում են իրավունքը համակարգային ասպեկտում»<sup>15</sup>:

Իսկ 2010 թ. ուսումնական ձեռնարկում հեղինակները չեն դադարում ընդգծելուց նշված եզրերի հստակ տարբերակման անհրաժեշտությունը<sup>16</sup>:

Իրավական համակարգին՝ իբրև տեսաիրավական կատեգորիային նվիրված աշխատությունների ընդհանուր շարքից իրենց վրա ուշադրություն են դարձնում Վ.Վ. Սորոկինի<sup>17</sup> հանգամանալից աշխատությունները, որոնց մեջ, ըստ էության, հեղինակը վերարտադրում և ընդհանրացնում է իրավունքի ժամանակակից տեսաբանների դիրքերը՝ իրավական համակարգի ու դրա տարրական կազմի հասկացության վերաբերյալ: Բացի այդ, հեղինակը մտցնում է այնպիսի հասկացություն, ինչպիսին է կայուն իրավական համակարգն ու անցումային շրջանի իրավական համակարգը և անում իրավական համակարգի մանրամասն վերլուծություն՝ հաշվի առնելով համակարգային վերլուծությունը, ինչի արդյունքում գալիս է այն եզրակացությանը, որ «Իրավական համակարգը՝ իրավական երևույթների ու գործընթացների ամբողջական համալիր է /դրական իրավունք, իրավագոյացում, իրավունքի իրացում, իրավագիտակցություն/, որը ձևավորվում է իրենց փոխադարձ կապի ու փոխադարձ գործողության արդյունքում և բնութագրում հասարակական կյանքի վրա կատարվող իրավաբանական ազդեցությունը»<sup>18</sup>:

Ընդհանուր առմամբ դրականորեն գնահատելով հեղինակի գիտական աշխատությունը, արդարության համար անհրաժեշտ է նշել, որ նա չի կարող վերջակետ դնել իրավական համակարգի հասկացության ու բովանդակության մասին երկխոսություններում: Մեր կարծիքով, անհրաժեշտ է իրավական համակարգի դիտարկման նկատմամբ նոր մոտեցում, որը հաշվի է առնում դրա գոյության ժամանակակից համատեքստն ու դիտարկվող համակարգի իրավաբանական հետազոտության նոր մեթոդները:

Ատենախոսին այդպես է թվում իրավական համակարգի հասկացության նկատմամբ իրավունքի հայրենական տեսաբանների ժամանակակից դիրքերի ակնարկը:

<sup>15</sup> **Иванников И.А.** Նշվ. աշխ., էջ 281.

<sup>16</sup> **Рассолов М.М., В.П. Малахов, А.А.Иванов.** Նշվ. աշխ., էջ 236-237.

<sup>17</sup> **Сорокин В.В.** Юридическая глобалистика. В 2-х тт. М., 2010; Նույնի՝ Общее учение о государстве и праве переходного периода. М., 2010.

<sup>18</sup> **Сорокин В.В.** Общее учение о государстве и праве переходного периода. С. 150.

Իրավական համակարգի հասկացության բերված վերլուծությունը ցույց տվեց, որ իրավական համակարգի՝ իբրև բարդ բազմամակարդակ գոյացության հասկացության ու բովանդակության ուսումնասիրության ոլորտում գոյություն ունեցող մակարդակը չի կարելի ճանաչել այն կիրառական խնդիրներին համապատասխանող, որոնք ժամանակակից գիտության առջև է դնում գլոբալացման դարաշրջանը: Իրավական համակարգի ուսումնասիրման ոլորտում, հազվադեպ բացառությամբ, գրեթե չկան հիմքային մշակումներ, հիմնական հասկացությունների բովանդակությունը միայն նշված է եզրաբանությունը՝ հակասական: Այդ կապակցությամբ կարող է օգտակար լինել արտասահմանյան հետազոտողների կողմից նշված երևույթի ուսումնասիրության փորձը:

Առաջին հերթին, անհրաժեշտ է նշել, որ արևմտյան գիտնականները, ընդգծելով եզրաբանական հստակության անհրաժեշտությունը, տարբերակում են՝ իրավական համակարգը, իրավական իրողությունը, իրավական վերակառույցը, իրավական կարգավորման մեխանիզմը:

«Իրավական համակարգ» հասկացությանը դիմում են «իրավաբանական երևույթների ողջ համալիրն ընդգրկելու համար: Տվյալ հասարակության իրավաբանական բոլոր երևույթները, որոնք միևնույն ժամանակ գոյություն ունեն միևնույն տարածության մեջ, փոխկապակցված են ընդհանրության հարաբերություններով, որոնք էլ միավորում են դրանք համակարգի մեջ», - գրում է իրավունքի ֆրանսիացի սոցիոլոգ Ժան Կարբոնյեն<sup>19</sup>:

Գնահատելով ընդհանուր առմամբ «իրավական համակարգ» եզրը ֆրանսիացի կոմպարատիվիստ Ռայմոն Լեժեն նշում է, որ տվյալ եզրն օգտագործվում է «ներառյալ, որպեսզի սահմանի իրավական այն հարցերի լուծումն ապահովող իրավական նորմերի ամբողջականությունը, որոնց հետ կարող է բախվել հասարակությունը»<sup>20</sup>: Ընդ որում, բացատրում է հեղինակը, իրավական համակարգ է հաճախակի անվանվում այն իրավունքը, որը կիրառվում է որոշակի պետության մեջ: «Սակայն իրավական համակարգի ու որոշակի պետության իրավունքի հասկացությունները նույնական չեն,

<sup>19</sup> Карбонье Ж. Юридическая социология. М., 1986. С. 197.

<sup>20</sup> Леже Р. Великие правовые системы современности: сравнительно-правовой подход / пер. с фр. Грядов А.В. М., 2009. С. 1.

քանի որ մեկ պետության շրջանակներում կարող են համագոյակցել մի քանի իրավական համակարգ, այն ժամանակ, երբ մեկ իրավական համակարգը կարող է կիրառվել մի քանի պետականների կողմից»<sup>21</sup>:

Ժ.Լ. Բերժեյի կարծիքով, յուրաքանչյուր իրավական համակարգ իր կանոնների սահմաններում նպատակ է հետապնդում տարածել բոլոր մարդկանց վրա այն պաշտպանությունը, որն իրենք պահանջում են: Դրան հասնելու համար այն պետք է թույլ տա յուրաքանչյուր մարդուն պատկերացում ունենալ այն կանոնների մասին, որոնց նա ենթարկվելու է: Դա ենթադրում է կանոնների ու համակարգի ներքին հաջորդականության բավարար կայունություն, որը հիմնված է տարրերի միջև հարաբերությունների որոշակի կազմակերպման վրա, որոնք կազմում են այն այնպես, որ յուրաքանչյուր տարր կախված է մյուսից<sup>22</sup>:

Մեծ Բրիտանիայի իրավական տեսության մեջ բացակայում է իրավական համակարգի կայացած հասկացություն: Ըստ էության, «իրավական համակարգ» հասկացությունը հանգեցնում են «իրավունք» կամ «իրավունքի համակարգ» հասկացությանը<sup>23</sup>: Դրա հետ մեկտեղ, այդ եզրը «ծառայում է կազմակերպիչ իմաստային սկզբունք Մեծ Բրիտանիայի պետականության շրջանակներում գործառնության իրողություններն իմաստավորելու համար»<sup>24</sup>:

Անգլիացի հետազոտող Մ.Պ. Հոլդինգն իրավական համակարգի հասկացության մեջ ներառում է իրավունքը, իրավաստեղծագործությունն ու իրավակիրառությունը: Զ. Թերները համարում է, որ իրավական համակարգերը բաղկացած են չորս հիմնական տարրերից՝ իրավունքի համակարգից, իրավաստեղծագործությունից, վեճերի կամ դատարանների լուծման գործընթացից ու իրավակիրառական հաստատություններից<sup>25</sup>:

Օտարերկրյա տեսաբանների մոտեցումները, այդ թվում իրավունքի ժամանակակից ռուսաստանյան տեսության մեջ կարելի է բաժանել երկու խմբերի: Առաջին խմբի ներկայացուցիչները նույնացնում են իրավունքն ու իրավական համակարգը<sup>26</sup>,

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> **Bergel J.L.** Theorie generate du droit. 3<sup>rd</sup> ed. Dalloz, 1999. P. 252.

<sup>23</sup> **Романов А.К.** Право и правовая система Великобритании. М., 2010. С. 53-54.

<sup>24</sup> **Романов А.К.** Նշվ. աշխ., էջ 53:

<sup>25</sup> Տե՛ս. **Golding M.P.** Philosophy of Law. New Jersey, 1975. P. 2; See also: The Sociology of Law: A Social-Structural Perspectives / Ed. by **W.P. Evans**. N. Y., 1980. P. 377.

<sup>26</sup> Տվյալ մոտեցումն են պատկերում հետևյալ աշխատությունները. **Aumann F.R.** The Changing American

երկրորդի ներկայացուցիչները հիմնավորում են այդ հասկացությունների հստակ տարանջատման անհրաժեշտությունը: Օրինակ, Գ. Մակ-Կորմակը գրում է, որ իրավական համակարգը՝ դա երկու իմաստ ունեցող հասկացություն է: Այն կարող է օգտագործվել իրավականների հատկություն ունեցող նորմերի ամբողջականությունը նկարագրելու համար: Այդ իմաստով տվյալ հասկացությունը չի տարբերվում իրավունքի հասկացությունից: Սակայն ավելի ճշգրիտ իմաստով այն արտացոլում է այն երևույթի գոյությունը, որը հատուկ է բոլոր նորմերին, ընդգրկում է իրավունքի նորմերի ամբողջականությունը և որոշակի հատկություն ունենալու իրանց կարողությունը, որը թույլ է տալիս դիտարկել դրանք որպես համակարգ<sup>27</sup>:

Կ.Ռ. Նյուտոնը միավորում է իրավական համակարգի հասկացության մեջ 12 տարր, ընդ որում ինքը՝ իրավունքը դրա մեջ չի մտնում: Հայտնի պատճառներով իրավունքի հնդկական տեսաբանները ևս կողմնակից են հիմնականում անգլիացի գործընկերների դիրքերին, ներառելով իրավական համակարգի մեջ իրավական երևույթների բավականաչափ ընդարձակ ցանկը<sup>28</sup>:

Իրավունքի ամերիկյան տեսության մեջ իրավական համակարգի կազմի մեջ են ներառվում «կառույցներ, ինստիտուտներ ու գործընթացներ, որոնք կյանք են ներշնչում նորմերի մեջ»<sup>29</sup>: Այդ հասկացության մեջ առկա են նաև «նորմեր իրավասության, դատական ընթացակարգերի, դատարանների, դատավորների, նահանգների օրենսդիր մարմիններում ընտրելու կարգի ու պայմանների և այլն»: Իրավական համակարգն առանձնացնում է նաև կառույցի առկայությունը, որը «բաղկացած է հետևյալ կարգի տարրերից՝ դատարանների քանակ ու իրավասություն, իրենց իրավասականությունը, բողոքարկելու եղանակները: Կառույցը սահմանում է նաև լեգիսլատուրների կազմակերպումն ու կառուցվածքը, քանի անդամից է բաղկացած Դաշնային աշխատանքային հանձնաժողովը, ինչպիսի գործողություններ կարող է

---

Legal System. N.Y., 1969. P. 261; **Hurst J.W.** Law and Social Process in United States History. N.Y., 1972. P. 361; **Wayson A.** The nature of Law. Edinberg, 1977. P. 51; Danish Law: A General Survey / Ed. by **H. Gameltoff-Hansen**. Denmark, 1982. P. 5; **Levenbrok B.** The Sustained Dworkin // The University of Chicago Law Review. 1986. Vol. 53. N 3. P. 118.

<sup>27</sup> Տե՛ս. **Mac-Cormack G.** “Law” and “Legal system” // The Modern Law Review. 1979. Vol. 42. N. 3. P. 285.

<sup>28</sup> **Newton C.R.** General Principles of Law. L, 1977. P. 28-30; The Indian Legal System / Ed. by **J. Minatur**. Bombay, 1978.

<sup>29</sup> **Фридман Л.** Введение в американское право. М., 1992. С. 8-9.



/օրինական կերպով/ կատարել նախագահը, որոնք՝ ոչ, ինչպիսի ընթացակարգերին պետք է հետևի ոստիկանության կառավարությունը և այլն: Այսպիսով, կառույցը՝ համակարգի հատվածքի տեսակ է /վայրկենական լուսանկարի տեսքով/, որը սառեցնում է գործողությունները: Իրավական համակարգի հաջորդ կողմը դրա էությունն է, որը բաղկացած է համակարգի ներսում մարդկանց վարքագծի գործող կանոններից, նորմերից ու նմուշներից, այսինքն՝ նրա, ինչը, ըստ էության, կոչվում է իրավունք, ինչպես նաև այլ նորմերը, որոնք կարգավորում են սոցիալական հարաբերությունները: Վերջապես, իրավական համակարգի վերջին տարրն է իրավական մշակույթը»<sup>30</sup>:

Լ. Ֆրիդմանի գործընկերն ավելի ուշ աշխատության մեջ հայտնեց միտքն այն մասին, որ իրավական համակարգ եզրը կիրառվում է միայն այն նպատակով, որպեսզի մատնանշի տարբեր ժողովուրդների իրավունքի համակարգի պատմաիրավական ու էթնոմշակութային տարբերությունները<sup>31</sup>: Ընդ որում երևում է, որ հեղինակը շփոթում է իրավունքի համակարգ ու իրավական համակարգ հասկացությունները:

Իրավական համակարգի ու դրա կազմի հասկացության նկատմամբ տեսակետների համեմատական բնութագիրը վկայում են ընդհանուր առմամբ գիտության համար այդ հասկացության արդիականության և այդ հասկացության որոշակի կոսմոպոլիտիկ բնույթի մասին:

Դրա հետ մեկտեղ, այդ ոլորտում աջակցող տեսաիրավական մշակումները՝ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտության մեջ, մեկ անգամ ևս համոզում են մեզ «իրավական համակարգ» երևույթի զարգացման հետագա փուլի անհրաժեշտության մեջ՝ հաշվի առնելով նոր իրողությունները:

Պահպանելով լայն, սակայն ողջամիտ մոտեցում իրավական համակարգի նկատմամբ, կարևոր է ուշադրություն դարձնել տվյալ կատեգորիայի՝ իբրև համակարգային երևույթի արժեքի վրա: Հենց դա կօգնի հասկանալ իրավական համակարգի բազմաթիվ, երբեմն հակասական սահմանումները: Իրավունքի ժամանակակից գիտության մեջ այսօրվա դրությամբ գոյություն ունի համակարգի՝ իբրև ավելի ընդհանուր կատեգորիայի ընկալման որոշակի միասնություն:

<sup>30</sup> Տե՛ս **Фридман Л.** Введение в американское право. М., 1992. էջ 8-9:

<sup>31</sup> **Weidlich W.** Stability and Cyclicity in Law System. N.Y., 1995. P. 241.

«Համակարգ» ու «համակարգային մոտեցում» եզրերը սկսել են օգտագործվել գիտնականների կողմից 1940-ական թվականներից<sup>32</sup>: Լյուդվիգ Ֆոն Բերտալանֆիի բաց համակարգերի հայեցակարգն ու համակարգերի ընդհանուր տեսությունը համակարգային մոտեցումը դուրս են հանել առանցքային գիտական ուղղության կարգին<sup>33</sup>:

Տարբեր ժամանակաշրջաններում առաջին պլան է դուրս գալիս իր բովանդակության այս կամ այն կողմը: XX դ.-ում համակարգային մեթոդը ձևավորվել է իբրև համագիտական մեթոդաբանություն, որը կողմնորոշված է ամբողջականության սկզբունքի վրա հիմնվող ուսումնասիրության օբյեկտի նկատմամբ հատուկ մոտեցման վրա: Սահմանված էր, որ գոյություն ունեն համակարգերի գոյության ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Այդ մեթոդաբանության շրջանակներում հետազոտության օբյեկտը դիտարկվում է իբրև համակարգային, որն ունի համակարգերի տվյալ տեսակին հատուկ որոշակի հատկություններով: Դա ենթադրում է օբյեկտի սահմանների հստակ սահմանում, թույլ է տալիս առանձնացնել այն արտաքին միջավայրից, տարանջատել ներքին ու արտաքին կապերը, բացահայտել իրենց համակարգաստեղծ բնույթը, սահմանել օբյեկտի կենսագործունեության, դինամիկայի մեխանիզմները:

Համակարգային մեթոդն իր մեջ է ներառում լայն հասկացողական ապարատ: «Համակարգ» հասկացությունը՝ հիմնային է տվյալ մեթոդաբանության մեջ: Այն իր մեջ է միավորում դրա բոլոր էական կողմերը, սկզբունքներն ու գլխավոր հատկանիշները:

Գիտության մեջ առաջարկված համակարգի ու համակարգային սկզբունքների վերլուծության հիման վրա<sup>34</sup> հնարավոր է թվում ձևակերպել հետևյալ սկզբնական

<sup>32</sup> Գիտության մեջ համակարգայնության սկզբունքը կապված է **Կանտի** ու **Հեգելի** անունների հետ և ի հայտ է եկել XVIII դ.-ում: Օրինակ, **Հեգելն** իրեն պատկերացնում էր ճշմարտությունը համակարգի տեսքով, «ճշմարիտ ձև, որում գոյություն ունի գիտական ճշմարտությունը, կարող է լինել միայն գիտական համակարգը»: Տե՛ս **Гегель**. Собр. соч. Т. 4. М.; Л., 1934. էջ 3:

<sup>33</sup> **Bertalanffy L.** General System Theory. N.Y., 1973.

<sup>34</sup> «Համակարգ ենք կոչելու որոշակի ձևով կարգավորված միմյանց հետ փոխկապակցված ու որոշակի ամբողջական միասնություն կազմող տարրերի բազմազանությունը» /**Садовский В.Н.** Методологические проблемы исследования объектов, представляющих собой системы // Социология в СССР. М., 1965. Т. 1. С. 173): **Պ.Մ. Դոլուխանովը** համարում է, որ «համակարգի տակ հասկացվում է տարրերի որոշակի ոչ օրգանական միասնություն, ընդ որում այդ ամբողջականության առավելագույն կարևոր են հանդիսանում համակարգաստեղծ կապերի առկայությունը /ուղիղ ու հետադարձ/, էներգիայի ու տեղեկատվական հոսքերի շրջանառությունը: Առանց այդ հատկությունների չի կարելի խոսել համակարգի գոյության մասին»: **Մ.Ս. Կազանը** չի համաձայնվում իր կարծիքի հետ և խոսում այն մասին, որ տեղեկատվության կամ էներգիայի շրջանառությունն ու հետադարձ կապը հատուկ են միայն համակարգերի որոշ

սահմանումը, համակարգը՝ դա որոշակի կերպով կարգավորված տարրերի բազմություն է, որոնք կազմում են որակապես նոր ամբողջական միասնություն<sup>35</sup>:

Համակարգի այս սահմանման մեջ են պարունակվում առանցքային երկու պահ. համակարգը բազմություն է. համակարգը միասնություն է:

Համակարգի սուբստրատը՝ այսինքն, այն, ինչից այն բաղկացած է, իրենից ներկայացնում է որոշակի բազնություն, դիսկրետ տարրերի համալիր: Սակայն համակարգի նյութը դա դեռ ինքը համակարգը չէ: Տարրերի ողջ համալիրին հատուկ են որոշակի միասնական, ամբողջական բնութագրերը: Ընդ որում համակարգի տարրերի բազմազանությունն ու դրա ինտեգրատիվ որակը՝ համակարգերի երկու իրավահավասար ու հավասարաչափ անհրաժեշտ ատրիբուտներ են, համակարգայնության երկու անքակտելի կողմեր:

Համակարգը ճանաչելու կամ ստեղծելու համար անհրաժեշտ են նաև իր մասերի ու իր ամբողջականության միջև, տվյալ բազմության ու իր միասնականության միջև անհրաժեշտ կապի բացահայտումը կամ իրացումը: Այդ կապն իրենից ներկայացնում է համակարգ կառուցելու եղանակ, իսկ ավելի խիստ եզրերով՝ համակարգաստեղծ հարաբերություն, համապատասխանելիություն, որը տրված է համակարգի տվյալ բազմության և այլ՝ միավոր, բազմության միջև:

Հարկավոր է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր նշում են, որ համակարգայնությունն ունի գոյաբանական ու իմացաբանական կողմեր, ուստի «համակարգ» հասկացությունը միաժամանակ արտահայտում է ինչպես բուն օբյեկտը, որն ունի կազմակերպման որոշակի բարդություն, այնպես էլ համակարգային վերլուծության արդյունքը, բնութագրելով օբյեկտի այն ինտեգրված ամբողջական վիճակը, որը ստանում է հետազոտողը՝ ամբողջից դեպի տարրեր բարձրանալիս, հետագայում՝

---

տեսականորեն, սակայն ոչ մի կերպ չեն կարող ծառայել համակարգի որպես այդպիսին որոշիչ հատկանիշներ: St'u Дискуссии // Типы в культуре / Отв. ред. Л.С. Клейн. Л., 1979. էջ 152, 162:

<sup>35</sup> Համակարգն առանձին մասերի համակարգված ընդհանրություն կամ միավորում է: Կարող է նշանակել ինչպես աշխարհի, բնության, կենդանի էակների, հասքերի իրական ենթադրվող հերթական կապը, այնպես էլ միայն իդեալական /թվերի, արժեքների համակարգ/ հասկացական տրամաբանական կապը: Իրական գիտություններում /իրական աշխարհի մասին գիտություններում/ տարբերակում են արհեստական ու բնական համակարգերը, /համապատասխանաբար՝ դասակարգումները/, որոնք կամ հիմնվում են առաձնացված առանձին հատկանիշների վրա /փոշի, գույների ծագումը Կ. Լինեի բույսերի համակարգում/, կամ ընդգրկում է բոլոր էական հատկանիշները: Արհեստական համակարգն ավելի հեշտությամբ կարող է կիրառություն գտնել, սակայն հանդիսանում է բնական համակարգերի միայն սկզբնական աստիճանը:

տարրերից դեպի համակարգ<sup>36</sup>:

Այսպիսով, իրավական համակարգի հասկացության մեջ կարծես թե ընդհանուր միասնության մեջ են միավորված իրավունքի իմացաբանությունն ու գոյաբանությունը, դրա մեթոդն ու առարկան, իրավունքում օբյեկտիվն ու սուբյեկտիվը:

Սակայն գլխավորը նրանում է, որ տվյալ հասկացությունը կոչված է արտացոլել իրավական ամբողջականության իրական կառուցվածքայնությունը: Իրավական համակարգի հասկացությունը թույլ է տալիս դուրս գալ իրավունքի՝ իբրև նորմերի ամբողջականության շրջանակներից, որոնք սահմանված ու պաշտպանվում են պետության կողմից, բացահայտել իրավական կարգավորման ամբողջական մեխանիզմը, որն իր մեջ է պարունակում ոչ միայն օրենսդրական նորմերը, այլև գիտակցված իրավական իրականության ոլորտն ու իրավունքների ու պարտականությունների իրացման գծով գործունեությունը: Իրավունքի իրական կապերը թույլ են տալիս դիտարկել այն իբրև համակարգ՝ անկախ նրանից, թե որքանով ենք մենք ճանաչել դրանք<sup>37</sup>:

Գիտության մեթոդները, և իրավագիտությունը բացառություն չէ, պայմանավորված են պատմական ու սոցիոմշակութային համատեքստով<sup>38</sup>: Իրենք կանխորոշված են տվյալ դարաշրջանում կոնկրետ մշակույթ-քաղաքակրթության մեջ տիրող աշխարհայացքով: Կառուցվածքային առումով մշակույթի ունիվերսալությունները կարելի է պատկերացնել աշխարհի ու դրանում մարդու տեղի մասին տիրող պատկերացումների տեսքով: Հենց վերջիններն են տալիս աշխարհի համապատասխան պատկերն ու դրա ընկալման ու ինտեգրման առանձնահատկությունը<sup>39</sup>:

Իրավական համակարգի գոյության ժամանակակից փուլի համար բնորոշ է երկխոսությունը, որը պայմանավորված է մշակութային համատեքստով, ուստի մեզ համար ժամանակակից իրավական իրողության հետազոտման առավելապես համա-

---

<sup>36</sup> **Корчевский Д.С.** Современная правовая система Российской Федерации (теоретический анализ): Дис. ... канд. юр. наук. М., 2000. С. 12.

<sup>37</sup> **Корчевский Д.С.** Современная правовая система С. 12.

<sup>38</sup> Մանրամասն տե՛ս **Спирidonov Л.И.** Теория государства и права. СПб., 1995; **Степин В.С.** От классической к постклассической науке (изменение оснований и ценностных ориентаций) // Ценностные аспекты развития науки. М., 1990:

<sup>39</sup> Տե՛ս. մանրամասն. **Честное И.Л.** Методология и методика юридического исследования. Краснодар, 2010. էջ 27-40:

պատասխան մեթոդներ են լինելու սիներգետիկ ու մարդաբանական-իրավաբանական մոտեցումները:

Այսօր արդեն ոչ ոք չի բացառի այն փաստը, որ իրավական համակարգն իրենից հենց համակարգ է ներկայացնում, ընդ որում՝ բարդ համակարգ: Շարունակելով վերլուծել այն որպես այդպիսին սիներգետիկ մոտեցման տեսակետից, իրավական համակարգը կարելի է բնութագրել իբրև դիսիպատիվ մի համակարգ, որը բնորոշվում է համակարգի հետ մշտական փոխարինմամբ: Ընդ որում իրավական համակարգն այդպիսի ընկալման մեջ ստեղծում է սեփական սահմաններ շրջակա միջավայրի վերաբերյալ, կազմակերպում, վերարտադրում ու պահպանում է այլ հնարավորությունների համար հնարավորություններն ու պայմանները սեփական գործողությունների միջոցով:

Այդ կողմից իրավական համակարգի հետազոտումը թույլ է տալիս նոր կողմից հասկանալ ու վերլուծել և արտաքին, և ներքին գործոնները, որոնք նպաստում են իրավական համակարգի զարգացման ու կատարելագործման ընթացքում ինչպես հաջողություններին, այնպես էլ անհաջողություններին:

Իրավական համակարգի զարգացումը՝ իբրև դիսիպատիվ<sup>40</sup> հանդիսանում է իրավունքով սահմանված կարգուկանոնի սինթեզի աստիճանի աճ, և կենսագործունեության իրական պայմանների քառս՝ վերցրած համաշխարհային համատեքստում: Ընդ որում այդ պայմանավորված է իրավական համակարգի, կրկին, իբրև դիսիպատիվ համակարգի առավելագույն կայունությանը:

Լիովին օրինաչափ է առաջանում հետևյալ հարցը՝ արդյո՞ք իրավական համակարգի կողմից հնարավոր է սահմանային, կատարյալ վիճակի նվաճումը, այդպես կոչված՝ ատրակտորը, որի ժամանակ իրավական համակարգը գոյություն է ունենալու իբրև դիսիպատիվ կառույց, որը կայուն է արտաքին միջավայրի ցանկացած ձևափոխությունների նկատմամբ, իսկ գլոբալացման համատեքստում այդ կայունությունը պետք է բացատրվի միասնական ստանդարտով բոլոր իրավական համակարգերի համար: Այլ կերպ ասած, արդյո՞ք հնարավոր է իրավական համա-

<sup>40</sup> Դիսիպատիվ համակարգը բաց, միջավայրի հետ մշտապես նյութով ու էներգիայով փոխանակվող համակարգ է, անհավասարակշիռ /բնութագրվում է անկայուն ներքին կառուցվածքով/ և ոչ գծային /ունակ է ինքնակազմակերպմանը/ համակարգ:

կարգի գլոբալ սահմանային վիճակը, և, հետևաբար, այն կազմող բոլոր բաղադրիչների համար:

Իսկ եթե գոյություն ունի այդպիսի ատրակտոր իրավական համակարգի համար, արդյո՞ք, այն կարող է լինել միասնական ու կիրառելի բոլոր ազգային պետությունների համար:

Իրավական համակարգի դիտարկումը սիներգետիկայի տեսակետից ենթադրում է, որ իրավական համակարգն ունակ է սոցիալական ինքնակազմակերպմանը, որը ենթադրում է որոշակի արդյունք ու միտում: Այդ կապակցությամբ կարելի է թույլ տալ այն վարկածը, որին համաձայն ինքնակազմակերպման միտում է հանդիսանում որոշակի գլոբալ էգրեգորին ուղղված շարժումը:

Սոցիալական ինքնակազմակերպման տեսությունը ենթադրում է ոչ միայն բի-ֆուրկացիոն կառույցների սոցիալական ընտրությունը, այլև գերընտրությունը, որը և դարձնում է գլոբալ ատրակտորի գոյությունը ոչ միայն հնարավոր, այլև՝ անհրաժեշտ: Չէ որ գերընտրությունը ենթադրում է կայունության բուն սկզբունքի կատարելագործումը, որի հիման վրա է կատարվում սովորական ընտրությունը:

Իսկ այդպիսի սահման, ըստ երևույթին, պետք է դառնա մարդկության մշակութային զարգացման սահմանը, որը ենթադրում է տեխնիկական ու գեղարվեստական զարգացման սահմանը:

Սիներգետիկայի տեսակետից, մի կողմից, պետք է գոյություն ունենա մարդկության մշակութային զարգացման սահմանը, և համապատասխանաբար իրավական համակարգի զարգացման ու կատարելագործման սահմանը, իսկ մյուս կողմից՝ դեպի այդ սահմանը տանող շարժումը պետք է անվերջ լինի: Այլ կերպ ասած, սահմանին մոտենալու համար, անհրաժեշտ է հաղթահարել որոշակի սոցիալական հակասությունները, որոնց հաղթահարումը ենթադրում է նորերի ստեղծումը<sup>41</sup>: Սակայն

---

<sup>41</sup> Այդպես, հակասությունների լուծման ընթացքում ձևավորվում են իրավական համակարգի զարգացման օրինաչափությունները: Որպես հիմնական օրինաչափություններից մեկը կարելի է ճանաչել իրավական համակարգում բնաիրավական ու պետաիրավական սկզբունքների աստիճանական ու հերթական մերձեցումը, որը տեղի է ունենում համամարդկային մշակույթի աճի չափով, բարոյահումանիստական հասարակական կատարելակերպերի իրացման չափով: Այդ օրինաչափության առկայությունը կապված է իրավունքի՝ իբրև ազատության, սոցիալական արդարության երաշխիքի չափի բնութագրերի հետ: Դրա իրացումը կախված է այնպիսի փոխկապակցված ու փոխգործող միտումների իրականացումից, ինչպիսիք են համաժողովրդական կամքի իրավունքում արտահայտվածության

գոյություն ունեցող գերընտրությունը, որը թույլ է տալիս օգտակար փորձ քաղել նախկին հակասությունների հաղթահարումից, սահմանում է նոր առաջացող հակասությունների նվազեցման միտումը: Այդ միտման շնորհիվ հնարավորություն է առաջանում որքան հնարավոր է մոտենալ նպատակին, չհասնելով այն կոնկրետ ժամանակահատվածում լրիվ երբեք, քանի որ այն իրեն մոտենալու չափով դառնում է միշտ հեռացող կատարելակերպ:

Դեպի իրավական համակարգի ամբողջական և անթերի կայունացման շարժումն անվերջ է, քանի որ հին սոցիալական հակասությունների հաղթահարումը ստեղծում է նոր հակասություններ, որոնք նոր ազդակ են տալիս զարգացմանը: Փոխբացառող այս միտումները՝ ձգտում դեպի առավելագույն կայունություն և նոր փոփոխականությունը, կարող են շեղվել միայն առաջացած հակասությունների նվազեցման պայմանով, այսինքն՝ իրենց աստիճանական մեղմացնան միտման ժամանակ:

Այդպիսով, կարելի է եզրակացնել այն մասին, որ իրավական համակարգի սահմանային վիճակը տեսականորեն հնարավոր է, սակայն գործնականում վերջնական ժամանակի հատվածում հասանելի չէ: Հետևաբար, իրավական համակարգի՝ իբրև միասնական և հարաշարժ համակարգի հետազոտումը մշտական գործընթաց է, քանի որ հարկ է լինում հաղթահարել նորանոր սոցիալական հակասություններ ու ձգտել առավելագույն կայունությանը՝ միջազգային փոխգործության գործընթացների համատեքստում: Հատկապես կարևոր է իրավական համակարգի, գլոբալացման պայմաններում դրա կատարելագործման հնարավոր միտումների հետազոտումը, քանի որ դրանք բազմազանությամբ են հագեցնում իրավական համակարգի՝ արտաքին միջավայրի հետ փոխգործության տարբերակները և նշմարում

---

աստիճանի բարձրացումը և կյանքի մեջ դրա իրագործումը, իրավունքի սուբյեկտների վարքում ու գործունեության մեջ. իրավական կարգավորման դերի ուժեղացումը, իրավական կարգավորման մեջ ծանրության կենտրոնի տեղափոխումն արգելիչ միջոցներից՝ թույլատրված միջոցներին: Տվյալ օրինաչափությունը կրում է համապատմական բնույթ, սակայն, արտահայտվում է ոչ հավասար չափով տարբեր հասարակական համակարգերում ու դրանց զարգացման տարբեր փուլերին: Իրավական համակարգի զարգացման մեկ այլ օրինաչափություն է հանդիսանում իրավական երևույթների՝ փաստացի հասարակական հարաբերություններին համապատասխանելու պահանջը: Տվյալ օրինաչափությունը նույնպես բազմակողմանի է, իր մեջ է ներառում իրավունքի նորմերում հասարակական պահանջների արտացոլման աղեկավարության հիմնախնդիրները, օրենսդրության, իրավական կարգավորման ժամանակին փոխելը: Այն գործում է ոչ թե առանձին, այլ անցնում է պատահականությունների ու շեղումների միջոցով, պահանջում է մարդկանց ակտիվ մասնակցություն: Դրա իրացման համար անհրաժեշտ է հատուկ կազմակերպչաիրավական մեխանիզմ:

են իրավական համակարգի զարգացման հետագա միտումները:

Իրավական համակարգն իբրև միասնական և հարաշարժ (կայունության մեջ) համակարգ հետազոտելու ժամանակ սկզբնական կետը պետք է դառնա այն փաստի ընկալումը, որ իրավական համակարգը բնութագրվում է մշտական ինքնակերտմամբ, որն իրականացվում է հաղորդակցության ընթացքում: Դրանում չպետք է լինի ի սկզբանե սահմանված որոշակի միասնություն և հիերարխիկություն: Համակարգային վերլուծության, սիներգետիկայի ու փիլիսոփայության ոլորտում գիտական մտքով կուտակված փորձն ու գիտելիքները բեկանելով իրավական համակարգին, հարկավոր է նշել, որ իրավական համակարգի խնդիրը երևում է մինչև նվազագույնը նվազեցված հնարավորություններով գերհագեցած ժամանակակից աշխարհի բարդությունը տարբեր տեսակի հակամարտությունների լուծման միջոցով<sup>42</sup>:

Սակայն հաշվարկի սկզբնակետի համար անհրաժեշտ է որոշել իրավական համակարգի հասկացությունն ու դրա տարրական կազմը, այնուհետև առանձնացնել դրա այն տարրերը, որոնք ենթարկվում են առավելագույն ազդեցությանը, վերափոխմանը և փոխգործությանը շրջակա համատեքստի հետ գլոբալացման գործընթացների պայմաններում:

Մեր կարծիքով փոխված սոցիոմշակութային, քաղաքական, իրավական իրողությունները ձևավորում են իրավական համակարգի սահմանման անհրաժեշտությունը, հաշվի առնելով ազգային, միջազգային ու օտարերկրյա բաղադրիչը:

«Իրավական համակարգ» հասկացության հստակ գիտական ձևակերպումն անհրաժեշտ է տեսական մակարդակի վրա, քանի որ տվյալ կատեգորիան օգտագործվում է նաև ճյուղային գիտությունների ներկայացուցիչների կողմից, իսկ դրա լրգվսսծությունն ու սահմանման նկատմամբ մոտեցումների ոչ միանշանակությունը ծնում է բանավեճեր տարբեր գիտություններում, որոնցից կարելի էր խուսափել փոքրագույն ծախսերով, ավելի արդյունավետ կերպով լուծել կոնկրետ ճյուղային հիմնախնդիրները: Օրինակ, իրավաբանների շարքում մինչ օրս բացակայում է միասնական ու հստակ պատկերացում ներպետական իրավական համակարգում միջազգային իրավական նորմերի տեղի ու դերի մասին: Վ.Վ. Գավրիլովի կարծիքով,

---

<sup>42</sup> См'у **Шамаров В.М.** Актуальные проблемы современной русский теории права. М., 2015, էջ 38-39:



այդպիսի իրադրությունը ոչ վերջին հերթին է հիմնված «իրավական համակարգ» հասկացության ու բովանդակության տարբեր մեկնաբանման վրա<sup>43</sup>: Այդ նույն փաստի վրա է իր աշխատանքներում նշում նաև Ա.Յու. Մարոչկինը<sup>44</sup>:

Իրավունքի տեսաբանները, սահմանելով իրավական համակարգի հասկացությունն ու տարրական կազմը, օգտվում են միայն ներպետական իրավունքից, նորմայի գծից այն կողմ թողելով միջազգային իրավունքը: Միջազգային իրավաբանները, մշակելով միջազգային, միջպետական համակարգի հայեցակարգը, հակառակը, բացառում են դրանից ներպետական իրավունքի նորմերը:

Գլոբալացման ուժեղացող գործընթացների համատեքստում ատենախոսին նպատակահարմար է թվում հասնել ողջամիտ փոխզիջմանը իրավական համակարգի հասկացության ու տարրական կազմի ձևակերպման ժամանակ՝ հաշվի առնելով և ազգային, և միջազգային բաղադրիչները<sup>45</sup>:

Այս առումով հտնեմ ենք, որ միջազգային ու ներպետական իրավունքի իրականացումն այնքան փոխկապակցված է, որ իրենք ունակ չեն գոյություն ունենալ առանց միմյանց: Իրենք հակասական են, սակայն դա դիալեկտիկական հակասություն է, որը հիմնված է հակադարձ կողմերի ներքին միասնության, իրենց փոխադարձ անցումների վրա: Դա որոշ իմաստով միջազգայինի ու ազգայինի, ընդհանուրի ու առանձնահատուկի միասնություն է, որոնք չեն կարող գոյություն ունենալ առանց միմյանց ու փոխհարստացնում են միմյանց:

Միայն աշխատությունների քիչ քանակում, մասնավորապես՝ Ս.Վ. Չեռնիչենկոյի ու Ա.Յու. Միրոչկինի, և միայն դրվածքային առումով, կարելի էր հանդիպել պնդումն այն մասին, որ ազգային ու միջազգային իրավական համակարգերի հասկացությունը համատեղել են միմյանց հետ և պետք է ընդգրկել ոչ միայն իրավունքը, այլև՝ իրավաձևավորումը, իրավաիրականացումը և կյանքի այլ իրավական կողմերը<sup>46</sup>:

---

<sup>43</sup> **Гаврилов В.В.** Развитие концепции правовой системы в отечественной доктрине права: общетеоретический и международно-правовой подходы // Журнал российского права. 2004. №1. С. 76-87.

<sup>44</sup> **Марочкин С.Ю.** Действие норм международного права в правовой системе Российской Федерации. Тюмень, 1998. С. 6-11.

<sup>45</sup> **Марченко М.Н.** Проблемы общей теории государства и права (Право). 2-е изд., Том 2, М., 2015. с. 36-37.

<sup>46</sup> **Гаврилов В.В.** Международная и национальные правовые системы: Понятие и основные направления

Հետագայում այս թեման իր ատենախոսության մեջ զարգացրեց Վ.Վ. Գավրիլովը, գալով եզրակացությանն այն մասին, որ «միջազգային ու միջպետական իրավունքն իրենցից ներկայացնում են երկու տարբեր կարգի, սակայն սերտորեն փոխգործող միմյանց հետ համակարգային կառույցներ»<sup>47</sup>:

Դրա հետ մեկտեղ, իրավական համակարգը՝ հաշվի առնելով միջազգային ազդեցություն չի կարելի լիովին հաղթահարել: Այս պատճառով, հաշվի առնելով կատարված վերլուծությունը, հնարավոր է թվում ձևակերպել իրավական համակարգի հետևյալ հասկացությունը, իհարկե, չհավակնելով դրա լիությանն ու բազմակողմանիությանը:

Իրավական համակարգը՝ միասնական, ամբողջական, հարաբերական կայուն և միաժամանակյա հարաշարժ համակարգ է, որը ձևակերպվում է ազգային, օտարերկրյա ու միջազգային իրավական բնույթի իրավական երևույթներից ու գործընթացներից, որի բովանդակությունն են կազմում ինչպես իրավական երևույթների ու գործընթացների փոխադարձ կապերը, այնպես էլ իրավունքի օրինաչափ կարպերը արտահրավական երևույթների հետ, որոնք մեկնաբանվում են իրավագիտության կատեգորիաներով, և սեփական կարգավորիչ ազդեցություն են գործում արտաքին միջավայրի վրա:

Իրավական համակարգի՝ իբրև տեսաիրավական կատեգորիայի տարբեր հասկացությունն իր հետևից բերում է դրա կառուցվածքային բաղադրիչների ընկալման նկատմամբ տարբեր մոտեցումների առաջացումը:

Վերջին տասնամյակներում վեճերը հիմնականում վարվում են արդեն ոչ թե իրավական համակարգի հասկացության մասին, այլ դրա բաղադրիչային բովանդակության մասին, ինչը նպատակահարմար է թվում, քանի որ տարրական կազմի դուրս հանումը «իրավական համակարգ» հասկացությունը տեսաիրավական հարթությունից տեղափոխում է գիտակիրառական հարթություն:

Իրավական համակարգի տարրական բովանդակությունը բնութագրելիս, սովորաբար առանձնացնում են բաղադրիչների տարբեր հավաքածուներ: Պրոֆեսոր Ս.Ս. Ալեքսևը նշում է, որ տվյալ կառուցվածքի տարրերը հանդես են գալիս

---

взаимодействия: Автореф. дис... д-ра юрид. наук. Казань, 2006, С. 13.

<sup>47</sup> **Гаврилов В.В.** Международная и национальные правовые системы. С. 8-9.

հայացքների, հարաբերությունների, հիմնարկությունների, վիճակների, ինստիտուտների, ռեժիմների, գործընթացների, կարգավիճակների տեսքով<sup>48</sup>:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Վ.Ն. Սինյուկովի կողմից ձեռնարկված<sup>49</sup> «իրավաբանական երևույթների սոցիո-մշակութային, պատմական ու հատուկ իրավական մոտեցումների միացումը»: Սակայն դժվար է ճիշտ ճանաչել դրա վրա հիմնված եզրակացությունները, որոնց համաձայն հեղինակը, նրա հետ մեկտեղ, ինչն արտահայտվել էր այլ գիտնականների կողմից իրավական համակարգի կառույցի մասին, դասում է դրա բաղկացուցիչ մասերի թվին նաև բազմաթիվ այլ տարրերը<sup>50</sup>:

Չի կարելի չհամաձայնվել Դ.Ս. Կորչևսկու կարծիքի հետ, ով, գնահատելով Վ.Ն. Սինյուկովի դիրքորոշումը, նշեց. «Իրականում իրավական համակարգի տվյալ տարրական կառուցվածքային տեսողությունը ստեղծում է դրա մասին հիպերտրոֆիկ ընդարձակված պատկերացում, բերում է զուտ իրավական երևույթների խառնմանը պատմաքաղաքական, սոցիալ-մշակութային, ազգային-հոգևոր ու այլերի միջև, պետության ու հասարակության կյանքում իրավաբանականի ու ոչ իրավաբանականի միջև սահմանների ջնջմանը: Ահա թե ինչու, ընդհանրապես չիրաժարվելով դիտարկվող հիմնախնդրի վերլուծության պատմամշակութաբանական ուղղությունից, անհրաժեշտ է թվում ավելի զգուշորեն օգտվել տվյալ մոտեցումից, հստակեցնել դրա վրա հիմնված իրավական համակարգի ու դրա տարրական բովանդակության առարկան ու սահմանները, դրա կառուցվածքային տարրերի սահմանման օբյեկտիվ չափանիշները, հիմնական ուշադրությունը կենտրոնացնել հենց իրավաբանական, այլ ոչ թե սոցիալական երևույթների հետազոտության վրա»<sup>51</sup>:

<sup>48</sup> См. у **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, էջ 84-85:

<sup>49</sup> **Синюков В.Н.** Российская правовая система (вопросы теории): Автореф. дис. ... д-ра юрид. наук. Саратов, 1995. С. 5.

<sup>50</sup> Օրինակ, իրավաբանական, այդ թվում նաև իրավապաշտպան հիմնարկությունների ու կազմակերպությունների կառույցը. տարածաշրջանային ու տեղական իրավական ենթակառուցվածքը, վերահսկողական ու հսկողական ենթահամակարգը, իրավախախտումների կանխարգելման համակարգն ու սոցիալական հսկողությունը, իրավական իրազեկման ու իրավական հաղորդագրությունների համակարգը, իրավախախտողների իրավաբանական վերականգնման կազմակերպումը, մարդու իրավունքների ապահովման ենթակառուցվածքը. իրավաբանական կրթության համակարգը, հաստիքների վերապատրաստման ու որակավորման բարձրացման համակարգը, իրավական գաղափարախոսության գենեզիսի, վերարտադրության ու պահպանման «ուղեղային կենտրոնները» /ԳՀԻ, կենտրոններ, հիմնադրամներ, իրավաբանների մշակութային ընկերակցություններ և այլն/: См. у **Синюков В.Н.** Российская правовая система. էջ 164-165:

<sup>51</sup> **Корчевский Д.С.** Современная правовая система Российской Федерации (теоретический анализ):

Չնայած մոտեցումների բազմազանությանը, տարբեր հեղինակները որպես իրավական մշակույթի պարտադիր բաղադրամասեր առավել հաճախ անվանում են. 1/ իրավունքը՝ իբրև իրավունքի բոլոր աղբյուրների ամբողջություն. 2/ իրավաբանական փորձը, 3/ իրավաբանական հաստատությունները. 4/ իրավագիտակցությունը, 5/ իրավական մշակույթը:

Վերջին ժամանակներում բանավեճ է ծավալվել իրավական համակարգի տարրերի կազմում իրավաբանական փորձի իրավական մշակույթի շուրջ: Այդպես, օրինակ, Ա.Ա. Ֆյոդորչենկոն<sup>52</sup>, Ի.Ա. Իվաննիկովը<sup>53</sup> իրավական փորձը ներառում են տարրական կազմի մեջ, իսկ Վ.Վ. Սորոկինը տեղ չի գտնում իրավաբանական փորձի համար հետազոտվող կատեգորիայի կազմում, «քանի որ այդ հասկացությամբ է նվաճվում ընդհանրացման բավականաչափ լայն մակարդակ՝ դրա ծավալի մեջ մի քանի բաղադրիչների՝ մասնավորապես, իրավագոյացման ու իրավունքի իրացման հաշվին»<sup>54</sup>:

Մի շարք հեղինակներ, որոնց կարծիքի հետ կարելի էր համաձայնվել միայն մասամբ, չեն համարում իրավական համակարգի առանձին բաղադրիչ նաև իրավական մշակույթը<sup>55</sup>:

Անցկացնելով իրավական համակարգի ու դրա բովանդակության ուսումնասիրության որոշ եզրակացությունները, մեր կարծիքով, հարկավոր է համաձայնել Ա.Ա. Մարկովա-Մուրաշովա պրոֆեսորի կարծիքի հետ, ով ենթադրում է, որ անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ իրավական համակարգը հետազոտելիս միշտ առաջանում է անհատական փորձի՝ իրավական համակարգի մասին ընդհանուր գիտելիքի հասարակայնորեն ճանաչված բովանդակության նկատմամբ հարաբերության հետ կապված: Այն հասկացությունը, թե ինչ է իրավական համակարգը, պետք է ձևավորվի, առաջինը, այն կազմող տարրերի հասկացությունից, իսկ, երկրորդը, այդ տարրերի

---

Дисс... канд. юр. наук. М., 2000. С. 25-26.

<sup>52</sup> **Федорченко А.А.** Правовая система // Теория государства и права / Под ред. **М.М. Рассолова**. М., 2004. С. 349-355.

<sup>53</sup> **Иванников И.А.** Актуальные проблемы теории государства и права. С. 281.

<sup>54</sup> **Сорокин В.В.** Общее учение о государстве и праве переходного периода. М., 2010. С. 135.

<sup>55</sup> Նույն տեղում էջ 135-136; Նաև՝ **Братусева О.Н.** Правовые культуры в условиях глобализации: дис... канд. юрид. наук. М., 2009. էջ 15-18:

միջև ընդհանուր կապերի ընկալումից<sup>56</sup>:

Ենթադրվում է, որ սահմանելով, թե ինչպիսի կառուցվածքային տարրերից է բաղկացած իրավական համակարգն ու դրա արդյունավետ հետազոտման համար, անհրաժեշտ է ի նկատի առնել երկու կարևոր պահ:

Առաջինը, անհրաժեշտ է տարբերակել իրավական համակարգի ձևական ու բովանդակային բաղկացուցիչները:

Ձևական կողմից, դիտարկվող տեսաիրավական կատեգորիան բաղկացած է նորմատիվ կողմից /իրավունքից, և ընդհանրապես հասարակության նորմատիվ կառուցվածքից, որն արտահայտված է դրականորեն/ ու ինստիտուցիոնալ կողմից /իրավաստեղծագործության ու իրավաիրացման գործընթացների իրավական կարգավորում/, իսկ բովանդակային մասն իր մեջ է պարունակում աքսիոլոգիական կողմը /իրավական մշակույթ, իրավաընկալում, իրավագիտակցություն, իրավական մտածելակերպ և այլն/ և պատմական կողմը /իրավական համակարգի գենեզիս/:

Իսկ երկրորդը, քանի որ սոցիալական իրողությունը չի հանգեցվում միայն դեպի իր օբյեկտիվ բաղադրիչը, իրավական համակարգի զարգացման ու կատարելագործման գործընթացը հարկավոր է դիտարկել ոչ միայն գոյաբանական, այլև իմացաբանական ու աքսիոլոգիական մակարդակում: Այս ուղղությամբ հետազոտումն անխուսափելիորեն բերում է համընդհանուր նշանակություն ունեցող կատարելակերպերի ու իրենց կողմից սահմանված արժեքների հետազոտմանը:

Ի նկատի առնելով տվյալ հանգամանքը, իրավական համակարգի գենեզիսը վերլուծելիս հարկավոր է ուշադրություն դարձնել կոնկրետ հասարակությանը բնորոշ հոգևոր-մշակութային արժեքներին, մտածելակերպի ու վարքագծի տիպիկ կերպարին, բարոյակրոնական դրվածքներին, որոնք հատուկ են ժողովրդին: Իմանենտ այդ հատկությունները չի կարելի հաշվի չառնել, քանի որ իրավական համակարգի բովանդակությունը պայմանավորված է պատմական ու սոցիոմշակութային համատեքստով: Այդ պատճառով հնարավոր չէ արհեստականորեն ձևավորել իրավական համակարգը կոնկրետ հասարակության ու պետության համար:

Առանձնացնելով իրավական համակարգի ձևական ու բովանդակային բաղադ-

<sup>56</sup> **Маркова-Мурашова С.А.** Современные правовые системы: тенденции интеграции и дифференциации. Краснодар, 2005. էջ 78 և այլն:

րամասերը, անհրաժեշտ է նկատել, որ հենց ձևական բաղադրամասը մեծապես ենթարկվում է տարբեր տեսակի փոփոխությունների ու կատարելագործմանը, իսկ բովանդակայինը սահմանում է բոլոր ձևական գործընթացների, երևույթների, իրավական համակարգի կազմի մեջ մտնող ինստիտուտների էությունն ու բնույթը:

Իրավական մշակույթը հանդիսանում է իրավական համակարգի բովանդակային տարրի հիմքը, որը պայմանավորում է վերջինի ողջ բնույթը:

Մեր օրերը շեշտերը շեղվում են իրավական համակարգը կազմող տարրերի ու վերջինների նշանակության նկատմամբ: Չնայած գլոբալացման գործընթացներին, մշակութային տարբերությունները շարունակում են սահմանիչ ազդեցություն գործել հետազոտվող կատեգորիայի ու դրա բովանդակության վրա: Այդպես, օրինակ, մեր կարծիքով, ժամանակակից պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում այնպիսի երևույթը, ինչպիսին է իրավական մշակույթը, հենց դա է սահմանում իրավական համակարգի բնույթն ու ոճը և լցնում այն համապատասխան ինքնությամբ, թույլ է տալիս պահպանել սեփական յուրահատկությունն ու ինքնատիպությունը ժամանակակից այլ իրավական համակարգերի շարքում: Պատահական չէ, այդ պատճառով աշխարհի ժամանակակից իրավական քարտեզը պատկերացնում են ոչ թե իբրև իրավական համակարգերի դասակարգում, այլ իբրև իրավական մշակույթների դասակարգում<sup>57</sup>:

## **1.2. Ազգային իրավական համակարգի պատմական զարգացման հիմնական ուղենիշները**

Իրավական համակարգի, դրա գործառնության օրինաչափությունների, պատմական և տեսաիրավական վերլուծությունը հիմք է հանդիսանում գլոբալացման պայմաններում ժամանակակից իրավական համակարգերի հետագա զարգացման ու փոխգործության առանձնահատկությունների և հեռանկարների պարզաբանման համար: Հենց այդ պատճառով ազգային իրավական համակարգի հետազոտությունը

---

<sup>57</sup> **Зорькин В.Д.** Право в условиях глобальных перемен. М., 2013, с. 374-375; **Марченко М.Н.** Государство и права в условиях глобализации и теория. М., 2015, с. 28-29; **Rasehorn T.** Kulturlose Rechtssystemkultur oder gesellschaftsbezogene RECHTSKULTUR? // ZfRSoz. 1986.S. 61-66; **Heiss H.** Hierarchische Rechtskreiseinteilung Titelzustz: Von der Rechtskreislehre zur Typologie der RECHTSKULTUREN? // ZVglRWiss. 2001.100. S. 396-424.

սկսվում է նրա պատմական զարգացման հիմնախնդրիների պարզաբանումից:

Հին և միջնադարյան հայ իրավունքը զարգացել է երկու հիմնական՝ պետական (աշխարհիկ) և եկեղեցական (կանոնական) իրավական համակարգերով:

Ինչպես իրավագիտորեն նշում է Ա. Վաղարշյանը. «Իրավունքը որպես հասարակական երևույթ Հայաստանում ծագել և զարգացել է պետության և իրավունքի առաջացման ընդհանուր օրինաչափություններին համապատասխան: Սակայն հայկական իրավական համակարգի զարգացման վրա էական ազդեցություն է թողել Հայաստանում պետականության ծագման և զարգացման պատմական առանձնահատկությունները, ազգային, կրոնական, արտաքին քաղաքական և այլ գործոնները»<sup>58</sup>:

Աշխարհիկ իրավական համակարգը հին և միջնադարյան Հայաստանում զարգացել է սովորության իրավունքի նորմերի և թագավորական հրովարտակաների ձևով: Ինչպես նշում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Ղազինյանը. «Մինչև IV դարը Հայաստանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը գոյատևում էր իբրև սովորության համակարգը, որը հայ իրականության առանձնահատկությունների շնորհիվ համառորեն հարատևում էր: Միաեթնիկությունը նպաստում էր սովորույթների, որպես համընդհանուր կարգավորիչ աղբյուրի ու ձևի կարգավորիչ աղբյուրի ու ձևի կարգավորիչ դերի բարեհաջող կատարմանը»<sup>59</sup>:

Նախնադարյան-համայնական հասարակության զարգացման վերջին փուլում ձևավորվել և գործել են սովորության իրավունքի նորմերը՝ ծխական, կրոնական սովորույթների ձևով<sup>60</sup>:

Հայտնի է, որ իրավունքի ամենասկզբնական և ամենահին աղբյուրը եղել է սովորույթը, իսկ սրա գործող հետևանքը՝ սովորութական իրավունքը<sup>61</sup>: Սակայն ամեն մի սովորույթ չի կարող դառնալ սովորութական իրավունք, այլ միայն այն սովորույթ-

<sup>58</sup> Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ: Երևան, 2011, էջ 215:

<sup>59</sup> Ղազինյան Գ. Հայաստանի իրավական համակարգը և իրավունքի աղբյուրները IV-IX դարերում //Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները»: Զեկուցումների դրույթներ. Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013:

<sup>60</sup> Մանրամասն տե՛ս Սամվելյան Խ., Հին Հայաստանի կոլտուրան: Հատոր III, Երևան, 1941:

<sup>61</sup> Սովորութական իրավունքի մասին տե՛ս Խ. Սամվելյան, Հայ սովորութական իրավունքը: Հին հայոց իրավունքը և նրա հետազոտման մեթոդը: Արևանգամամբ և գնամամբ ամուսնութիւն, Թիֆլիս, 1911, նույնի, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր I, Երևան, 1939, էջ 26-40, նաև Մ. Ковалевский, Древний закон и современный обычай, Сиб., 1880, Закон и обычай на Кавказе, тт. 1/2, М., 1890.

ները, որոնք հասարակության մեջ երկարատև և անընդմեջ գործադրվելու հետևանքով, ձեռք են բերել համապարտադիր վարքագծի կանոնների, այլ խոսքով՝ չգրված օրենքի նշանակություն:

Ըստ հռոմեացի հայտնի իրավաբան Ուլպիանոսի, «սովորույթը ժողովրդի լռելայն համաձայնությունն է, որ որոշված է երկարատև փորձությամբ և երկարատև գործող սովորույթը պետք է պահպանել որպես իրավունք և օրենք այն դեպքերում, երբ չկա գրավոր օրենք»<sup>62</sup>:

Սովորութեական իրավունքի նորմերը հայ իրականության մեջ մինչև ԺԲ դարը գործել են որպես իրավունքի գլխավոր աղբյուր, դրանք սկզբնաղբյուր են հանդիսացել հայոց ազգային դատաստանագրքերի համար: Այսպես, օրինակ, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Գոշի «Հայոց Դատաստանագրքի» երկրորդ մասի 130 հոդվածներից 56-ը հիմնված է սովորութեական իրավունքի վրա<sup>63</sup>: Սովորութեական իրավունքի նորմերը հայ իրականության մեջ գործել են նաև հետագա դարերի ընթացքում:

Հայ հին և միջնադարյան իրավունքի կարևորագույն աղբյուրներից է հայ կանոնական իրավունքը<sup>64</sup>, այսինքն՝ կանոնական սահմանումներն ու որոշումները /Ս. Գիրք, Առաքելական կանոններ, տիեզերական և տեղական եկեղեցական ժողովների որոշումներ, հայ ազգային եկեղեցական ժողովների որոշումներ, եկեղեցու՝ հայ և օտարազգի սուրբ հայրերի կանոնախմբեր/: Կանոնական որոշումները, որպես իրավունքի աղբյուր, Հայաստանում կիրառվում էին IV դարից սկսած: Սկզբնական շրջանում այդ որոշումները կրում էին կրոնական բնույթ՝ խրատների և հրահանգների ձևով, սակայն հետագա դարերում, կապված երկրի հասարակական-քաղաքական

---

<sup>62</sup> **Дигесты Юстиниана.** Избранные фрагменты в переводе и с примечаниями **И.С. Перетерского**, М., 1984.

<sup>63</sup> Տե՛ս, Армянский Судебник Мхитара Гоша, Ереван, 1954, էջ XX:

<sup>64</sup> Հայ կանոնական իրավունքի մասին տես. **Тигранян С.**, Древне-армянская книга канонов. Очерки описания и исследования памятника. Записки Российской Академии наук по историко-филологическому отделению, т. XIII, № 3, Петроград, 1918; Նույնի, Կանոնական իրավունքը և նրա աղբյուրները, «Արարատ», 1902, № 1, Նույնի, Հայոց Կանոնագիրքը և մեր կանոնական իրավունքը, «Արարատ», 1902, № 2, նաև **Л.М. Меликсет-Беков**, Об источниках древнеармянского права, «Известия Кавказского историко-археологического института», т.2, 1917-1925 гг., Ленинград, 1925; **Ն.Վ. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Բ գիրք, Կազմակերպություն և կառավարություն, Շուշի, 1905, **Ա. Ղլտճեան**, Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914; **В. Акопян**, Армянская книга канонов и ее редакции. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1967, «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ **Վազգեն Հակոբյանի**, հատոր I, Երևան, 1964, հատոր Բ, Երևան, 1971:



անցուդարձերով, եկեղեցին ընդարձակեց հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտը: Եկեղեցու և նրա հայրապետների կողմից ընդունված կանոնական որոշումները սկսեցին ձեռք բերել համապարտադիր իրավական նորմի նշանակություն, «ուստի հայ եկեղեցական ժողովների կանոնական որոշումները մեծ մասամբ կրում էին ոչ միայն կրոնա-դավանաբանական բնույթ, այլև վերաբերում էին ներքին հասարակական հարաբերություններին, կարգավորելով այն հատկապես սահմանված իրավաբանական նորմերով»<sup>65</sup>: Ընդ որում, եկեղեցու իրավաստեղծ և օրենսդիր իրավասության սահմանները որոշվում էին աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև գոյություն ունեցող ուժերի փոխհարաբերությունից:

Հայտնի է, որ պատմական ճակատագրի բերումով պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար եկեղեցին եղել է համազգային միակ հաստատությունը, որը և միաժամանակ փոխարինել է պետականությանը: Հայոց մշակույթի պահպանության և զարգացման հետ միասին, եկեղեցին իր վրա է վերցրել ու տնօրինել քաղաքական բնագավառի հարցերը:

Նման պայմաններում հոգևոր իշխանությունը իր ձեռքում էր կենտրոնացնում նաև օրենսդրական ու դատական ֆունկցիաները: Կանոնական որոշումների պարտադիր նշանակությունն ավելի ցայտուն ձևով շեշտվում է Շահապիվանի /444թ./ եկեղեցական ժողովի որոշումների նախաբանում, որտեղ նշված է. «Ե՛ւ ժողովէին եպիսկոպոսք Խ եւ երիցունք եւ սարկաւագունք բազում եւ նախանձաւոր պաշտաւնեայք եւ համալրէն ուխտ սրբոյ եկեղեցւոյ, իշխանք ամենայն՝ գաւաւստեարք, գաւառակալք պետք, բռնաւորք, զաւրագլուխք, հազարաւորք, կուսակալք, ազատք կողմանց կողմանց, աւագ նախարարք աշխարհին Հայոց՝ որք էին նախանձախնդիր արինաց եւ սրբութեան, միաբան ասէին այսպէս, թէ՛ «Ձեղեալ կարգ սրբոյն Գրիգորի եւ Ներսէսի եւ Սահակայ եւ Մաշտոցի, դուք անդրէն հաստատեցէք եւ այլ զլաւն եւս որպէս եւ ձեր կամք են, եւ մեք կամաւք եւ ախորժիւք յանձն առնումք: Քանզի կարգք եկեղեցւոյ թուլացան եւ մարդիկ յանաւրէնութիւն դարձան: Այդ՝ արէնք որ Աստուծոյ հաճոյ են եւ եկեղեցւոյ նորաշինութիւն, դուք զայն կարգեցէք եւ մեք հնազանդիմք եւ հաստատուն պսիւսեմք, եւ եթէ ոք հաստատուն ոչ պահիցէ զկարգս արինաց կամ եպիսկոպոս, կամ երէց, կամ

---

<sup>65</sup> Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 45:

ազատ, կամ շինական՝ պատուհաս կրեսցէ եւ տուգանս տացէ»<sup>66</sup>:

Իրոք, հայ եկեղեցին հենց սկզբից վարում էր «գործակալութեանն մեծի դատաւորութեանն»<sup>67</sup> պաշտոնը, այսինքն իր ձեռքում էր պահում արդարադատության ֆունկցիաները<sup>68</sup>:

Հայ կանոնական իրավունքը կողիֆիկացիայի ենթարկվեց Ը դարի սկզբին Հովհաննես Իմաստասերի /Օձնեցու/ ժամանակի կրթված եկեղեցական և քաղաքական խոշոր գործիչներից մեկի ջանքերով, որը հայտնի է «Կանոնագիրք Հայոց» անունով: Կանոնագիրքը կազմելու մասին Հովհաննես Օձնեցին իր հիշատակարանում գրել է. «Լուսաշափղ ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի: Կազմեցին սուրբ հարքն զկանոնական բանից դիտաւորութիւն... Եւ վասն ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան նոքա սերմանեալք, կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել»<sup>69</sup>:

Հայկական այդ Corpus juris canonici-ն իրավական և պատմական կարևորագույն հուշարձան է, որն ունեցավ ավելի քան 12 դարերի անընդմեջ և լիարժեք կյանք:

Կանոնագիրքը մի քանի խմբագրությամբ մեզ է հասել 200-ից ավելի ձեռագիր ընդօրինակություններով<sup>70</sup>: «Կանոնագիրք Հայոց»-ը կազմված է երկու մասերից, թարգմանական /ասորերենից և հունարենից/ և ազգային՝ հայկական կանոններից<sup>71</sup>: Թարգմանական կամ օտարազգի կանոնական սահմանումներն ու որոշումներն են.

ա/ Սուրբ գիրք.– Ե դարի հայ պատմիչների վկայությամբ, երբ քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց որպես պետական կրոն, 301 թվականին, Հայոց Առաքելական եկեղեցին իր վարդապետական և կանոնական գործունեությունը կառուցում էր Սուրբ Գրքի վրա: «Աստվածաշունչը» հավաք օրինաց չէ, սակայն անառարկելի փաստ

<sup>66</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Երևան, 1964, էջ 28:

<sup>67</sup> **Փ. Բուզանդ**, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, էջ 36:

<sup>68</sup> Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 447; **Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 76, **Խ. Սամուելյան**, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր 1, Երևան, 1939, էջ 44, **С. Т. Еремян**, Опыт периодизации истории Армении эпоху феодализма // Вопросы истории, 1951, № 7, с. 54; **В.А. Акопян**, “Армянская книга канонов” и ее редакции. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1976, էջ 5 և այլք:

<sup>69</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Երևան, 1964, էջ Ժ-ԺԱ:

<sup>70</sup> Նույն տեղը, էջ ԺԱ:

<sup>71</sup> В.А. Акопян, Автореферат, с. 3.

է, որ Հին և Նոր Կտակարանը Հայաստանում ունեցել է հիմնական օրենքի գործություն, հետևաբար, «Աստվածաշնչի» Մովսիսական օրենքները Հայաստանում ունեցել են գործնական կիրառություն: Պրոֆ. Խ. Սամուելյանի կարծիքով «Մովսիսական օրենքները մեծ ծավալով ներս էին թափանցել հայ իրավունքի մեջ, մանավանդ գրավոր օրենքների ժողովածուներում»<sup>72</sup>: Հիրավի Մովսիսական օրենքները սկզբնաղբյուր են հանդիսացել նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի համար, որտեղ բազմաթիվ հոդվածներ վկայում են այդ մասին<sup>73</sup>: Պետք է նշել, որ Մովսիսական օրենքները Գոշի Դատաստանագրքում մտել են ինչպես անմիջական աղբյուրներից՝ Աստվածաշնչից, այնպես էլ անուղղակիորեն՝ մահմեդական իրավունքից: Այդ պարզորեն երևում է Դատաստանագրքի նախադրության 7 գլխում, որտեղ այլ աղբյուրների շարքում Գոշը հիշատակում է նաև մահմեդական իրավունքը. «Երրորդ՝ առնումք եւ ի մահմետականաց, ոչ զոր նոքա ուսան ի Մահմետայ զախտաւոր բանս կամ զդատաստան, այլ զոր առին ի Մովսիսի օրինացն՝ մեք զայնս կնտրեմք եւ առնումք»:

բ/ Առաքելական կանոններ, որոնք հաստատուն տեղ են գտել «Կանոնագիրք Հայոց»-ում: Կանոնագրքում կա «Առաքելական» կոչվող երկու կանոնախումբ: Առաջինը՝ «Մահմանք եւ կանոնք զոր եղին աշակերտքն Քրիստոսի եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ Տեսան», բաղկացած 34 կանոններից և, երկրորդը՝ «Երկրորդ Առաքելական կամ Կղեմայ կանոնիս», բաղկացած է 85 կանոնից:

գ/ Տիեզերական ժողովների կանոններ. Հայոց Առաքելական եկեղեցին ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների սահմանած կանոնները՝ Նիկիայի /325թ./, Կոստանդնուպոլսի /381թ./ և Եփեսոսի /432թ./, Քաղկեդոնի /451թ./, իսկ հաջորդ տիեզերական ժողովներին հայոց եկեղեցին չի մասնակցել և չեն ընդունել նրանց սահմանած կանոնները:

Տիեզերական եկեղեցուց հայոց եկեղեցու առանձնանալը առաջին հերթին, պայմանավորված էր ինչպես քաղաքական շարժառիթներով՝ երկրի անկախության և եկեղեցու ինքնավարության ապահովմամբ, այնպես էլ կրոնա-դավանաբանական հարցերի շուրջ եղած անհամաձայնությամբ:

<sup>72</sup> Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 56:

<sup>73</sup> Տե՛ս օրինակ, Դատաստանագրքի նախադրություն, գլուխ Ա, Բ, Ժ, Ա մասի 1, 3, 14, 19, 21 հոդվածները և այլն:

դ/ Արտաքին տեղական ժողովների կանոնները. Հայոց առաքելական եկեղեցին ընդունում է վեց արտաքին տեղական ժողովի սահմանած կանոնները՝ Անկյուրիայի /314թ./, Կեսարիայի /314-315թթ./, Նեոկեսարիայի /315թ./, Լավոդիկայի /365թ./, Գանգ-րայի /340/370 թթ./, Անտիոքի /341 թ./ և Սարդիկայի /344-347 թթ./:

ե/ Եկեղեցու օտար հայրերի կանոններ. Հայոց եկեղեցին, հետևելով ընդհանրական եկեղեցու օրինակին, ընդունում է քրիստոնեական աշխարհի երևելի հայրերի անվամբ եղած կանոնները, մասնավորապես Բարսեղ Կեսարացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Աթանաս Աղեքսանդրացու, Սևանտոս Եպիսկոպոսի, Եպիփանի և Գրիգոր Նազիանզացու կանոնախմբերը:

Որքան էլ ազդեցիկ և հեղինակային լինեին վերոնշյալ օտարածին կանոնները, այդուհանդերձ դրանք լիովին չէին բավարարում հայ իրականության բազմապիսի և բազմաբնույթ պահանջներին, քանզի չէին բխում Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններից ու առանձնահատկություններից: Ուստի հայ աշխարհիկ և հոգևոր տերերը չբավարարվեցին նշված կանոններով և ձեռնամուխ եղան ազգային կանոնախմբերի մշակմանը:

Հայագիտության մեջ ազգային-եկեղեցական կանոնախմբերը դասակարգվում են. ա/ Հայոց հոգևոր հայրերի կանոնախմբերի և բ/ ազգային-եկեղեցական ժողովների սահմանած կանոնախմբերի: Առաջին խմբում դասվում են. 1/ «Կանոնք յետ առաքելոց Հարանց հետևորդաց», 2/ «Սահմանք Կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի ի քաղաքին Ուռհայ ի լուսաւորեալ զնոսա», 3/ «Կանոնք տեառն Փիլիպպոսի առաքելոյն», 4/ «Կանոնք սրբոյն Գրիգորի», 5/ «Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի», 6/ «Սահմանք և կանոնք կարգի եկեղեցւոյ սրբոյն Ներսէսի հայրապետի Հայոց»:

Երկրորդ խմբում դասվում են հայ եկեղեցական ժողովների որոշումները, որոնք գումարվել են դեռևս Դ դարի 50-60-ական թվականներին և որոնց մասնակցում էին նաև աշխարհիկ տերերը:

Իրենց իրավական նշանակությամբ հայտնի են Աշտիշատի /354 թ./, Շահապիվանի /444 թ./, Դվինի երկրորդ /554 թ./, Դվինի չորրորդ /645 թ./, Դվինի հինգերորդ /719 թ./, Պարտավի /768 թ./ և Սիսի /1243 թ./ եկեղեցական ժողովների կանոնական սահմանումները:

Այսպիսով, «Կանոնագիրք Հայոցը» անգնահատելի իրավունքի աղբյուր է հայ միջնադարյան իրավունքի պատմության հետազոտման համար:

Ժ-ԺԳ դարերի հայ իրավունքի կարևոր աղբյուրներից է Դավիթ Ալավկաորդու կանոնները կամ կանոնական օրինադրությունը<sup>74</sup>:

Դավիթ Ալավկաորդին միջնադարյան Հայաստանի հայտնի մատենագիրներից և հասարակական գործիչներից է, որի մասին առաջին տեղեկությունները հայտնում են նրա ժամանակակիցները: Այսպես, ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին վկայում է. «Եւ զկնի ամի միոյ Դաւիթ վարդապետն Ալեւկա որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս՝ գեղեցկայարմարս եւ պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն, ի քաղաքէն Գանձակայ»<sup>75</sup>: Վարդան Արևելցին, խոսելով Հովհաննես Սարկավագի /Իմաստասերի/ մասին, գրում է. «Իսկ Սարկաւագ վարդապետն կեցեալ է յիր մշակութեան գաւուրս իլր հանգալ ի հինգհարիւր ութսուն և ութ թուին և զկնի ամի զոյ լծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ, որ կանոնք գրեաց դիւրահաս»<sup>76</sup>: Նրա ժամանակակից հիշատակագիրներից մեկը, խոսելով Արևելյան Հայաստանում աչքի ընկնող գործիչների մասին, նշում է. «էր յարեւելս Սարկաւագ վարդապետն՝ Հաղբատեցին և անուանի Դաւիթ որդի Ալաւկայ և այլ բազումք աշակերտք եւ ընկերակիցք սոցա»<sup>77</sup>: Դավիթ Ալավկաորդուն հիշատակում է նաև Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը և այլք:

Ըստ պատմիչների հաղորդած տվյալների, Դավիթ Ալավկաորդին ծնվել է ԺԱ դարի 70-80-ական թվականներին, Գանձակ քաղաքում: Վախճանվել է 1140 թվականին: Լինելով իր ժամանակի կրթված մարդկանցից, ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցներից մեկը, նա խորապես մտահոգվել է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հարցերով, որի արգասիքն է հանդիսանում հայ իրականության մեջ առաջին աշխարհիկ օրենսդրությունը ստեղծելու փորձը, թեպետև ժողովածուն կոչվում է «Կանոններ» կամ

<sup>74</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, **Դավիթ Ալավկաորդու** կանոնները, ուսումնասիրություն և բնագիր // «էջմիածին», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1952, հունվար, փետրվար, մարտ 1953: Անգլերեն թարգմանությունը տես С. J. F. Dowsett, *The Penitential of David Ganjak*, Louvain, 1961.

<sup>75</sup> **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ **Կ.Ա. Օհանջանյանի**, Երևան, 1961, էջ 116:

<sup>76</sup> Մեծն Վարդանայ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159:

<sup>77</sup> **Գարեգին Հովսեփյան**, Յիշատակարանք ծեռագրաց, հ. Ս, Անթիլիաս, 1952, էջ 307:

«Կանոնական օրինադրություններ»:

Ժողովածուն բաղկացած է 97 կանոններից, որոնք կարգավորում են քաղաքացիական, ամուսնա-ընտանեկան և քրեական իրավունքի որոշակի հարաբերություններ, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության, կենցաղային մաքրակեցության վերաբերյալ կանոններ:

Դավիթ Ալավկաորդու «Կանոնական օրինադրությունների» հիմնական աղբյուրներն են. Հին և Նոր Կտակարանը, հատկապես Մովսես Մարգարեին վերագրվող Հին Կտակարանի հայտնի Հնգամատյանը և հայ կանոնական իրավունքի նորմերը: Բացի նշված աղբյուրներից, հեղինակը ուսումնասիրել և օգտագործել է հայ իմաստասերների /Եզնիկ Կողբացի, Հովհաննես Սարկավագի /Իմաստասեր// աշխատությունները: Հայագիտության մեջ «Կանոնների» բնույթի և բովանդակության վերաբերյալ ուսումնասիրողների տեսակետները խիստ տարբերվում են: Այսպես, գիտնականներից ոմանք՝ Մ. Չամչյանը<sup>78</sup>, Նոյմանը<sup>79</sup>, Ջարբեհանալյանը<sup>80</sup>, Տաշյանը<sup>81</sup> գտնում են, որ «Կանոնները» ըստ էության արժեք չեն ներկայացնում, իսկ Մ. Չամչյանի արտահայտությամբ. «խառնիխուռն և անիմաստ բաներ են»:

Նշված հեղինակների տեսակետը ջանացել են հերքել Կ. Կոստանյանը<sup>82</sup>, Ղ. Ալիշանը<sup>83</sup>, Մանուկ Աբեղյանը<sup>84</sup>, իրավաբաններ՝ Խ. Սամուելյանը<sup>85</sup>, Ս. Սուքիասյանը<sup>86</sup>, Ա. Թովմասյանը<sup>87</sup>, Խ. Թորոսյանը<sup>88</sup>: Եվ ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆ. Ա. Թովմասյանը. «Իրականում Դավիթ Ալավկա որդու կանոնները որոշակի հետաքրքրություն ներկայացնող, սխառնի բերված կանոններ են և նրանց մեջ խառնիխուռն ու անպետք ոչինչ չկա, մանավանդ, երբ այդ կանոնները քննության են

<sup>78</sup> Մ. Չամչյան, Հայոց պատմություն, Ի. Գ, Երևան, 1984, էջ 41:

<sup>79</sup> C.F. Neumann, Versuch einer Geschichte der armenischen Literatur, Leipzig, 1836, s. 163.

<sup>80</sup> Գ. Ջարբեհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, Խ. Ս, Վենետիկ, 1889, էջ 535:

<sup>81</sup> Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Խ. Յակոբոսով Տաշեան, Վիեննա, 1895, էջ 656:

<sup>82</sup> Կ. Կոստանյան, Դավիթ վարդապետ Ալավկա որդի // «Ազգագրական հանդես», ԺԴ գիրք, Թիֆլիս, 1907, էջ 105-132, ԺԵ գիրք, 1907, էջ 62-67:

<sup>83</sup> Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ 395, 404, 414, 434:

<sup>84</sup> Մանուկ Աբեղյան, Երկեր, Խ. Դ, Երևան, 1970, էջ 83-85:

<sup>85</sup> Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 75:

<sup>86</sup> Ա.Գ. Սուքիասյան, Կրիլիկայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 227-228:

<sup>87</sup> Ա.Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962, էջ 117-125:

<sup>88</sup> Хосров Торосян, Суд и процесс в Армении, с. 31.

առնվում իրենց գալու ժամանակաշրջանի տնտեսական և հասարակական-քաղաքական պայմանների ֆոնի վրա»<sup>89</sup>:

Հիրավի, Դավիթ Ալավկաորդին իր «Կանոններում» ամրագրել է վարքագծի այնպիսի կանոններ, որոնք կենսական ու առաջադիմական են եղել իր դարաշրջանի համար<sup>90</sup>:

Հայ միջնադարյան իրավունքի ամենախոշոր իրավական հուշարձանը Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է: Դատաստանագիրքի ստեղծումը պայմանավորված էր դարաշրջանի հրամայականով՝ իրավական հող նախապատրաստելու վերականգնվելիք հայոց պետականության համար:

Դատաստանագիրքը գրվել է 1184 թ. և մեզ է հասել հայկական և օտարալեզու մի քանի խմբագրություններով<sup>91</sup>: Հայկական խմբագրությունները երեքն են, որոնք կազմվել են 11.84-1265 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Առաջին խմբագրությունը համարվում է հեղինակային: Այդ խմբագրությունները միմյանցից տարբերվում են թե ներքին-էական, և թե արտաքին-ձևական հատկանիշներով<sup>92</sup>: Գոշի Դատաստանագիրքը հայ իրականությունում գործել է մինչև նոր ժամանակները<sup>93</sup>:

Շարունակելով խոսքս մասնավոր անձանց իրավաստեղծ գործունեության մասին, անհրաժեշտ է նշել նաև Կիլիկյան հայկական պետության նշանավոր գործիչ,

<sup>89</sup> Ա.Թ. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 120:

<sup>90</sup> Դավիթ Ալավկաորդու հայացքների մասին տես, Գ. Սաֆարյան, «Դավիթ Ալավկաորդու իրավաքաղաքական հայացքները» // «Պատմա-բանասիրական հանդես», 1988, N 4 /123/, էջ 113-122:

<sup>91</sup> Դատաստանագիրքի խմբագրությունների մասին տես, Խ. Թորոսյան, Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագիրքի // «Բանբեր Մատենադարանի», N6, 1962, Նոյնի, Մխիթար Գոշի Դատաստանագիրքի ձեռագրերն ու խմբագրությունները // «Պատմա-բանասիրական հանդես», N1, 1963, նաև Էմ. Պիվազյան, Մխիթար Գոշի Դատաստանագիրքի բանասիրական վերլուծություն, Երևան, 1987:

<sup>92</sup> Նախ հրատարակվել է երկրորդ խմբագրությունը. «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբ Վահան ծ. վարդապետի Բաստամեանց, ի Վաղարշապատ, 1880 թ.: Դատաստանագիրքի առաջին և երկրորդ խմբագրությունների գիտական-քննական բնագրերը հրատարակվեցին Խոսրով Թորոսյանի աշխատասիրությամբ. «Գիրք Դատաստանի», Երևան, 1975:

<sup>93</sup> Բացի բուն Հայաստանից Գոշի Դատաստանագիրքը, լատիներեն համառոտ թարգմանությամբ, 1519 թ. գործողության մեջ մտավ լեհահայ գաղութում: Շատ չանցած Դատաստանագիրքի լատինական խմբագրությունը թարգմանվեց Ղրիմի թաթարերեն: ԺԸ դարերի կեսերին Աստրախանի հայկական գաղութը օգտվելով նաև Մխիթար Գոշի Դատաստանագիրքից, կազմեց մի նոր օրինագիրք, որը հաստատվեց ցարական կառավարության կողմից և գործադրվեց հարավային Ռուսաստանի հայության մեջ մինչև դատական ռեֆորմները: ԺԸ դարի սկզբներին, վրաց արքայազն Վախթանգը էջմիածնից խնդրում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և այն թարգմանել տալով վրացերենի, մտցնում է իր օրենսգրքի մեջ: Հետագայում, Վախթանգ թագավորի օրենսգիրքը որոշակի փոփոխություններով ներմուծվեց 1835թ. ռուսական “Свод законов Российской Империи”-ի մեջ, որով Դատաստանագիրքը տեղ գտավ նաև ռուսական օրենսդրության մեջ և Կովկասում գործող օրենքների աղբյուր դարձան:

օրենսգետ և օրենսդիր Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» մասին,<sup>94</sup> որի գլխավոր աղբյուրն է՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Իր օրինաստեղծ գործունեության շնորհիվ Սմբատ Սպարապետը հաջողությամբ լուծում է ազգային օրենսգրքի բացակայության հարցը Կիլիկիայում<sup>95</sup>: Չնայած որ «Դատաստանագիրք»-ը «կազմվել է անհատական ջանքերով, այնուամենայնիվ նա ստանում է տեղական ֆեոդալ հասարակության աչքում պետական-օրենսդրական նշանակություն, վայելում է պետական սանկցիայով անցած կողերքի արժեք, որովհետև նրա կազմողը հանդիսանում էր հայ կառավարության մեջ առաջնակարգ դեր խաղացող մի անձ, թագավորի եղբայր, որը թերևս թագավորի առաջադրանքով էր ձեռնամուխ եղել իր օրենսգրքի հորինմանը: Եթե Գոշի «Դատաստանագիրք»-ը գործող օրենսգիրք լինելուց բացի, նաև մի իսկական գիտական տրակտատ է պետության, իրավունքի և օրենսդրության, դատարանի և դատավարության և հարակից այլ հարցերի մասին, ապա Սմբատի «Դատաստանագիրք»-ը իսկական օրենսգիրք է դասակարգային բովանդակությամբ՝ ֆեոդալ-ճորտատիրական կողերք»<sup>96</sup>:

Ճակատագրի բերումով, հետագա ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումը, հայ իրավունքի զարգացումը հիմնականում տեղի ունեցավ հայկական գաղթավայրերում և դարձյալ, իրավաստեղծ գործունեության սուբյեկտը մի դեպքում մասնավոր անձ էր (Շահամիր Շահամիրյան), մյուս դեպքում՝ արևմտահայ համայնքի ներկայացուցիչները:

Այսպես, օրինակ, հնդկահայ գաղթօջախում (Մադրաս քաղաքում) ստեղծվեցին իրավական փայլուն հուշարձաններ՝ «Որոգայթ Փառաց»-ը (1788թ.) և «Նշավակ»-ը, որոնց հեղինակն է ազգային ազատագրական պայքարի ակնառու գործիչ և մտածող Շահամիր Շահամիրյանը<sup>97</sup>:

<sup>94</sup> **Տմբատ Տարապետ**. Судебник. Составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечание **А.Г. Галстяна**, Ереван, 1958г.; **Авакян Р.О.** Памятники армянского права, с. 439-548.

<sup>95</sup> **Սմբատ Սպարապետի** կյանքի և գործունեության մասին Տե՛ս **Ա.Գալստյան**, «Սմբատ Սպարապետը որպես զորավար և դիվանագետ» // Բանբեր Երևանի Համալսարանի, 1973թ., հ.1, էջ 98-101/; Նույնի՝ «Սմբատ Սպարապետը որպես պատմիչ, օրենսգետ և օրենսդիր» /Բանբեր Երևանի Համալսարանի, 1974թ., հ.1, էջ 100-109/:

<sup>96</sup> **Խ.Սամուելյան**, «Հին հայ իրավունքի պատմություն», Երևան, 1939թ., էջ 92:

<sup>97</sup> Տե՛ս **Авакян Р.О.** Памятники армянского права, с. 551-640; **Хачатрян Г.С.** "Западная Честолубия" и "Ншавак" Шаамира Шаамиряна как памятник армянского права эпохи Просвещения". Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Тбилиси 1990г.; **Գ. Սաֆարյան**,



Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառաց»-ի երևան գալը պայմանավորված էր հայ ազգային ազատագրական պայքարով և այդ պայքարը հիմնավորող գաղափարախոսությամբ: Ըստ հեղինակի «Որոգայթ Փառաց»-ը (ինչպես ժամանակին Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը) նախատեսված էր հայոց վերականգնվելիք պետականության համար: Այն մեզ է հասել բազմաթիվ ձեռագիր և տպագիր օրինակներով: Մեր կողմից օգտագործվել է 1913թ. Թիֆլիսում հրատարակված օրինակը: «Որոգայթ Փառաց»-ը բաղկացած է երկու մասից կամ հատորներից: Առաջին մասը (1-139) հիմնավորում է ազգային ազատագրական պայքարը և հանրապետական կարգերի հաստատումը, իսկ երկրորդ մասը «Նշալակ կստգադրութիւն հայոց վասն կառավարութեան Հայաստանեայց յԱշխարհի» (էջ 140-173) վերտառությամբ բովանդակում է 521 հոդվածներ, որոնք սահմանադրական, քաղաքացիական, ամուսնա-ընտանեկան և իրավունքի այլ ճյուղերին վերաբերող նորմեր են:

Յուրացնելով և զարգացնելով հայ իրավաքաղաքական մտքի լավագույն ավանդույթները, Շ. Շահամիրյանը հայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որ հիմնավորեց հանրապետական կարգերի անհրաժեշտությունը և, ըստ այդմ էլ, հայոց պետականությունը պատկերացնում էր որպես հանրապետություն:

«Որոգայթ Փառաց»-ը համաշխարհային սահմանադրականության պատմության մեջ առաջին նախագիծն է, որպես պետության հիմնական օրենք և հայ սահմանադրական մտքի փայլուն էջերից մեկը, որով սկսվում է հայ սահմանադրական մտքի ձևավորումը:

Հայ իրավաստեղծ գործունեության նվաճումներից է նաև արևմտահայերի «Ազգային Սահմանադրություն»-ը<sup>98</sup>: «Ազգային Սահմանադրության» հեղինակները «Եվրոպայից վերադարձած, ֆրանսիական 1848թ. հեղափոխության ավազանում մկրտված, բուրժուական առաջավոր մտածողների գաղափարներին հաղորդակից մի շարք հայ մտավորականներ էին»<sup>99</sup>: Սահմանադրության (կամ Կանոնադրության)

---

**Հ. Խաչատրյան.** «Հայ իրավունքի հուշարձաններ», էջ 24-46; **Գ. Սաֆարյան, Հ. Խաչատրյան.** «Որոգայթ Փառաց»-ը սրպես Հայոց Սահմանադրության ստեղծման փորձ // ՀՀ Սահմանադրական դատարանի «Տեղեկագիր» հ.2, 1997թ., էջ 20-24:

<sup>98</sup> Մանրամասն տես, **Հ. Խաչատրյան, Գ. Սաֆարյան,** «Արևմտահայերի «Ազգային Սահմանադրություն»-ը և նրա պատմական նշանակությունը» // Հայաստանի պետության և իրավունքի տեսության ու պատմության հիմնահարցեր, Երևան, 1998թ., **Авакян Р.О.** Памятники армянского права, с. 694-770:

<sup>99</sup> Տե՛ս, Հայ ժողովրդի պատմություն, հատոր 5, Հայաստանը 1801-1870 թվականներին: Ակադեմիական

սկզբնական (1854թ.) տեքստը մշակել էին ժամանակի առաջավոր մտածողներ Գր. Օտյանը, Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), Գ. Ժալյանը, Ն. Ռուսինյանը և այլք: Նախագիծը կազմված էր բուրժուա-դեմոկրատական սահմանադրությունների փորձի հիման վրա: Սկզբնական շրջանում նախագիծը չի ընդունվում և կազմվում է 21 եկեղեցականներից ու աշխարհականներից բաղկացած սահմանադրական նոր հանձնաժողով, որը 1856թ. դեկտեմբերին ավարտում է աշխատանքը և 1857թ. մարտի 22-ին հրապարակում է սահմանադրության նոր նախագիծը: Սակայն թուրքական կառավարության կողմից կասեցվում է այդ գործընթացը և ընտրվում է սահմանադրական նոր հանձնաժողով: Այս հանձնաժողովը 1858թ. երկրորդ կեսին վերսկսում է իր աշխատանքը և շուտով նորից դադարեցվում է նրա գործունեությունը: 1859թ. մայիսին ընտրվում է հերթական սահմանադրական հանձնաժողովը 5 եկեղեցականների և 14 աշխարհականների մասնակցությամբ: Այդ հանձնաժողովի կենտրոնական դեմքը ֆրանսիական հեղափոխության ժողովրդավարական գաղափարներով տոգորված Նահապետ Ռուսինյանն է, որը գրեթե միանձնյա խմբագրում է սահմանադրության նախագիծը: Վերջապես, հաղթահարելով հակասահմանադրականների դիմադրությունը, նորընտիր պատրիարք Սարգիս Գույումճյանը 1860թ. մայիսի 24-ին ընդունում է կանոնադրությունը: Գր. Օտյանի, Սերվիչենի, Գ. Ժալյանի վերստին խմբագրությամբ կանոնադրությունը ներկայացվում է ընդհանուր ժողովի քննարկմանը և հաստատվում է: Ն. Ռուսինյանի առաջարկությամբ այն կոչվում է «Ազգային Սահմանադրություն»<sup>100</sup>:

«Ազգային Սահմանադրություն»-ը գործադրության մեջ կարող էր դրվել թուրքական կառավարության վավերացումից հետո միայն, որը ուշացվում էր: Եվ վերջապես, 1863թ. մարտի 17-ին, բազմաթիվ վերափոխումներից հետո, Բարձր Դուռը (կառավարությունը) հաստատում է «Ազգային Սահմանադրություն»-ը և, որն անմիջապես գործադրության մեջ է դրվում: Մ. Նալբանդյանի դիպուկ արտահայտությամբ, «թլպատվեց» «Ազգային Սահմանադրություն»-ը, նախկինում եղած 150 հոդվածի փոխարեն հրամցվեց 99 հոդվածից բաղկացած սահմանափակ մի կանոնադրություն:

1863թ. Սահմանադրությունը նախորդի համեմատ կրել էր լուրջ փոփոխություն-

հրատ. Երևան, 1974թ., էջ 335-336:

<sup>100</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 336:

ներ, կրճատվել էին հայանպաստ դրույթները և թուրքական կառավարության համար անընդունելի հոդվածները: Ավելացվել էին «հավատարիմ մնալ տերությանը» բառերը, որոնք առաջինի մեջ չկային:

Այդուհանդերձ, «Ազգային Սահնանադրությունը» կարևորագույն իրավական փաստաթուղթ էր և կոչված էր կարգավորելու հայ համայնքի ներքին կյանքը:

Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորմամբ սկսվում է ձևավորվել նաև հայոց անկախ պետականության ազգային օրենսդրությունը:

Քաղաքական բարդ իրադրությունների շրջանում ընդամենը երկուսուկես տարի գոյություն ունեցավ Հայաստանի առաջին հանրապետությունը, որն ըստ կառավարման ձևի՝ պառլամենտական հանրապետություն էր: Երկրի օրենսդիր մարմինը համարվում էր պառլամենտը (Ազգային Խորհուրդը), իսկ գործադիր իշխանությունը իրականացնում էր կառավարությունը, որը հաշվետու էր պառլամենտի առջև:

Հանրապետության կառավարությունն օժտված էր պատվիրակված օրենսդրության լիազորությամբ,<sup>101</sup> իսկ Հանրապետության վերջին վեց ամիսների ընթացքում, երբ չէին գումարվում Ազգային Խորհրդի նիստերը, կառավարությունն ամբողջությամբ իրականացնում էր նաև օրենսդիր իշխանությունը: Հանրապետության գոյության երկուսուկես տարվա ընթացքում ընդունվեց 1203 օրենք, որոնցից 290-ը՝ պառլամենտի կողմից, 913-ը՝ կառավարության:

Ընդունված օրենքների գերակշռող մասը վերաբերում էր օպերատիվ կառավարման ոլորտի հարցերին (օրինակ, «Խուլերայի դեմ կռվելու մասին», «Հայաստանի Խորհրդի անդամների սննդադրամի և ճանապարհածախսի մասին», «Գետնախնձորի (կարտոֆիլի) կառավարչական գնման մասին» և այլն), չնայած դրանց կարևորությանը (հաշվի առնելով ժամանակաշրջանի բարդ քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը), այդուհանդերձ, դրանք ավելի շուտ որոշումներ էին, քան օրենսդրական ակտեր:

Հատուկ օրենքով («Օրենքները պահելու և հրատարակելու մասին» 1918թ.

---

<sup>101</sup> Պառլամենտը 1919 թվականի ապրիլի 27-ի և 1920 թվականի մայիսի 5-ի օրենքներով՝ պառլամենտի արձակուրդի ժամանակաշրջանում իր բոլոր լիազորությունները, այդ թվում և օրենսդրական, հանձնել էր կառավարությանը (տես Հայաստանի Հանրապետության օրենքները 1918-1920թթ.) Երևան, 1998թ., էջ 55 և 269:

սեպտեմբերի 24) սահմանված էր օրենքների հրատարակման կարգը<sup>102</sup>։ Ըստ այդ կարգի, օրենքի իսկականը համարվում էր այն օրինակը, որը պարունակում էր օրենքի՝ Հայաստանի Խորհրդի կողմից հաստատված վերջնական բնագիրը և վավերացված էր Խորհրդի նախագահի և ավագ քարտուղարի ստորագրություններով։ Օրենքը հաստատվելուց հետո նրա օրինակները Ազգային Խորհրդի նախագահի կարգադրությամբ ուղարկվում էին տպագրելու և հրապարակելու։ Օրենքները հրապարակվում էին պառլամենտի պաշտոնական տեղեկագրում՝ «Օրենքների հավաքածու»-ի («Հավաք օրինաց») միջոցով։

Համաձայն «Ուժի մեջ մտնելու մասին» օրենքի (1919թ. դեկտեմբերի 24). «1. Յուրաքանչյուր օրենք գործադրության մեջ է մտնում Երևանում «Օրենքների հավաքածու»-ի մեջ հրապարակվելու հինգերորդ օրը, իսկ Հանրապետության մնացած վայրերում՝ տասն և հինգերորդ օրը։ 2. Առանձին դեպքերում, պառլամենտի հատուկ որոշմամբ, օրենքը գործադրության մեջ է մտնում այդ օրենքում սահմանված ժամանակից սկսած և նույն օրենքում հիշատակված ձևով անկախ «Օրենքների հավաքածու»-ի մեջ հրապարակվելուց»<sup>103</sup>։

Ընդունված օրենքներից իրենց կարևորությամբ և օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից ուշագրավ են՝ «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» (1918թ. դեկտեմբերի 6), «Հայաստանի Հանրապետության մի քանի գավառներում զեմստվային հաստատություններ հիմնելու մասին» (1919թ. մայիսի 23), «Միացյալ Հայաստանի անկախության ակտը հայտարարելու մասին» (1919թ. մայիսի 26), «Երևանի Համալսարանի մասին» (1919 թ. հուլիսի 8), «Պետական լեզվի մասին» (1919թ. դեկտեմբերի 26), «ՀՀ պառլամենտի ընտրությունների մասին» (1919թ.), «Միլիցիայի ժամանակավոր օրենքը՝ հաստատված ժամանակավոր կառավարության կողմից 1917թ. ապրիլի 17-ին և փոփոխված Հայաստանի պառլամենտի կողմից 1920թ. ապրիլի 21-ին», «Ժամանակավոր օրենք արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» (1920թ. մայիսի 8), «Դպրոցական պաշտոնյաների մասին» (1920թ. օգոստոսի

<sup>102</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 5-6։ Նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, 1-200, ց.1, գ.86, թ.5։ Տպագիր։

<sup>103</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 207։ Նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, Փ-200, ց.1, գ.86, թ.74։ Տպագիր։

5), «Պետական դրամանիշների կեղծելու դեմ պատիժներ սահմանելու մասին» (1920թ. օգոստոսի 20), «Պաշտոնյաների հանցանքների մասին» (1920թ. հոկտեմբերի 2) օրենքները և այլն:

Նշված ազգային օրենքներից բացի, Հայաստանի առաջին Հանրապետության իրավունքի հիմնական աղբյուր էին Ռուսական Կայսրության օրենսդրական ակտերը՝ որոշակի փոփոխություններով և խմբագրություններով հանդերձ: Այդ կապակցությամբ Հանրապետության պառլամենտը հատուկ օրենք ընդունեց («Օրենք՝ նախկին Ռուսական Կայսրության օրենքների գործադրման մասին Հայաստանի տերիտորիայի վրա» (1918թ. դեկտեմբերի 6), համաձայն որի, «Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա գործադրում են ժամանակավորապես նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի ու Հայաստանի Խորհրդի փոփոխություններով և լրացումներով»<sup>104</sup>:

Խորհրդային Հայաստանի և, ընդհանրապես, սոցիալիստական իրավունքի և իրավաստեղծ գործունեության մասին գոյություն ունի բավականին հարուստ գրականություն<sup>105</sup>, հետևաբար այստեղ կանգ կառնենք սոցիալիստական իրավաստեղծ գործունեության հիմնական առանձնահատկությունների և դրա ուսումնասիրության անհրաժեշտության վրա:

Սոցիալիստական իրավաստեղծ գործունեության ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է հետևյալ հիմնական հանգամանքներով.

առաջին, սոցիալիստական իրավունքը անմիջականորեն նախորդել է ներկայիս

---

<sup>104</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 22: Նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց. 1, գ. 86, թ. 15: Տպագիր:

<sup>105</sup> Տե՛ս **Паленина С.В.**, "Теоретические проблемы системы советского законодательства", М. 1979г., Система советского законодательства", М., 1980г.; **Алексеев С.С.**. "Структура советского права", М., 1975г., "Теоретические вопросы систематизации советского законодательства", М., 1962г.; **Степанян В.** "Социальная справедливость и социалистическое право", Ереван, 1987г.; Он же "Теоретические проблемы правообразования в советском обществе", Ереван, 1986г., "История государства и права Светской Армении", кн.1, Ереван, 1974г., кн.2, Ереван, 1978г.; **Бегян А.З.** "Развитие советской государственности в Армении", Ереван, 1968г.; **Петросян Ш.Н.** "История конституционного. Развития советской государственности в Армении", 1968г.; **Պետրոսյան Շ.Ն.** «Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը», Երևան, 1982թ. նոյնի՝ «Հայկական ՍՍՀ Սահմանադրությունը և նրա պատմական զարգացումը», Երևան, 1982թ.; **Նազարյան Վ.Ռ.** «Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1921-1922թթ.)», Երևան, 1974թ. **Օսիպյան Ա.Ա.** «Պետական իշխանության կազմակերպումը ՍՍՀՄ-ում», Երևան, 1970թ. և այլն:

իրավական համակարգին և, կամա թե ակամա, թողել է իր ազդեցությունը (մասնավորապես օրենսդրական տեխնիկայի և օրենսդրական համակարգման ոլորտում)։

Երկրորդ, սոցիալիստական իրավունքի շատ ակտեր դեռևս շարունակում են գործել։

Երրորդ, սոցիալիստական իրավունքը ձևով պատկանում էր ռոմանագերմանական իրավական համակարգին, իսկ վերջինիս և ձևական-իրավաբանական, և բովանդակային տեսանկյունից պատկանում է նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը։ Հետևաբար, խորհրդային իրավաստեղծ գործունեության ուսումնասիրությունն ունի նաև գործնական նշանակություն։

Խորհրդային-սոցիալիստական իրավունքի խոշորագույն մասնագետ, պրոֆ. Ս.Ս. Ալեքսենի կարծիքով, «չնայած խորհրդային իրավունքի մի շարք տեխնիկական-իրավաբանական նվաճումներին, այն այնպես էլ մնաց, ըստ էության, որպես իշխանության իրավունքի և պատերազմի իրավունքի պատվաստում»<sup>106</sup>։ Գրեթե նույն տեսակետն է պաշտպանում պրոֆ. Վ.Ս. Ներսիսյանցը։ Վերջինիս կարծիքով. «Պետության և իրավունքի սոցիալիստական տեսության և ընդհանրապես իրավաբանական գիտության ձևավորման և զարգացման պայմանը՝ պետության և իրավունքի դեմ ուղղված, նրանց իսկական (ոչ կոմունիստական) իմաստով և նշանակությամբ, պայքարի պատմություն է «ընդդեմ իրավաբանական աշխարհայեցողության», որպես զուտ բուրժուական աշխարհայեցողություն, իրավական գաղափարախոսությունը պրոլետարական, կոմունիստական, մարքս-լենինյան գաղափարախոսության փոխարինման պատմություն է»<sup>107</sup>։

Մեր կարծիքով խորհրդային-սոցիալիստական իրավունքն իր բազմաթիվ թերություններով հանդերձ (մասնավոր սեփականության մերժումը, քաղաքական ազատության սահմանափակումը, անձի քաղաքական իրավունքների և ազատությունների ոտնահարումը, ազատ ձեռներեցության արգելումը ե հարակից այլ իրավունքների ոտնահարումը), այնուամենայնիվ, սոցիալիստական իրավունքի մի շարք ճյուղեր,

<sup>106</sup> Տե՛ս, **Алексеев С.С.** "Теория права", М., 1995г., стр. 298; Он же "Философия права". М., 1998г., էջ 148-201։

<sup>107</sup> **Нерсисянц В.С.** "Философия права". Учебник для вузов. М., 1997г., стр.163; Он же «Юриспруденция. Введение в курс общей теории права и государства», М., 1998г., стр.131; Он же «Право - математика свободы», М., 1996, стр. 101.

օրինակ, աշխատանքային ու սոցիալական ոլորտները կարգավորող օրենսդրությունը ոչ միայն չէր զիջում զարգացած ժողովրդավարական պետությունների համանման օրենսդրությանը, այլև հայտնի չափով էական ազդեցություն ունեցավ նշված բնագավառի միջազգային-իրավական նորմերի ձևավորման և ընդունման գործում (օրինակ, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» 1966թ. դաշնագիրը ընդունվեց Խորհրդային Միության և մյուս սոցիալիստական երկրների ակտիվ մասնակցությամբ և պահանջով):

Պակաս կարևոր նշանակություն չունի նաև Խորհրդային իրավաստեղծ պրակտիկայի դրական փորձը, մասնավորապես, օրենսդրական տեխնիկայի բարձր մակարդակը, օրենսդրության համակարգումը, օրինագծերի համաժողովրդական քննարկումները, օրենսդրական ակտերի սիստեմատիկ հրապարակումները օրաթերթերում:

Այսպիսով, ուրվագծելով հայ իրավաստեղծ գործունեության ձևավորման և զարգացման համառոտ պատմությունը, ինչպես նաև հաշվի առնելով յուրաքանչյուր պատմական դարաշրջանի քաղաքական և սոցիալ-տնտեսական իրողությունները և առանձնահատկությունները, մեր կարծիքով, ազգային օրենսդրության ձևավորման և զարգացման ողջ պատմությունը պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ շրջանների.

1. Հայոց պետականության ձևավորման և զարգացման շրջան (9-րդ դ. մ.թ.ա. - 4-րդ դ.).
2. Հայոց ազգային-եկեղեցական օրենսդրության ձևավորման և զարգացման ժամանակաշրջան (4-10 դարեր).
3. Հայոց աշխարհիկ և եկեղեցական օրենսդրության վերելքի ժամանակաշրջան (10-13-րդ դդ.).
4. Ազգային օրենսդրության լճացման ժամանակաշրջան (14-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի առաջին կեսը).
5. Ազգային օրենսդրության զարգացումը հայկական գաղթավայրերում (18-րդ դարի երկրորդ կեսից մինչև Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումը).
6. Ազգային-պետական օրենսդրության ձևավորման գործընթացը Հայաստանի

առաջին Հանրապետությունում (1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. դեկտեմբերի 2-ը)。

7. Խորհրդային Հայաստանի սոցիալիստական օրենսդրության ձևավորման և զարգացման շրջան (1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1990թ. օգոստոսի 23-ը)。

8. Անկախ պետականության գործընթացի ժամանակաշրջանի օրենսդրություն (1990թ. օգոստոսի 23-ից մինչև 1991թ. սեպտեմբերի 23-ը)。

9. Հայաստանի երրորդ Հանրապետության օրենսդրության ձևավորման և զարգացման ժամանակաշրջան (1991թ. սեպտեմբերի 23-ից մինչև մեր օրերը)։

Վերջինս իր հերթին կարելի է ստորաբաժանել երկու շրջանի。

ա) 1991թ. սեպտեմբերի 23-ից մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը՝ 1995թ. հուլիսի 5-ը。

բ) ՀՀ Սահմանադրության ընդունումից 1995 թվականից՝ մինչև մեր օրերը։

Այսպիսով, հայ իրավունքի և ազգային իրավական համակարգի զարգացման պատմական փորձը վկայում է, որ չնայած պետականության երկարատև բացակայությանը, այդուհանդերձ, աշխարհիկ և կանոնական իրավանորմերի ստեղծումը երբեք չի դադարել, դեռ ավելին, այն շարունակվել է նաև հայկական գաղթօջախներում՝ հարստացնելով ազգային իրավունքի և իրավական համակարգի բովանդակությունը, որն այսօր, նորանկախ հայոց պետականության իրավունքի համակարգի ձևավորման համար ունի ինչպես տեսական-ճանաչողական, այնպես էլ որոշակի գործնական-կիրառական նշանակություն, որովհետև պատմությունը միայն անցյալ չէ, այլ նաև՝ դաս ներկա և ապագա սերունդների համար։

### **1.3. Ազգային իրավական համակարգի հասկացությունը, կառուցվածքը, համակարգաձևավորող կապերը**

Իրավունքն իրենից ներկայացնում է բարդ, բազմակառուցվածք, համակարգային ձևավորում, որն ունի բոլոր այն հատկանիշները, որոնք հատուկ են համակարգերին՝ ընդհանրապես։ Իրավական իրականության համակարգային զարգացումը նպաստում է դրա պլանաչափ և նպատակաուղղված զարգացմանը։ Տարբեր տարրերի ու իրավունքի դրսևորումների համակարգային որակը, նախկինում նշվել է իրավագետների աշխատանքներում, նպաստել է իրավունքի գոյության խորը



ընկալմանը<sup>108</sup>: Հեղինակների կողմից նշվում էին «իրավունքի համակարգ», «օրենսդրության համակարգ», «իրավական կանոնակարգման համակարգ» հասկացությունները: Իրավունքի հասարակական հատկանիշները դիտարկվում էին դրա սկզբունքներում, աղբյուրներում, օրենսդրության կառուցվածքային մասերում, իրավաբանական տերմինաբանության մեջ: Սակայն, մինչ այժմ վերացված չեն անորոշությունն ու որոշակի վակուումը իրավական գործունեության մեջ՝ դրա անցումային շրջանում: Իրավունքի կայուն վիճակի պայմանավորվածության խնդիրը՝ իր համակարգայնությամբ, իրավունքի կայունության ու շարժի վրա իրավունքի տվյալ որակի ազդեցությամբ, փաստացիորեն չեն առաջադրվել ու, ըստ էության, չեն ուսումնասիրվել իրավաբանական գրականության մեջ:

Իրավական համակարգի կատեգորիայի տեսական մշակումը սույն ատենախոսական աշխատանքի շրջանակներում հանդիսանում է առաջնայիններից մեկը: Այս խնդրի լուծումից են կախված շատ այլ կոնցեպտուալ խնդիրներ, մասնավորապես կայուն և անկայուն հասարակությունների իրավական համակարգերի հետ կապված հիմնախնդիրները:

«Իրավական համակարգ» հասկացության օգտագործումը պետք է լինի իրավական ողջ գործունեության, որպես մեկ միասնական օբյեկտի նկատմամբ համակարգային կատեգորիաները իրավական մատերիայի, նախ և առաջ «համակարգ» հասկացության անդրադարձնելու արդյունք: Տարբեր հեղինակների կողմից տվյալ տերմինի կիրառությունը տարբեր գիտություններում էապես տարբերվում են միմյանցից, ու ոչ միայն դրանց վերագրվող նշանակություններով, այլ նաև, ինչն ավելի կարևոր է՝ դրանց հիմքում ընկած բովանդակային ու ձևական սկզբունքներով:

Սույն ուսումնասիրությունը կատարելիս մեր կողմից, որպես, հիմք ընտրվել են համակարգի մասին ներքոհիշյալ պատկերացումները, որոնք արտահայտված են փիլիսոփայական գրականության մեջ.

- Համակարգը ենթադրում է որոշակի տարրերի միավորումը կառուցվածքային, կանոնակարգված, ամբողջական միասնության մեջ (ընդհանրություն):

<sup>108</sup> Մանրամասն տե՛ս **Ղազինյան Գ.Ս., Վաղարշյան Ա.Գ.** Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը: Երևան, 2014:

- Համակարգը կազմող տարրերի ընդհանրությունը հետապնդում է որոշակի ընդհանուր նպատակ:
- Համակարգային ամբողջության մեջ առկա է հարաբերական ինքնուրույնության հատկանիշը:
- Համակարգը սերտորեն կապված է արտաքին միջավայրի հետ: -Համակարգի որակը չի հանգեցվում համակարգը ձևավորող տարրերի որակներին:
- Համակարգի տարրերը գտնվում են օբյեկտիվ, օրինաչափ փոխհարաբերությունների ու փոխադարձ կապերի միջև:
- Համակարգը կարող է հանդես գալ, որպես մեկ այլ, ավելի ծավալուն համակարգի մաս կամ ենթահամակարգ, իր իր սահմանափակ միասնության շրջանակներում՝ բաժանվում է նրբին ենթահամակարգերի<sup>109</sup>:

Փիլիսոփայական և իրավաբանական գիտությունների սինթեզը, կուտակված գիտելիքների միավորման, ինչպես նաև հասարակության բարդացման պայմաններում իրավական կանոնակարգման համակարգային պատկերը ստանալու պահանջմունքը առաջ բերեցին այնպիսի հասկացության առաջացումը, ինչպիսին է «իրավական համակարգը»: Այն սկսվեց դասվել իրավունքի տեսության առավել ընդհանուր հասկացությունների թվին, որն ընդհանրացնում է իրավական իրականության տարբեր երևույթներն ու պրոցեսները: «Իրավական համակարգ» կատեգորիան թույլ է տալիս մեկ միասնության մեջ պատկերացնել հասարակական կյանքի իրավական ողջ կողմը, համակարգային կապերի մեջ դիտարկել իրավական երևույթների ամբողջ համակարգի կազմակերպումն ու փոխհարաբերությունները:

Հասարակության իրավական համակարգն իրենից ներկայացնում է բազմասպեկտ, բազմապլան և բազմաֆունկցիոնալ ձևավորում, որը բավականին բարդ է գիտական ուսումնասիրության համար՝ հատկապես սեփական զարգացման բեկումնային սահմաններին: Մեր օրերում շարունակում է աճել ազգային իրավական համակարգերի թիվը, դրանց թիվը մոտավորապես 200-ն է<sup>110</sup>:

Ուսումնասիրության առարկայի բարդությունը ենթադրում է օպտիմալ միջոցների

<sup>109</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ.** Տրամաբանություն: Երևան, 2015, էջ 72-75:

<sup>110</sup> Տե՛ս Правовые системы стран мира. Энциклопедический справочник. Отв. ред. профессор А.Я. Сухарев. М., 2000:

ու դրա ճանաչողության ձևերի որոնում: Առանց խորանալու համակարգերի ընդհանուր դրության մեջ, աշխատանքի տվյալ հատվածում ենթադրում ենք ուսումնասիրել իրավունքի համակարգային որակները, որոնք կարող են օգտագործվել՝ բացատրելու համար իրավական ոլորտի անցումային գործընթացները: Նախ և առաջ պարզաբանման է ենթակա իրավունքում համակարգաձևավորող գործոնների մասին խնդիրը:

Աշխատանքի սույն ենթագլխում հանգամանորեն կվերլուծվեն իրավական համակարգի հատկանիշները, որոնք այն առանձնացնում են միատարր երևույթների ընդհանրությունից: Սա ենթադրում է իրավական համակարգի բաղադրիչային տարրի բացահայտումը, համակարգաձևավորող կապերի ու դրանց միջև հարաբերությունների բնույթի բացահայտումը, իրավական համակարգի ու դրա միջավայրի միջև հակադարձ կապերի սահմանումը:

Ճանաչողության նշված փուլերից յուրաքանչյուրը ինքնաբավ չէ, այլ անհրաժեշտաբար հիմնվում է այլ փուլի արդյունքների վրա: Իրավական համակարգի կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավոր չէ պատկերացնել առանց համակարգի տարրերի խմբի, ինչն իր հերթին պայմանավորում է օբյեկտի կայուն կապերի (արտաքին և ներքին) առանձնացումը, ամբողջի տարրերի բացահայտումը: Օբյեկտի առանձին տարրերի բացահայտման տվյալները ամբողջական հանրագումարում, թույլ են տալիս ձևակերպել իրավական համակարգի սահմանումը:

Դժվար է սահմանել ու ուսումնասիրել ինչ-որ երևույթների միջև հարաբերությունները, եթե հենց այդ երևույթները սահմանված են ոչ հստակորեն: Այսօր ստիպված ենք լինում աշխատել իրավական համակարգի հենց նման սահմանումների հետ: Բացի այդ դրանց թիվն այդքան էլ մեծ չէ: Իրավաբանական գրականության մեջ հաշվվում է «իրավական համակարգ» հասկացության 10-ից ավելի սահմանում: 1998 թվ-նի հանրագիտական իրավաբանական բառարանում (2-րդ հրատարակչություն) այն ընդհանրապես չի հիշատակվում<sup>111</sup>: Գիտական աշխատանքներում և նորմատիվ աղբյուրներում «իրավական համակարգ» տերմինը կիրառվում է իրավական ամենատարբեր երևույթների նկատմամբ: Իրավագետների

---

<sup>111</sup> Энциклопедический юридический словарь. М. 1998, с. 368

պատկերացումները այս հասկացության բնույթի ու ծավալի մասին, հաճախ տրամադծորեն հակասական են: Այս ամենը վկայում է այն մասին, որ իրավական համակարգի կատեգորիան, իրավաբանական գրականության մեջ դեռևս ըստ պատշաճին մշակված չէ:

Ըստ էության, «իրավական համակարգ» հասկացությանը լուրջ ուշադրություն դարձնելու համար, հեղինակներն առաջարկում են միանգամայն նոր եզրույթներ՝ «իրավական դաշտ», «իրավական կյանք»<sup>112</sup> և այլն: Ներկայումս, վերլուծական մշակումներն իրավունքում, անցել են գոյություն ունցող տեսության վրայով, և կուտակված տեսական նյութը դրանցում արդեն չի ձևավորվում: Սակայն, իրավունքի տեսության մեջ ներմուծվող հասկացությունները չպետք է հանգեցնեն դրա զուտ կատեգորիալ ապարատի թերագնահատմանը, «լուծեն» դրանք իրավաբանական այն հասկացություններում, որոնք փոխառված են գիտության այլ ոլորտներում:

«Իրավական համակարգ» եզրույթը իրավաբանական գրականության մեջ իր զարգացումը ստացավ միայն 1970թ. վերջին 1980 ականների սկզբին: Այս ժամանակահատվածում առաջ եկան Ա.Ս. Ալեքսեևի, Վ.Կ. Բաբանի, Ա.Մ. Վասիլևի, Վ.Ն. Կուդրյավցևի, Ն.Ի. Մատուզովի, Յու.Ա. Տիխոմիրովի և Լ.Բ. Տիունովայի աշխատանքները, որոնք հատուկ նվիրված են իրավական համակարգի հասկացությանը: Դնելով այս խնդրի ուսումնասիրության որոշակի կոնցեպտուալ հիմքեր, իրավագետները «իրավական համակարգ» հասկացության կիրառման դիապազոնը պահպանել են բավականին ընդլայնված ձևով: Նշված հասկացության առկա սահմանումներում միախառնվում են մեթոդաբանական տարբեր մակարդակներ, բացակայում են միասնական հիմքերը, մեծ է կարծիքների բազմազանությունը:

1983 թվականի աշխատանքում Ն.Ի. Մատուզովը իրավական համակարգը դիտարկում էր, որպես բարդ, հավաքական, բազմապլան հասկացություն, որն արտացոլում էր հասարակության իրավաբանական դրսևորումների ողջ հանրագումարը<sup>113</sup>: Ելնելով համակարգի ընդհանուր տեսության վերը նշված տեսակետներից, «հավաքականություն» բառի կիրառումը համակարգի բնութագրի

<sup>112</sup> См'у Правовая жизнь в современной России: Теоретико-методологический аспект. Под. ред. Саратов, 2005:

<sup>113</sup> См'у Матузов Н. И. Правовая система развитого социализма// Советское государство и право. 1983, N 1, էջ 18:

նկատմամբ անհաջող է, քանի որ այն կոչված է ընդգծել մեկ այլ, երևույթների անհամատեղելի ասպեկտը:

Այլ ուսումնասիրություններում, իրավական համակարգի հասկացությունը կապված է կոնցեպտուալ ապարատի համակարգային վերլուծության մեխանիկական կիրառության հետ՝ առանց բացահայտելու օբյեկտի իրավական առանձնահատկությունը: Այսպես, Վ.Ա. Ժերեբկինը տալիս է հետևյալ սահմանումը. «իրավական համակարգ ասելով հարկավոր է նկատի ունենալ փոխկապակցված ու փոխգործակցող, առաջադրված նպատակների ուղղությամբ առաջադրված առաանձին մասերի խումբը կամ ամբողջությունը, այսինքն այն տարրերի ենթահամակարգը, որը ձևավորում է միասնական, ամբողջական, իրավական ձևավորում, որն ունի ինքնակառավարման ու տեղեկատվական ուղղվածության հատուկ ենթահամակարգեր, ինտեգրացիոն որակներ և հատկանիշներ»<sup>114</sup>:

Մի շարք հեղինակներ, ըստ էության, իրավական համակարգը նույնացնում են իրավական նորմերի համակարգի հետ: Այսպես, Դ.Ա. Կերիմովը, իրավական համակարգը բնութագրում է, որպես իրավական նորմերի օբյեկտիվորեն պայմանավորված ներքին միավորումը մեկ միասնության մեջ, ինչպես նաև դրանց ստորաբաժանումը ոլորտների<sup>115</sup>: «Իրավունքի մեթոդաբանություն» մենագրության մեջ, որն հրապարակվլ է 2000 թվ-ին, Դ.Ա. Կերիմովը նշում է, որ «բազմամակարդակության գագաթը հանդիսանում է իրավունքի համակարգը, որը կազմված է ենթահամակարգերից, իրավական նորմերից, ինստիտուտներից ու նորմերից: Դրանով հանդերձ ձևավորվում է իրավական համակարգերի աստիճանակարգը, որը ստեղծում է իրավական համակարգայնության կայուն շենքը, սկսած հիմքից (իրավական նորմերի բազմազանության համակարգը) մինչև միջանկյալ «հարկերը» (իրավունքի ինստիտուտների ու ոլորտների համակարգը), մինչև դրա գագաթը (իրավունքի համակարգ)»<sup>116</sup>: Լ.Ս. Յավիչն իրավական համակարգը բնութագրել է, որպես առանձին իրավական նորմերի կառուցվածքային միագումար, որն ընդգրկում է համեմատաբար

<sup>114</sup> Жеребкин В. С. Противоречия при социализме и право. Владимир, 1972, с. 62.

<sup>115</sup> Керимов Д.А. Философские проблемы права., М. 1972, с. 278.

<sup>116</sup> Керимов Д.А. Методология права (предмет, функции, проблемы философии права). М. 2005, с.253.

ինքնուրույն ձևավորումներ (ինստիտուտներ, ոլորտներ, խմբերի ոլորտներ)<sup>117</sup>: Նման դիրքորոշումը, որը փաստացիորեն ճանաչման շանսեր չի թողնում «իրավական համակարգ» հասկացության ինքնուրույն համար ի տարբերություն «իրավունքի համակարգ» հասկացության,- Գ.Վ. Մայլցը նշում է. «իրավական համակարգն հանդես է գալիս, որպես ներքին, մասնատված, աստիճանակարգային կառուցվածք, իրավական նորմերի ու իրավական ակտերի միագումար, որոնց հիման վրա ձևավորվում են իրավական ինստիտուտներն ու հասկացությունները, ձևավորվում են իրավական գաղափարներն ու պատկերացումները»<sup>118</sup>: Վերջին սահմանումն ունի, նվազագույնը երկու խորը հակասություն: Առաջին հերթին «իրավական նորմերի ու իրավական ակտերի միասնություն» բառակապակցությունը հաշվի չի առնում պաշտոնական տրամաբանության օրենքները, և հատկապես. անթույլատրելի է միմյանց հավասարեցնել տարբեր կարգերի երևույթները: Իսկ երկրորդ հերթին, սահմանման նման կառուցվածքում վոլենտ-նոլենսի հեղինակը ինստիտուտները, գաղափարներն ու պատկերացումները դուրս է բերում իրավական համակարգի շրջանակներից:

Հեղինակների մեկ այլ խումբ (Ն.Ի. Մատուզով, Մ.Ի. Բայտին և Վ.Ն. Պրոտասով) թույլ է տալիս «իրավական համակարգ» և «իրավական կանոնակարգման մեխանիզմ» հասկացությունների նույնականացումը: Այսպես, Մ.Ի. Բայտինը իրավական համակարգը սահմանում է «ներքին ձևով կազմակերպված և փոխկապակցված հանրագումար, որոնք վերջին հաշվով սոցիալականորեն միատարր և ձգտողական ձևով ձգտում է տվյալ հասարակության իրավական երևույթների ընդհանուր նպատակներին, որոնցից յուրաքանչյուրը իր ուրույն դերն է կատարում իրավական կանոնակարգման գործում»<sup>119</sup>: Տվյալ հասկացության ծավալի մեջ չընդգրկելով իրավական գործունեության այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են իրավագիտակցությունը, իրավաձևավորումը, հեղինակներն էապես միավորում են ուսումնասիրության առարկան: Բացի այդ, հասարակության իրավական համակարգը

<sup>117</sup> Явич Л.С. Диалектика формы и содержания в праве// Философские проблемы государства и права. Л, 1970, с. 43.

<sup>118</sup> Мальцев Г.В. Социальные основания права. М., 2007, с. 38-39.

<sup>119</sup> Байтин М.И. Сущность права (современное нормативное оравопонимание на грани двух веков). М., 2005, с. 117-118.

ենթադրում է ոչ միայն իրավաբանական միջոցների ազդեցության խնդիրը հասարակական հարաբերությունների վրա, այլև նման ներգործության ազդեցությունը: Հակառակ դեպքում, իրավական իրականությունն ուսումնասիրելու գործում խախտվում է համակարգվածության սկզբունքը:

Արտասահմանյան իրավագիտության մեջ (մասնավորապես անգլոսաքսոնյան) «իրավական համակարգ» տերմինը պատշաճ զարգացում չստացավ, ինչպես որ իրավունքի ընդհանուր տեսական կատեգորիաների դեպքում է: Նշված կատեգորիայի հազվադեպ հիշեցումները արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ առանձնանում են սահմանումների կողմնորոշում ունենալու և հատկանիշով ու անկայունությամբ: Այսպես, ամերիկյան իրավագիտության ներկայացուցիչ Վ. Վեյդիխը գրում է. «Իրավական համակարգ» եզրույթը օգտագործվում է հենց տարբեր ժողովուրդների իրավունքի համակարգի պատմա-իրավական և էթնո-մշակութային տարբերությունները բնութագրելու համար»: Եվ հետո. «Իրավական համակարգերի առանձնացումն ունի պատմական նշանակություն»<sup>120</sup>:

Նշելով իրավական համակարգի սահմանման մեջ առկա կարծիքների բևեռականությունը, ուշադրություն դարձնենք նրան, որ հեղինակներն առանձնանցնում են իրավական համակարգի բաղադրիչների ամենատարբեր խմբերը: Տվյալ բացը բացասական ազդեցություն է ունենում համակարգի բաղադրիչային կազմի հստակության վրա, որը գիտական գրականության մեջ ավանդապես չի նկարագրվում:

Իրավական համակարգում մեկ միասնության մեջ են միավորվել հասարակության իրավական պատկերացումները, դրա մշակույթն ու հոգեբանությունը միավորվում է տեխնիկա-իրավաբանական միջոցների զինանոցի հետ: Հենց սրանով է բացատրվում իրավական համակարգում իրավական տարբեր երևույթների միավորման հնարավորությունը, տվյալ կատեգորիայի բազմասպեկտությունը, ինչպես նաև ճանաչողության բարդությունն ու համակարգի բաղադրիչների դասակարգումը: Կարելի է ասել, որ իրավական համակարգի կառուցվածքի բարդությունը հանդիսանում է դրանք պայմանավորող հասարակական հարաբերությունների բարդության արտացոլումը:

---

<sup>120</sup> Weidich W. Stability and Cyclicity in Law system. New York, 1995, p.241

Հեղինակների մեծ մասը (Ն.Ի. Մատուզով, Ա.Ֆ. Չերդանցևը, Ն.Ա. Բոգդանովան, Ա.Յու Մարոչկինը և այլն) իրավական համակարգը ներկայացնում են, որպես սինթետիկ հասկացություն, որն արտացոլում է հասարակությունում հանդիպող իրավաբանական երևույթների ողջ համալիրը<sup>121</sup>: Մոտեցումն իրավական համակարգի նկատմամբ, որպես «իրավական ամբողջության» դրա բնութագրման միջոցով, կարելի է գերիշխող համարել իրավական գիտության մեջ: Վ.Ն. Կնյագինինը միանգամայն հստակորեն է ձևակերպել սույն մոտեցումը. «Իրավական համակարգ եզրույթը» անկախ նրանից, թե ինչ իմաստ է դրանում ներդրվում, օգտագործվում է որոշակի իրավական «ամբողջականություն» նշելու համար, ինչն ընդգրկում է իրավական երևույթների ողջ միագումարն իր ամբողջությամբ՝ անկախ այն հանգամանքից, դա իրավական մոդելի վերացական տեսական մոդելի ամբողջությունն է, թե՛ կոնկրետ երկրի, ժողովրդի իրավական կյանքի ամբողջությունը»<sup>122</sup>:

Խորհրդային ժամանակաշրջանում թերևս միայն Լ.Ս. Յավիչն էր, ով առարկում էր «իրավական համակարգ» հասկացության մեջ, առանց բացառության, իրավաբանական բոլոր երևույթներ, իրավաբանական ողջ իրականությունը ընգրկելու դեմ<sup>123</sup>: Ինչպես հայտնի է իրավական իրականությունը կազմված է ոչ միայն դրական իրավաբանական սկզբներից, այլ նաև բացասական իրավական դրսևորումներից՝ իրավախախտումներից, դեֆորմացիաներից, շեղումներից: արդյո՞ք հնարավոր է «իրավական համակարգ» հասկացության ծավալի մեջ ընգրկել ոչ միայն դրական, այլև բացասական իրավաբանական երևույթները: Այս հարցի պատասխանն անմիջականորեն կապված է իրավական համակարգի կառուցվածքի նկատմամբ այս կամ այն տարրերի հարաբերականության չափանիշի փնտրտուքի հետ:

Մեթոդաբանական տվյալ խնդրի լուծման համար առաջարկում ենք հետևյալ մոտեցումը: Օբյեկտի ներսում գտնվող և դրա հետ սերտորեն կապված ամեն ինչ է, որ հանդիսանում է դրա տարրը: Տարրը համակարգի անհրաժեշտ, ֆունկցիոնալ միավորն է: Իսկ տարրերի համակարգի տարրերի անհրաժեշտ ու բավարար միագումարը հանդիսանում է դրա կազմը: Այն կարծիքն է տիրում, որ բացասական իրավական

<sup>121</sup> Правовая система развитого социализма //Советское государство и право.1983, N 1. с. 20.

<sup>122</sup> **Княгинин В.Н.** Место правовой системы, основанной на законе иных правовых систем, Красноярск, 1992, с.14.

<sup>123</sup> **Явич Л.С.** Сущность права. М., 1985, с. 41.



երևույթները (իրավախախտում և այլն) իրավական համակարգի անհրաժեշտ գործառնական միավորների դերին չի համապատասխանում: Իրավական երևույթների ողջ առատությունից իրավական համակարգի տարրերին առավել նպատակահարմար է դասել այն, ինչն անհրաժեշտ է հասարակական կյանքի վրա իրավական ներգործության արդյունավետ գործընթացի համար՝ իրավունքի սուբյեկտների գիտակցության ու վարքագծի վրա նպատակուղղված բարենպաստ ազդեցություն ունենալու համար: Երևույթների ընտրման նման չափանիշը իրավական համակարգի մեջ պայմանավորված է մի շարք գործոններով, քաղաքակիրթ իրավական համակարգի նպատակներով, դրա ծագումնաբանական ու ֆունկցիոնալ ասպեկտներով, և ի վերջո հենց իրավաընկալմամբ, ինչն արտահայտում է մարդկային արժեքները:

Ամեն դեպքում, իրավական համակարգի հասկացությունից բացասական իրակական երևույթների բացառումը չի կարող բացարձակ լինել:

Տվյալ աշխատանքում նախաձեռնված իրավական համակարգի վերլուծությունը վկայում է այն մասին, որ անցումային շրջանում, իրավական համակարգի տարրերը ճգնաժամ են ապրում սեփական կազմակերպական, գործառնական և այլ կողմերից: Իրավական համակարգի յուրաքանչյուր տարր, նման պայմաններում իր մեջ է ընդգրկում մի շարք բացասական հատկանիշներ, որոնք պայմանավորված են անցումային հասարակության համակարգային ճգնաժամով: Իրավական համակարգ հասկացության միջից բացասական իրավաբանական բոլոր երևույթների բացառումը չի նպաստում դրանում հասարակական գործընթացի օբյեկտիվ հակասության արտացոլմանը, ուսումնասիրվող երևույթը զրկում է զարգացման ներքին աղբյուրից: Ավելին, վերլուծությունն իրավական համակարգի դիտարկվող ավելի արմատական դիրքորոշումից անցումային շրջանում կարող է հանգեցնել իրավական համակարգի գոյության փաստի ժխտմանը՝ դրա բազմաթիվ թերությունների ուժով: Հետևաբար իրավական համակարգ հասկացության մեջ կարելի է ընգրկել նաև բացասական իրավաբանական երևույթներ, սակայն, դրանք պետք է լինեն միայն այնպիսիք, որոնք իրավաբանական համակարգի տարրն անմիջապես բնութագրում են, որպես համակարգի անհրաժեշտ գործառնական միավոր ու կազմում են դրա

բովանդակությունը: Բացասական երևույթներին, որոնք բնութագրում են իրավական համակարգի տարրերի վիճակը, կարելի է դասել իրավունքի միջակայքերը, իրավական նիհիլիզմը, իրավունքի աղբյուրների բազմակիությունն ու հակասությունները և այլն: Իրավական համակարգի ապակազմավորումն ու ոչ ներդաշնակությունը անցումային շրջանում անխուսափելի են, այդ պատճառով էլ բացասական իրավաբանական երևույթները վերջինից հեռացնել չի ստացվում:

Վերլուծության ենթարկելով իրավական համակարգի կառուցվածքը, կարևոր է նշել, որ ուսումնասիրության պետք է ենթարկվի ոչ միայն այն, թե ինչպիսի տարրերից է ձևավորվում համակարգը, այլ նաև այն, թե ինչպես են միմյանց հետ փոխկապակցված այդ տարրերը: «Կառուցվածք» հասկացությունը նեղ իմաստով չի կարող ընկալվել, որպես ամբողջություն ձևավորող տարրերի խումբ: Համակարգի կառուցվածքը հանդիսանում է բոլոր ուղիղ և հակադարձ կապերի միագումարը՝ դրա գործառնական բաղադրիչների միջև: Տվյալ հասկացությունն օգտագործվում է գիտության մեջ՝ արտահայտելու համար ուսումնասիրվող առարկայի ամբողջի և մասերի, քանակական և որակական փոփոխությունների, բովանդակության ու ձևի փոխհարաբերությունները:

Իրավական համակարգին վերաբերող գրականության մեջ<sup>124</sup>, դրանում ուսումնասիրվող երևույթի կառուցվածքը, որպես կանոն, դիտարկվում է միայն դրա տարրային կազմի պլանում, համակարգի բաղադրիչների միջև առկա տարրերը դեռևս ուսումնասիրված չեն: Իրավական համակարգի տեսությունը գտնվում է գիտական մշակվածության այնպիսի մակարդակի վրա, որ անգամ դրա բաղադրիչային կազմի բացահայտումը, տարրերի հավաքումը իրենից բավականին բարդ խնդիր է ներկայացնում: Աշխատանքի տվյալ մասում հիմնական ուշադրությունը կենտրոնացած է դեպի դրա լուծումը, ձեռնարկվում է նաև իրավական համակարգի համակարգային ամուր կապերի բացահայտման փորձ:

Իրավական համակարգի հասկացությունը բացահայտում է իրավունքի համակարգության ընդհանուր ձևը, սակայն համակարգն ու կառուցվածքը միախառնելու առիթ չէ: «Կառուցվածք» հասկացությունը սերտորեն կապված է

<sup>124</sup> Տե՛ս օրինակ, Актуальные проблемы теории государства и права. Отв. ред. **Р.В. Шагиева**. М., 2012, էջ 270-271:

«համակարգ» հասկացության հետ, սակայն դրանց միջև առկա է տարբերություն: Կառուցվածք իրենից «ներկայացնում» է համակարգ, մեջբերում է այն, արտահայտում է համակարգի տարրերի գոյության ու կապի միջոց: Այն թույլ է տալիս պարզաբանել, թե ինչու է համակարգի որակն, ընդհանուր առմամբ տարբերվում իր բաղկացուցիչ տարրերի որակի միագումարից:

Կառուցվածքի կարևոր օրինակ է հանդիսանում դրա ամբողջական բնույթը: Կառուցվածքն այն է, ինչը համակարգի բոլոր տարրերն ընգրկում է օրինաչափ կապով: Կառուցվածքի, կապակցում է համակարգի բոլոր տարրերը մեկ թելով՝ իրենից ներկայացնելով համակարգի ամբողջական բնութագիրը: Հետևաբար, կառուցվածքի բացահայտումը կապված է օբյեկտի ամբողջական, միևնույն ժամանակ՝ տարբերակված բնույթի հետ:

Իրավական համակարգի կառուցվածքի առանձնացումը չի կարող տեղի ունենալ կամայականորեն, քանի որ նոր կառուցվածքը կրում է օբյեկտիվ բնույթ: Իրավական համակարգի կառուցվածքի ուսումնասիրության գործում հետազոտողը ստիպված է ուղղորդվել դեպի հասարակության իրավական ոլորտի կառուցվածքը: Հետևաբար կարելի է գալ այն եզրակացության, որ իրավական համակարգի կառուցվածքն իրենից ներկայացնում է հասարակական կյանքի իրավական ոլորտի իրականում գոյություն ունեցող կառուցվածքի մի մասը: Այս առումով դժվար է համաձայնվել Լ.Բ. Տիունովայի կարծիքի հետ այն մասին, որ «իրավական համակարգ» հասկացությունը իրավունքի տեսության մեջ ծագել է գիտելիքի ինտեգրացիայի, այսինքն ոչ թե ձևավորված միակ երևույթի, այլև բազմապլան ու բազմաբնույթ երևույթների սինթեզի արդյունքում՝ որոշակի համասոցիալական արդյունքի, միասնական նպատակի փոխազդեցության պայմաններում (հասարակական հարաբերությունների իրավական կանոնակարգում), ինչի արդյունքում էլ գիտության կողմից դիտարկվում են, որպես համակարգային ամբողջություն»<sup>125</sup>: Կարող է այնպիսի տպավորություն ձևավորվել, որ իրավական համակարգի նկատմամբ գործ ունենք ընդհանուր ձևավորման հետ, որի համակարգությունը կարող է կիրառվել միայն տեսությունում և միայն այն աստիճանով, որքանով որ իրավաբանական տարբեր միջոցներ կարողանում են հասնել ընդհանուր

<sup>125</sup> Тиунова Л. Б. О понятии правовой системы // правоведение. 1985. N1, с 26

նպատակի: Սակայն, բավարար է միայն պատկերացնել, թե անցումային շրջանում, որքան արժեքավոր կարող են լինել աստիճանակարգային ու համադասական իրավական իրականության իրականում գործող բաղադրիչների միջև՝ ընդունելու համար հասարակությունում գոյություն ունեցող իրավական համակարգի օբյեկտիվ ու օրինաչափ բնույթը:

Իրավական համակարգի կիրառության նկատմամբ կառուցվածքն հանդես է գալիս, որպես իրավունքի կամ դրա առանձին մասերի ներքին կազմակերպվածություն<sup>126</sup>: Կառուցվածքն իրավունքում նույն կերպ արտահայտում է, ինչպես կայունությունը (իրավական գործունեության ինվարիանտ ասպեկտ), այնպես էլ դրա զարգացումը: Իրավական համակարգի կառուցվածքի նկատմամբ նման մոտեցումը թույլ է տալիս ստանալ օբյեկտի ոչ միայն ստատիկ, այլև դինամիկ բնութագիրը: Մի կողմից, կառուցվածքը հանդիսանում է տարրերի միասնությունը, տարրերի կապի օրենքը, որն արտահայտում է երևույթի, որպես ամբողջականության, միասնության պահպանումը: Ձևավորված իրավական համակարգի կայունությունը հնարավոր է իրավական իրականության որակական սահմանվածության, կառուցվածքի կողմից ապահովվող հատկանիշի արդյունքում: Ամբողջությամբ ինտեգրված իրավական որակը հանդիսանում է իրավաբանական իրականության կառուցվածքը: Կառուցվածքն հանդես է գալիս, որպես իրավական համակարգի գլխավոր կայունացնող գործոն, որը նրան թույլ է տալիս պահպանել դրական փորձը՝ իր առջև կանգնած նպատակներին հասնելու համար: Մյուս կողմից, կառուցվածքը, ցույց տալով իր ներսում և արտաքին միջավայրի հետ առկա տարրերի փոխկապակցվածությունը, մասամբ պատասխանում է այն հարցին, թե ինչ պայմանների ներքո է որակապես սահմանված իրավական համակարգերից մեկը փոխարինում մյուսին: Շատ հեղինակների կողմից նշվում է օբյեկտի կառուցվածքի ու որակի միջև առկա կապը: Կառուցվածքի կարևոր փոփոխությունն անխուսափելիորեն առաջ է բերում իրավական համակարգի որակի փոփոխություն, դրա անցումը որակական նոր վիճակի: Սա, հիմնականում տեղի է ունենում այն պատճառով, որ տարրերի միջև տիպիկ կապերից մեկը համակարգի կառուցվածքում փոխարինվում է

---

<sup>126</sup> См. Яковлев А.М. Социальная структура общества и права. М., 2009, էջ 114-115:

մյուսով: Այս պատճառով կառուցվածքայնության փոփոխությունը հանդիսանում է դրա շարժման ընկալման աղբյուրներից մեկը:

Համակարգը բնութագրվում է իր տարրերով, բաղադրիչներով, ենթահամակարգերով, իրավիճակներով: Ավանդաբար իրավական գրականության մեջ չեն կատարում համակարգի տարրերի ու բաղադրիչների տարբերություններ<sup>127</sup>: Ընդ որում դրանք նույնական կատեգորիաներ չեն: Փիլիսոփայական գրականության մեջ տարրեր են անվանում համակարգի այնպիսի բաղկացուցիչ մասերը, որոնք իրենցից ներկայացնում են դրա մասնատման սահմանը: Բաղադրիչն ընդգրկում է տարրեր և ենթահամակարգեր (վերջիններն իրենցից ներկայացնում են համակարգի կազմակերպման մակարդակները, որոնք ունեն իրենց սեփական կառուցվածքը ու բնութագրվում են ամբողջականությամբ, միասնությամբ, հարաբերական անկախությամբ շրջակա միջավայրից): Համակարգի բաղադրիչները հարկավոր է տարբերել համակարգի մասերից: Բաղադրիչը (տարրը, ենթահամակարգը) համակարգում ունի որոշակի նշանակություն, կատարելով որոշակի գործառույթներ մյուս բաղադրիչների նկատմամբ, ու հետևաբար, սերտորեն կապված է դրանց հետ: Այս պատճառով էլ իրավական համակարգի կազմից բացառելու համար, կամ դրա արմատական փոփոխությունից հետո, ձևավորվում է որակապես նոր համակարգ: Իսկ ահա համակարգի «վիճակը» կարելի է համարել ատրիբուտ, այսինքն դրա անմիջական հատկանիշ:

Սրա հետ կապված կասկած է առաջացնում Ս.Ս. Ալեքսենի պնդումն այն մասին, որ իրավունքի սկզբունքները չեն կարող առանձնացվել, որպես իրավական համակարգի ինքնուրույն տարրեր<sup>128</sup>: Եվ դրա կողմից մասնավոր իրավունքի առանձնացումը, որպես իրավական համակարգի տարր, նույնպես չի պատասխանում տարրի հասկացությանը, քանի որ հանդես է գալիս, որպես մասնատված օբյեկտ:

Ելնելով կառուցվածքի, որպես այն ձևավորող բաղադրիչների փոխազդեցության միջոց, կարելի է գալ այն եզրակացության, որ կապերը հենց կառուցվածքն են և ոչ թե դրա առանձին տարրը: Եվ վերջապես, կասկածներ կան օրինականությունը

<sup>127</sup> **Нерсисянц В.С.** Право и общество в эпоху перемен. Материалы философско-правовых чтений памяти академика **В.С. Нерсисянца**. М., 2008.

<sup>128</sup> **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, с. 84-85.

իրավական համակարգի տարրերին դասելու նպատակահարմարության մասին: Օրինականությունն, ընդ որում, ինչպես որ իրավակարգը, արտահայտում է իրավական համակարգի վիճակը, ինչը հանդիսանում է դիտարկվող օբյեկտի հատկանիշը (ատրիբուտը) ընդհանուր առմամբ:

Անցումային շրջանի իրավական համակարգն<sup>129</sup> ուսումնասիրելու նպատակով կարևոր է նշել, որ համակարգը ձևավորող տարրերը կարող են լինել ինչպես միատարր, այնպես էլ ոչ միատարր, ինչպես կազմակերպված, այնպես էլ ոչ կազմակերպված: Միատարր անվանում ենք համակարգի որակապես նույնական բաղադրիչները: Համապատասխանաբար, ոչ միատարր կարող են լինել որակապես տարբեր իրավական երևույթները: Կազմակերպված բաղադրիչն առանձնանում է տարրերի կանոնակարգվածությամբ, ներքին միասնությամբ, բավարար ձևակերպվածությամբ: Համակարգի չկազմակերպված տարրը ունի քիչ արդյունավետություն, այն այնքան էլ լավ չի կատարում իր գործառույթը: Ոչ միատարր ու ոչ կազմակերպված տարրերի առատությունը համակարգում անցումային շրջանում, դանդաղեցնում է նրա զարգացումը ու բարդացնում է դրա գործունեությունը: Մի խոսքով, բաղադրիչի կազմակերպված ձևակերպվածությունն ու միատարրությունը, դրա համապատասխանությունը համակարգի կառուցման նպատակներին, հանդես են գալիս, որպես համակարգի ամբողջականության կարևոր գործոններ:

Երբ խոսում ենք որևէ օբյեկտի կառուցվածքի մասին, ապա առանձնացնում ենք այն բաղադրիչների ցանկը, որոնցից որ դա կազմված է, դրանց դիրքը, դրանց կապի բնույթը: Վերևում հիմնավորվում էր պնդումն այն մասին, որ «իրավական համակարգը» չի հանդիսանում այնպիսի կատեգորիա, որն ընդգրկում է իրավունքի կեցության ողջ ոլորտը: Դրա ծավալի մեջ են մտնում իրավական իրականության այնպիսի երևույթներ, որոնք նախատեսված են հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության համար, բնութագրում են նման ներգործության գործընթացն ու արդյունքը:

Ակնհայտ է, որ իրավական իրականության նշված ծավալը չի սահմանափակվում միայն պոզիտիվ իրավունքով: Իսկ ի՞նչ բաղադրիչներ է հարկավոր լրացուցիչ ընդգրկել

<sup>129</sup> Ст'я **Сорокина В.В.** Концепция эволюционного развития правовой системы в переходный период. Дисс. ... д-ра юрид. наук. Екатеринбург. 2003:

«իրավական համակարգ» հասկացության մեջ:

Այս խնդիրն ուսումնասիրող հեղինակների մեծ մասը նշում են իրավաբանական հաստատությունները (Ս.Ս. Ալեքսեն, Ա.Մ. Վասիլև, Վ.Ն. Կուդրյավցև, Լ. Ֆրիդմեն և այլոք): Օրինակ, Ս.Ս. Ալեքսենը նշում է. «Իրավունքի հասկացությունից բացի (պոզիտիվ իրավունքի իմատով), գոյություն ունի նաև իրավաբանական (իրավական) համակարգի հասկացությունը: Դա պոզիտիվ իրավունքն է՝ այլ գործիքների հետ միասին վերցված, որն ապահովում է դրա գործունեությունն ու գոյությունը: Այդ թվում դատարանի, իրավապաշտպան մարիների, օրենսդրական հաստատությունների և այլնի հետ միասին»<sup>130</sup>:

Ամերիկացի իրավագետ Լ. Ֆրիդմենը իրավական բոլոր երևույթները դասակարգում է երեք մեծ խմբի: Առաջինը, որն հեղինակի կողմից կոչվում է «կառուցվածք», ներառում է իրավական համակարգի սկզբունքներն ու իրավական հաստատությունները: Երկրորդը՝ «բնույթը» ներառում է նորմերն ու վարքագծի նմուշները իրավական համակարգի ներսում: Երրորդ խումբը «իրավական կուլտուրան» ներառում է սուբյեկտների վերաբերմունքը իրավունքի և իրավական համակարգի հանդեպ՝ ընդհանրապես, իդեալներն ու հասարակության կյանքի իրավական ակնկալիքները<sup>131</sup>:

Պատկերվում է, որ տվյալ դեպքում զուտ իրավական համակարգը փոխարինվում է իր արտաքին միջավայրի մի մասով: Պետական ու ոչ պետական տեսակի իրավաբանական հաստատությունները ընդգրկվում են «քաղաքական համակարգ» հասկացության մեջ: Իսկ ահա իրավական համակարգի հասկացությունը նախատեսված է ներքին իրավական երևույթների նկատմամբ իրավական պրոցեսների արտահայտման համար: Առավել ևս չպետք է իրավական համակարգի տարրեր համարել սոցիալական այն գործոնները, որոնք ազդեցություն են ունենում իրավունքի ձևավորման ու իրավունքի իրականացման վրա, սակայն չեն կազմում դրանց անմիջական բովանդակությունը: Մանավորապես նկատի են առնվում ավանդույթներն ու իրավական հարաբերությունները: Այսպես Ռ.Զ. Լիվշիցը ենթադրում էր. «Իրավունքը բարդ երևույթ է: Այն ընդգրկում է երեք շերտ, երեք տարր: Առաջին շերտը իրավական

<sup>130</sup> **Алексеев С.С.** Право на пороге нового тысячелетия. М., 2000, с.52-53.

<sup>131</sup> **Фридмен Л.** Введение в американское право. М., 1993, с. 10-11.

գաղափարներն են, իրավական գիտակցությունը, երկրորդը՝ իրավական նորմերն, իսկ երրորդը՝ հասարակական հարաբերությունները»<sup>132</sup>։ Քանի որ «իրավական համակարգ» հասկացությունը իրավաբանական գրականության մեջ կիրառվում է իրավական երևույթների նկատմամբ, ապա դրա ծավալի մեջ կարող են ընդգրկվել միայն այն սոցիալական հարաբերությունները, որոնք ենթարկվել են իրավական կանոնակարգման, այսինքն իրավահարաբերությունները։

Բացառելով իրավական հաստատությունները «իրավական համակարգ» հասկացությունից, պետք է նշել, որ այս սուբյեկտների գործունեությունը (իրավաստեղծություն, իրավունքի կիրառություն և այլն), որպես իրավական ազդեցության գործընթաց ու արդյունք, հանդիսանում են իրավական համակարգի ինքնուրույն բաղկացուցիչները։ Միանգամայն օրինաչափ է իրավական համակարգի կազմում իրավական պրակտիկայի առանձնացումն, ընդհանրապես, որոնք մի կողմից ընկալվում են, որպես իրավունքի վերարտադրման գործունեություն։

Որպես իրավական համակարգի բաղկացուցիչ՝ իրավունքի, իրավագիտակցության և իրավաբանական գրծընթացի հետ միասին, գիտնական-նորարարները դիտարկում են նաև իրավաբանական գիտությունը (Ա.Ֆ. Չերդանցև, Ի.Վ. Կուզնեցով, Ա.Պ. Գլեբով և այլք)։ Այսպես օրինակ, Ա.Պ. Գլեբովը սահմանափակում է իրավական համակարգի բովանդակությունը հետևյալ իրավական երևույթներով, օրենսդրությամբ, իրավաբանական պրակտիկայով և իրավաբանական գիտությամբ<sup>133</sup>։ Կարծիք կա, որ բավարար հիմքեր չկան իրավական համակարգի բաղադրիչներին դասել իրավաբանական գիտությունն՝ ընդհանրապես։ Իրավական համակարգը գիտության համար հանդես է գալիս, որպես արհայատման օբյեկտ, ու նշանակում է, որ գտնվում է դրա սահմաններից դուրս։ Միայն այն չափով, որով որ իրավաբանական գիտությունը հանդիսանում է իրավագիտակցության մասը, այն կարող է ընդգրկվել «հասարակության իրավական համակարգ» հասկացության մեջ։

Մինչ այժմ առանձին հեղինակներ ձգտում են բավականին նեղ ձևով ուրվագծել իրավական համակարգի բաղադրիչային կազմը՝ պաշտոնական, ձևականորեն

<sup>132</sup> См'у Лившин Р.Э. О легитимности закона //Правовое государство, личность, законность. М. 1997, էջ 19:

<sup>133</sup> См'у Российское государство и правовая система. Современное развитие, проблемы, перспективы. Воронеж. 1999, էջ 302:



սահմանված իրավական երևույթների շրջանակում:

Տարբեր հեղինակների կողմից նշվում են իրավական համակարգի տարբեր բաղադրիչներ, զուտ իրավունքը կամ պոզիտիվ իրավունքը, իրավաբանական պրակտիկան, իրավական գաղափարախոսությունը, իրավաընկալումը՝ իրավական հայացքները, իրավագիտակցությունը, իրավական մշակույթը, իրավական տեսությունները, կոնցեպցիաները, իրավական նիհիլիզմը, իրավաստեղծությունը, որպես ճանաչողական ու պրոցեսուալ ձևով ձևակերպված միջոց՝ օրենքների ու իրավական ակտերի նախապատրաստման ու ընդունման համար, իրավական զանգվածը պաշտոնապես սահմանված ու փոխկապակցված իրավական ակտերի միագումարն է, իրավակիրառումը՝ իրավական ակտերի իրականացման ու օրինականության ապահովման մեխանիզմը, իրավունքը, որպես պետության կողմից ստեղծվող ու պաշտպանվող նորմերի միագումար (համակարգ), օրենսդրությունը, որպես այդ նորմերի (նորմատիվ ակտերի) արտահայտման ձև. իրավական հաստատությունների համակարգը, դատական ու իրավաբանական պրակտիկան, իրավական կանոնակարգման մեխանիզմը, իրավաիրականացման մեխանիզմը, օրինականությունն ու իրավակարգը, քաղաքացիների իրավունքներն, ազատություններն ու պարտավորությունները, հասարակությունում ձևավորվող իրական հարաբերությունների ողջ ոլորտը, իրավական գաղափարախոսությունը<sup>134</sup>:

Մշակելով իրավական համակարգի բաղադրիչային կազմի հարցերը, անհրաժեշտ է համարվում հաշվի առնել, նվազագույնը, մի քանի հանգամանք: Առաջին հերթին, այն, որ իրավական համակարգը ընդգրկում է իրավական բոլոր այն երևույթները, որոնք հանդես են գալիս, որպես անհրաժեշտ ու բավարար գործառնական միավորներ՝ նախատեսված հասարակական կյանքի վրա իրավական ներգործության համար ու կազմում են դրա անմիջական բովանդակությունը: Երկրորդ հերթին իրավական համակարգը իր ծավալի մեջ է ընդգրկում իրավունքի ձևավորման, համակարգման, գաղափարական նորացման ու իրագործման գործընթացները: Եվ վերջապես, կարևոր է հաշվի առնել իրավական համակարգի տարրերի ու բաղադրիչների միջև առկա տարբերությունը:

<sup>134</sup> Տե՛ս **Зорькин В.Д.** Цивилизация права и развитие России. М., 2015; Правовые модели и реальность. Отв. ред. **Ю.А. Тихомиров; Е.Е. Рафалюк, Н.И. Хлуденева.** М., 2014, էջ 32-33:

Հաշվի առնելով ներկայացված պատկերացումները, որպես իրավական համակարգի ինքնուրույն տարրեր կարելի է առաջարկել հետևյալները, ա) պոզիտիվ իրավունք, բ) իրավաձևավորում, գ) իրավունքի իրականացում, դ) իրավագիտակցություն: Իրավական համակարգի մեկ կարգային բաղադրիչների մեջ տեղ չի գտնվել իրավաբանական պրակտիկայի համար, քանի որ այս հասկացությամբ ձեռք է բերվում ընդհանրացման բավականին լայն մակարդակ: Իրավաբանական պրակտիկան, իրավագետների կարծիքով, պետք է ընկալվի որպես սոցիալական, հասարակության մտավոր հոգևոր հիմքի վրա հիմնված գործունեություն<sup>135</sup>: Իրավաբանական պրակտիկան, այդպիսով ընդգրկում է իրավունքի վերարտադրման ողջ գործընթացը: Հիմքեր կան իրավական համակարգն ու իրավական մշակույթը չհամարել իրավական իրականության առանձին բաղադրիչ, որն արտահայտվում է իրավական երևույթների ու գործընթացների զարգացման ձեռք բերված մակարդակում: Նման իրավիճակը բնութագրում է իրավական ողջ համակարգն ու դրա յուրաքանչյուր բաղադրիչն առանձին վերցրած՝ հանդես գալով որպես ողջ համակարգի ատրիբուտ (հատկանիշ):

Նման դատողությունները հանգեցնում են իրավական ավելի խորը և ծավալուն համակարգի կառուցման անհրաժեշտությանը: Վերջինը հանդիսանում է բազմահամակարգ ձևավորում կամ բազմահամակարգ համալիր, այսինքն այն բաղադրիչների հանրագումար, որոնցից յուրաքանչյուրն ինքը կարող է դիտարկվել, որպես ամբողջական համակարգ: Իրավական համակարգի կազմի մեջ են մտնում տարբեր մակարդակի բազմաթիվ ենթահամակարգեր (օրինակ իրավունքի համակարգը, իրավունքի ճյուղը, օրենսդրության համակարգը): Իրավական համակարգում կարող են առանձնացվել իրավաձևավորող գործունեության ու իրավակիրառման ենթահամակարգեր: Այնպիսի բաղադրիչի շրջանակում, ինչպիսին «իրավագիտակցությունն» է, գտնվում են նվազագույնը երկու ենթահամակարգ, իրավական գաղափարախսություն և իրավական հոգեբանություն: Իրավական կանոնակարգման մեխանիզմում կարելի է առանձնացնել հիմնական նորմատիվ ենթահամակարգը և անհատական-իշխանական կանխադրույթների ենթահամակարգը: Նշված բոլոր իրավական ենթահամակարգերը վերաբրում են այս կամ այն

<sup>135</sup> См'у **Черненко А.К.** Теоретико-методологическое проблемы формирования Правовой системы общества. Новосибирск: Наука, 2004, էջ 54-55:

ազգային իրավական ենթահամակարգին, դրա՝ զարգացման ու գործունեության ներքին օրինաչափություններին: Սակայն, ցանկացած հասարակության իրավական համակարգ ակտիվորեն փոխազդում է արտաքին միջազգային իրավական համակարգի հետ<sup>136</sup>:

Փոխազդեցության և փոխթափանցման արդյունքում ազգային իրավական համակարգում ձևավորվում են համեմատաբար ինքնուրույն իրավական զանգվածներ: Միջազգային-իրավական նորմերի համագումարը, որոնք գործում են այս կամ այն երկրի տարածքում, կարելի է ընդունել որպես իրավական ենթահամակարգ: Ա.Յու. Մարոչկինը առաջարկում է իրավական համակարգի սահմանումը, որպես «իրավական իրականության բոլոր, ոչ միայն ներպետական, այլ նաև միջազգային իրավունքի հետ կապված երևույթների համալիր»<sup>137</sup>:

Բացի հասարակության իրավական համակարգի բազմաթիվ ենթահամակարգերի բացահայտումից, կարելի է կատարել դրա տարրերի դասակարգումը: Սակայն, այդ տարրերի սպառիչ ցանկը ներկայացնելն անհնարին է թվում: Դրա հետ մեկտեղ չի կարելի հաշվի չառնել, որ անցումային շրջաններում իրավական համակարգի տարբեր բաղկացուցիչներ կորցնում են իրենց վաղեմի տարրերը՝ ընդգրկելով նորերը ու ենթարկվելով հետագա տարբերակման:

Բացելով իրավական համակարգի բաղկացուցիչների կազմը: Իրավագետների մի մեծ խումբ իրավական համակարգը մեկնաբանում է, որպես «իրավունք լայն իմաստով» (մասնավորապես՝ Վ.Ն. Սինյուկով)<sup>138</sup>: Տվյալ մեթոդաբանական խնդրի լուծումը ներկայումս կախված է ոչ այնքան տեսական աբստրակցիաների մակարդակից, որքան հենց իրավաընկալումից: Սակայն իրավական համակարգի հասկացությունը չի վերացնում իրավունքի հասկացությունը, այլև այն իր մեջ է ընդգրկում, որպես իր հիմնական բաղադրիչ: Իրավունքի հասկացության մեջ չեն տեղավորվում իրավական համակարգի բոլոր մյուս բաղադրիչները՝ իրավագիտակցությունը, իրավունքի իրականացումը, իրավագիտակցությունը:

Գիտական գրականության մեջ կարծիք էր արտահայտվում, որ իրավական

<sup>136</sup> Скурко Е.В. Очерки теории права. М., 2013, с. 57-58.

<sup>137</sup> См. у Марочкин С.Ю. Действие норм международного права в правовой системе Российской Федерации. Тюмень, 1998. էջ 431:

<sup>138</sup> Синюков В.Н. Российская правовая система. М., 2010, с. 21-22.

համակարգի յուրօրինակ միջուկը, կենտրոնը հանդիսանում է սահմանադրությունը: Այսպես Դ.Ա. Կերիմովը նշում է. «Համակարգն ունի միջուկ, որի շուրջ միավորվում են, ընդգրկվում ու կառուցվում դրա բաղադրիչները: Այս միջուկը կատարում է նաև ուղղորդիչ, խթանող սկզբի դեր՝ ողջ համակարգի ու դրա յուրաքանչյուր առանձին տարրի կազմակերպման ու գործունեության դեր: Իրավական համակարգի նման միջուկ է հանդիսանում սահմանադրությունը, որի հիման վրա, որին համապատասխան իրականացվում է հասարակական հարաբերությունների իրավական կանոնակարգումը, պետության իրավաստեղծարար ու իրավակիրառական ողջ գործունեությունը»<sup>139</sup>: Համաձայնվելով Դ.Ա. Կերիմովի կողմից ներկայացված իրավական համակարգի «միջուկի» հատկանիշի հետ, նշենք, որ, որպես եզակի բաղադրիչի դեր ընտրված է ոչ ճիշտ կատեգորիա: Բավական է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ սահմանադրությունն, ընդհանրապես չի կարող դիտարկվել, որպես իրավական համակարգի բաղկացուցիչ այն իմաստով, որով օգտագործվում է «բաղկացուցիչ» տերմինը: Սահմանադրությունը հանդիսանում է օրենսդրական համակարգի կենտրոնը, որպես հատուկ ձևով կազմակերպված նորմատիվ զանգված: Իրավական համակարգի իրական կենտրոնը, դրա միջուկը և նորմատիվ հիմքը, անկախ բոլոր ցնցումներից, հանդիսանում է իրավունքը: Կարելի է վստահությամբ պնդել, որ իրավական համակարգի բոլոր բաղադրիչները ածանցված են իրավունքից, այսպես թե այնպս բխում են իրավունքից՝ հասարակական կյանքի վրա իրավական ներգործության փուլում: Իրավունքը հանդես է գալիս, որպես դիտարկվող համակարգի ներընդգրկող ու ամրապնդող սկիզբ:

Իրավական համակարգի կառուցվածքի մեջ առավել «խորը թափանցումը»՝ դրա բաղադրիչային տարրի տեսանկյունից, հանգեցնում է իրավական համակարգի ասպեկտների բացահայտման անհրաժեշտությանը: Սույն ասպեկտների շրջանակում իրավական համակարգի բաղադրիչները խմբավորվում են՝ կախցված համակարգի առջև կանգնած նպատակներից ու իրականացնում են հանրագումարային գործունեություն: Այսպես Լ.Բ. Տիունովայի կողմից մատնացույց են արվում նորմատիվ,

---

<sup>139</sup> Керимов Д.А. Методология права. М., 2005, с. 258.

տեղեկատվական և դինամիկ ասպեկտները<sup>140</sup>: Կարծիք կա, որ հեղինակի կողմից առանձնացվող ասպեկտների անվանումները վկայում են դրանց համար ընդհանուր չափանիշների բացակայության մասին:

«Օրինականությունը Ռուսաստանի Դաշնությունում» (Մ. 1998) կոլեկտիվ մենագրության հեղինակները առանձնացնում են իրավական համակարգի երեք ասպեկտ. ինստիտուցիոն, որը նրանց կարծիքով միավորում է իրավունքի բոլոր սուբյեկտները, նորմատիվը, որն ընդգրկում է նորմատիվ-իրավական գործող բոլոր ակտերը, և հոգեբանական, որն արտահայտում է իրավագիտակցության ոլորտը<sup>141</sup>: Կարծիք կա, որ իրավական համակարգի բազմասպեկտությունը, իրականում շատ ավելի հարուստ է և ենթադրում այլ կողմերի բացահայտում:

Վ.Դ. Պերեվալովը և Ա.Ա. Յուգովը նշում են իրավական համակարգի հետևյալ ասպեկտները, սուբյեկտիվ-էական, որոնք ընդգծում են իրավունքի սուբյեկտների կարգավիճակը, որպես իրավական համակարգի համակարգաձևավորող նյութական գործոններ, մտավոր-հոգեբանական, որոնք ընդգրկում են իրավաընկալումն ու իրավագիտակցությունը (անհատական ու հասարակական), նորմատիվ կանոնակարգող (իրավական նորմերը, որոնք կազմում են նորմատիվ իրավունքը), կազմակերպական-գործառնականները, որոնք ընդգրկում են իրավաբանորեն ձևակերպված կապերն ու հարաբերությունները, իրավունքի իրականացման ձևերը, մարդկանց իրավական վարքագծի տարբեր ձևերը, պետության ու հասարակության իրավաստեղծագործական ու իրավակիրառական գործունեությունը, և վերջապես սոցիալ-արդյունավետ ասպեկտը, որն արտացոլում է հասարակական կյանքի վրա իրավական ներգործության սոցիալական արդյունքները<sup>142</sup>: Իրավական համակարգի տվյալ հատկանիշը, մեր կարծիքով, կարող էր դիտարկվել, որպես համընդգրկուն: Կարծիք կա, որ կազմակերպական-գործառնական ասպեկտը, չի կարող իր մեջ ընդգրկել պետության և հասարակության իրավաստեղծագործական գործունեությունը, քանի որ իրավունքի աղբյուրների մի ամբողջ շարք ձևավորվում է որևէ կազմակերպական գործողություններից դուրս: Այդ պատճառով էլ բազմազան

<sup>140</sup> Тиунова Л.Б. О понятии правовой системы //Правоведение. 1985, N 1, с. 29

<sup>141</sup> Законность в Российской Федерации. М., 1998, с. 46-47

<sup>142</sup> Первалов В. Д., Югов А. А.. Проблемы формирования правовой системы в свете Конституции РФ 1993 г. // Российский юридический журнал. 1998 N1, с. 9

գործընթացների արտահայտման համար կարելի է առանձնացնել իրավական համակարգի գենետիկ ասպեկտը:

Այս ամենի հետ կապված կաելի է առաջարկել իրավական համակարգի նման ցանկ, **գենետիկ**, որը բնութագրում է իրավունի ձևավորման գործընթացները, **նորմատիվ**, որն հաշվի է առնում իրավական համակարգի պաշտոնականացված բովանդակությունը, **իրավաբանական-մտավորական**, որն ընգրկում է իրավագիտակցության ողջ հարստությունը:

Իրավաբանական գրականության մեջ նշվում են նաև իրավական համակարգի ստատիկ ու դինամիկ ասպեկտները: Ռազմավարական ասպեկտին հեղինակները դասում են տվյալ հասարակությանը հատուկ իրավական նորմերի, սկզբունքների, ինստիտուտների ու հայացքների միագումարը, իսկ իրավական համակարգի դինամիկայում առանձնացնում են իրավաստեղծագործությունը, իրավունքի իրականացումը, ներառյալ իրավահարաբերությունների ծագումը, փոփոխությունը և դադարումը<sup>143</sup>: Սակայն անցումային իրավական համակարգի երևույթը կասկածի տակ է առնում արմատացած այս պատկերացումները: Անցումային շրջանում անցումային շրջանի բոլոր բաղադրիչները չափազանց շարժական են ու փոփոխական՝ դինամիկ զարգացող միջավայրի պայմաններում: Եթե անգամ, այսպես կոչված, ստատիկ ասպեկտում դիտարկենք իրավական համակարգի տարածական կառուցվածքը, իսկ «դինամիկում»՝ ժամանակայինը, ապա կտեսնենք, որ դինամիզմն առկա է, թե մի և թե մյուս տեղում: Իրավական տարածությունը անցումային պայմաններում գտնվում է անընդհատ փոփոխության մեջ: Գործող նորմատիվ-իրավական ակտերում ընդգրկվում են բազմաթիվ, բազմակողմ փոփոխություններ ու լրացումներ, փոխվում է իրավաստեղծ մարմինների իրավասությունները, անկայուն է նաև իրավական կանոնակարգման առարկան: Ընդ որում, իրավական կայուն համակարգի նկատմամբ ստատիկ ու դինամիկ ասպեկտների առանձնացումը ևս խնդրառու է թվում: Իրավական համակարգն, ընդհանուր առմամբ, գործում է, կատարում է որոշակի դեր: Գործում է ոչ միայն իրավական համակարգը, այլ նաև դրա յուրաքանչյուր բաղկացուցիչ: Իրավական համակարգում չգործող իրավական բաղկացուցիչներ լինել

<sup>143</sup> Актуальные проблемы теории государства и права. Под. ред. **А.И. Бастрыкина**, М., 2014. с. 226-227.

չեն կարող: Համակարգի հիմնարար որևէ հատվածի անգործությունը կանգնեցնում է ողջ համակարգի աշխատանքը կամ, նույնիսկ քայքայում է վերջինը, քանի որ պարզ ամբողջականությունը պահպանելով՝ այն զրկվում է համակարգության որակից. Իրավական գործող համակարգի մասին, մենք խոսում ենք, ոչ թե որպես տվյալ պահին լճացած որոշակի համակարգի, այլ որպես դինամիկ համակարգի մասին, որը գտնվում է մշտական զարգացման մեջ: Այս պատճառով, դինամիկայում հարկավոր է դիտարկել և իրավական համակարգն ամբողջությամբ և դրա դրա յուրաքանչյուր բաղադրիչն առանձին վերցրած: Միայն այսպես է համակարգը բացահայտում իր գործունեությունը, դրսևրում է դրան հատուկ զարգացման հնարավորությունները:

Համակարգի կառուցվածքի ներքո հասկանում ենք երևույթների որոշակի համալիր, որոնք կապի մեջ են գտնվում միմյանց հետ: Կառուցվածքի սահմանումը բաղադրիչների կապի ձևի միջոցով, թույլ է տալիս ցանկացած համակարգում սահմանել ներքին ընդհանրությունը, ինտեգրատիվ, ամբողջական, որակական հատկանիշները: Սերտ կապերի ու հարաբերությունների շնորհիվ համակարգի բաղադրիչների խումբը վերածվում է կապակցված ամբողջության, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ, վերջին հաշվով կապակցվում է բոլոր մյուս բաղադրիչների հետ, ու դրա հատկանիշները չեն կարող ընկալվել՝ առանց հաշվի առնելու այդ կապերը:

Որպես համակազմակերպող գործոն, իրավաբանական գրականության մեջ, սովորաբար, հիշատակում են բոլոր երևույթները, ուժերը, իրերը, կապերը և հարաբերությունները, որոնք էլ հանգեցնում են համակարգի ձևավորմանը<sup>144</sup>: Համակարգաձևավորող կապերը կարելի է դիտարկել, որպես համակարգի ամբողջականության հատկանիշն ապահովող, սերտ հարաբերություններ մեկ բաղադրիչների միջև, ինչպես նաև այդ համակարգի ու արտաքին միջավայրի միջև: Սակայն, արդյո՞ք կարելի է համակարգի ներսում առկա բոլոր կապերն ու արտաքին միջավայրի հետ այդ համակարգի բոլոր կապերը անվանել համակարգաձևավորող: Իրավական համակարգի բաղադրիչների փոխգործակցությունը համակարգի ներսում ձևավորում են դրա ինտեգրատիվ հատկանիշները, իսկ համակարգի

<sup>144</sup> См. у Актуальные проблемы правовой теории государства. Под. ред В.П. Малахова, А.И. Клименко. М., 2013. էջ 86-87:

փոխգործակցությունն արտաքին միջավայրի հետ, ընդհանուր առմամբ, ապահովում է համակարգի հարմարեցված գոյությունը, գործունեությունը ու զարգացումը: Համակարգի ներքին կապերում դրա բաղադրիչները բացահայտում են իրենց ընդհանրությունը, համակարգի արտաքին փոխհարաբերությունները ենթադրում մեն վերջինի հակադրությունը արտաքին միջավայրի հետ, ինչն ընդգծում է համակարգի բնույթն ու բնութագրում այն, որպես ինքնուրույն ու ամբողջական ձևավորում: Այսպիսով, համակարգի բոլոր կապերը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին, վերջին հաշվով հանդիսանում են համակարգաձևավորող, քանի որ առաջացնում են դրա ամբողջականությունն ու ինքնուրույնությունը՝ արտաքին միջավայրի նկատմամբ:

Իրավական համակարգի գործող բնույթը պայմանավորում է փոխկապակցվածությունն ինչպես դրա ներքին բաղադրիչների (փոխազդեցության ներքին մեխանիզմ), այլ նաև տվյալ համակարգի փոխհարաբերությունները միջավայրի հետ (արտաքին մեխանիզմ):

Համակարգի ներքին կապերի ներքո կարելի է ենթադրել այն փոխհարաբերությունները, որոնք ձևավորվում են համակարգում միավորված առանձին բաղադրիչների, բաղադրիչների խմբերի կամ ողջ համակարգի միջոցով: Այս ներքին կապերը միասին վերցված, առաջ են բերում իրավական համակարգի ինքնասահմանում՝ դրա զարգացման յուրաքանչյուր կոնկրետ շրջանում:

Նախկինում, փորձեր էին արվում դասակարգել իրավական համակարգի բազմազան ներքին կապերը:

Այսպես, իրավական համակարգի սուբորդինացիայի բաղադրիչների կապը բացահայտվում է դրանց աստիճանակարգում: Իրավական համակարգի տվյալ բաղկացուցիչ հատկանիշը ենթադրում է համակարգում բաղադրիչների համաենթակայությունը, դրանց համեմատական ոչ հակասականությունը, համաձայնեցվածությունը: Իրավական համակարգի միագումար կառուցվածքը բաժանվում է առանձին կառուցվածքային մակարդակների, որն ընդգրկում է հատուկ, տվյալ մակարդակին պատասխանող տարրերի խումբը: Իրավական համակարգում յուրաքանչյուր բաղադրիչ իր գործառնական հատկանիշները դրսևորում է ոչ միայն իր կառուցվածքի միջոցով, այլև կապերի մեջ մտնելով այլ մակարդակների բաղադրիչների



հետ: Իրավական համակարգի ներսում վերը նշված հարաբերությունների բացահայտումը թույլ է տալիս այն արտահայտել բազմամակարդակ, աստիճանակարգի բաղադրիչների ներքին համաձայնեցված հատկանիշներն ու դրանք միացնող կապերը:

Աստիճանակարգային կառուցվածքը հատուկ է նաև հենց հարաբերություններին ու իրավական համակարգի կապերին, բաժանվող հարաբերություններն ու կապերը կարող են տեղակայվել ավելի տարրական հարաբերությունների ու կապերի վրա, ու հենց դրանց հիման վրա էլ ձևավորվում են իրավական ենթահամակարգերը<sup>145</sup>: Արդյունքում, իրավական համակարգն հանդես է գալիս, որպես բարդ աստիճանակարգային ձևավորում, որում առանձնացվում են տարբեր մակարդակներ, տարբեր մակարդակների միջև հարաբերությունների տարբեր տեսակներ: Համակարգի աստիճանակարգային կառուցվածքի հետևանք է հանդիսանում ավելի ցածր մակարդակի համակարգերը ավելի բարձր մակարդակի հարաբերություններում ընդգրկելու հնարավորությունը:

Իրավական համակարգի բաղադրիչների աստիճանակարգային սուբորդինացիան կոչված է համակարգի կարգավորվածության տարբեր մակարդակները միավորել մեկ միասնական համակարգային ձևավորման մեջ: Սուբորդինացիայի ասպեկտները իրավական ոլորտում բազմազան են:

Սուբորդինացիայի կապը ուժեղացնում ու ամրապնդում է իրավական համակարգի բաղադրիչների տեղի ունեցող տարբերակումը: Տվյալ կապը առանձին բաղադրիչների փոխկապակցվածությունը համակարգում բացահայտում է այնպես, որ որևէ մեկ տարրի վիճակի փոփոխությունը ազդեցություն է ունենում մյուս բաղադրիչների վիճակի փոփոխության վրա և, ընդհանուր առմամբ, արտացոլվում է համակարգի վարքագծի վրա: Իրավական համակարգի բաղադրիչների սուբորդինացիայի կապը պայմանավորվում է իրավաստեղծ մարմինների համակարգով, պետության բնույթով, իսկ ավելի ստույգ՝ իրավական ներգործությանը ենթարկվող հասարակական հարաբերությունների աստիճանակարգով: Կարելի է պնդել, որ իրավական համակարգի համակարգաձևավորող կապերը սահմանվում են

---

<sup>145</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ.** Տրամաբանություն: Երևան, 2015, էջ 73-74:

դրա կողմից կանոնակարգվող հասարակակն հարաբերություններով: Այս պատճառով իրավական համակարգի բաղադրիչների միավորումը ինտեգրատիվ ամբողջության մեջ, կրում է օբյեկտիվ բնույթ:

Եթե սուբորդինացիայի կապերը արտահայտում են իրավական համակարգի ուղղահայաց կանոնակարգվածությունը, ենթակայությունն ու համաենթակայությունը, ապա կոորդինացիայի կապերը՝ հորիզոնական կանոնակարգվածությունը: Կոորդինացիայի կապերն էլ հենց կոչված են մինչև տարբերական որոշակի սահմանը համակարգն ինտեգրել՝ բաղադրիչների փոխադարձ լրացվածության միջոցով: Բարդ, սահմանափակ համակարգում, բաղադրիչն իրենից ներկայացնում է միաժամանակ պատճառն ու հետևանքը: Լինելով պատճառ, այսինքն ազդելով այլ մասերի վրա, տվյալ բաղկացուցիչը միևնույն ժամանակ հանդիսանում է նաև հետևանք, քանի որ դրա գործառույթը հանդիսանում է այն գործողությունների արդյունքը, որի պատճառը հանդիսանում է հենց ինքը: Արդյունքում «բաղադրիչ» հասկացությունը սահմանվում է կախված ամբողջից, համակարգի մյուս բաղադրիչների հետ կոորդինացիայից: Կոորդինացիայի կապերը իրավունքում իրականացվում են միասնական տերմինաբանության օգտագործման շնորհիվ, իրավունքի ընդհանուր դրույթներով ու սկզբունքներով, իրավունքի կանոնակարգող ու պաշտպանիչ, նյութական ու պրոցեսուալ նորմերի համադրությամբ:

Կառավարման կապերը իրավական համակարգում կազմում են ինքնակարգավորման որոշակի մեխանիզմ (ինքնակազմակերպման)<sup>146</sup>: Այս կապերի նշանակությունը հանգեցվում է իրավական համակարգի ներքին հակասությունների վերացմանը (մասնավորապես, իրավական ակտերի միագումարի ու դրանց իրականացման միջև, իրավագիտակցության և իրավաձևավորման միջև և այլն): Որպես տվյալ տեսակի կապերի մարմնավորում հանդես են գալիս իրավունքի օպերատիվ և կոլիզիոն նորմերը: Դրանք չունեն անմիջականորեն կանոնակարգող նշանակություն, այլ նվիրված են իրավունքի համակարգի այլ նորմերին, դրանց գործողության կարգին:

Իրավական համակարգի բաղադրիչների կապերի մեջ կարևոր տեղ են

---

<sup>146</sup> Տե՛ս **Յուրի Սուվարյան**, Տնտեսագիտություն, գիտություն, կրթություն: Երևան, 2014, էջ 182-183:

զբաղեցնում կոռեկացիոն կապերը: Դրանց բնույթը կայանում է նրանում, որ այս կամ այն պատճառի կրիչը հանդիսացող բաղադրիչը մյուս բաղկացուցիչները մատնացույց է անում ոչ թե ուղղակիորեն, այլ նաև երկրորդական համարվող բաղադրիչների ազդեցության տակ: Սա նշանակում է, որ համակարգի ցանկացած բաղադրիչ մատնացույց է արվում ոչ միայն դրա հետ անմիջականորեն կապված բաղադրիչների կողմից, այլ այն բաղադրիչների կողմից, որոնց հետ կապերը կրում են միջնորդավորված բնույթ: Օրինակ, իրավունքի գործողությունը ոչ այնքան կիրառվող նորմատիվ-իրավական ակտերի բնույթով, որքան բնակչության իրավական ակնկալիքների բավարարման աստիճանով: Կոռեկացիան իրավական համակարգի շարժունակության ու հավասարակշռության գործոններից մեկն է: Հավասարակշռությունն է այն պատճառով, քանի որ մի բաղադրիչի փոփոխությունը առաջացնում է մյուսի փոփոխությունը, սակայն այս փոփոխությունները դուրս չեն գալիս որոշակի միջին մեծության սահմաններից: Փոփոխություններն, այդպիսով ընթանում են տվյալ որակի սահմաններում: Այս փոփոխությունները, սակայն, համակարգը բերում են են ոչ թե խիստ սահմանված, այլև հավանական իրավիճակի, ինչն առաջ է բերում մշտական շարժում, համակարգի տատանումը որոշակի միջինացված չափանիշների շուրջ: Սրանում է կայանում արտաքին ու ներքին տատանումներին՝ իրավական համակարգի ճկուն պատասխանի գործոններից մեկը:

Իրավական համակարգին հատկանշական են նաև տեղեկատվական - հաղորդակցական կապերը: Տեղեկատվական հոսքերը մշտապես շարժվում են մի բաղադրիչից դեպի մյուսը, առաջացնելով իրավական համակարգի որոշակի ընդհանուր տրամադրվածություն: Տեղեկատվական կապերի տարանջատումը համակարգի բաղկացուցիչների միջև, միշտ էլ հանգեցնում էր այլ կապերի կորստին, համակարգի անկմանը, որպես գործող և ֆիզիկական ամբողջություն:

Բաղադրիչներից բացի իրավական համակարգն ունի նաև որոշ իրավիճակներ, որոնք այն բնութագրում են ամբողջությամբ և դրա առանձին տարրերը: Սրա հետ կապված հարկավոր է ընդունել իրավական համակարգի կապերի վիճակը (մասնավորապես իրավական համակարգի իրավիճակի կապը՝ ժամանակի հաջորդական պահերին, իրավական համակարգի վիճակի և դրա առանձին

բաղադրիչների կամ բաղադրիչների խմբի միջև կապը):

Իրավական համակարգին հատուկ համակարգաձևավորող կապերի գինանոցը հարուստ է ու չի ենթարկվում նկարագրության մեկ ուսումնասիրության շրջանակներում: Նշվածներից բացի, հարկավոր է նշել նաև տարածական-ժամանակային, անհրաժեշտ ու պատահական, անմիջական ու միջնորդավորված կապերը, որոնց ուսումնասիրությունն ավելի տեղին է հատուկ ուսումնասիրության մեջ:

Իրավական համակարգը գոյություն ունի որոշակի միջավայրում, սակայն չի լուծվում դրանում, այլ հակադրվում է դրան՝ պահպանելով իր համակարգային հատկանիշները: Այս պատճառով էլ իրավական համակարգի ուսումնասիրությունն ավելի ամբողջական կլինի՝ դրա արտաքին, համակարգաձևավորող կապերի ուսումնասիրության, ինչպես նաև այն պայմանավորող հասարակության տնտեսական, սոցիալական ու հոգևոր պայմանների միագումարի դիտարկման դեպքում: Որպես իրավական համակարգի միջավայր հանդես է գալիս բոլոր օբյեկտների միագումարը, որի բաղադրիչների փոփոխության վրա էլ հենց ազդեցություն է ունենում տվյալ համակարգը: Իրավական համակարգում, դրան հատուկ ներքին կապերի բազմազանության հետ մեկտեղ, առկա է արտաքին խումբ: Իրավական համակարգի արտաքին համակարգաձևավորող կապերի ներքո կարելի է հասկանալ արտաքին միջավայրի հետ դրա այնպիսի կապերը, որոնց դեպքում միջավայրի գործոնները նպաստում են իրավական համակարգի ծագմանն ու զարգացմանը:

Համակարգերի տեսության տերմինաբանությամբ իրավական համակարգը հանդիսանում է «բաց» համակարգ, քանի որ սահմանվում է արտաքին միջավայրով, կախված է դրանից ու զարգանում է դրա հետ մեկտեղ: Իրավական համակարգի գործունեությունը ակտիվ ներգործություն է ենթադրում արտաքին միջավայրի հետ:

Հասարակության համակարգայնությունը դիտարկելով համակարգա-ֆունկցիոնալ ասպեկտում, կարելի է բացահայտել, որ իրավական համակարգն իրենից ներկայացնում է պետականության բաղադրիչներից միայն մեկը՝ հասարակության տնտեսական կառուցվածքի, քաղաքական համակարգի, սոցիալական ու մշակութային կազմակերպվածության հետ մեկտեղ: Իրավական համակարգը, հարաբերությունների բազմությամբ կապված է արտաքին միջավայրի համակարգային ու ոչ համակարգային

ամենտարբեր ձևավորումների հետ: Իրավական համակարգի գործունեության անցումային պայմանների նկատմամբ կարևոր է ընգծել, որ իրավունքը հանդես է գալիս արմատական վերափոխումներին նպաստող բազմաթիվ գործոններից միայն մեկը:

Իրավական համակարգի ռացիոնալության որոնումներում, կարևոր է ուսումնասիրել ու հաշվի առնել տվյալ համակարգի փոխհարաբերությունը այլ համակարգերի հետ, որոնք առաջինի հանդեպ հանդես են գալիս, որպես արտաքին միջավայրի գործոն: Այդ պատճառով իրավական համակարգի ուսումնասիրության ժամանակ, հարկավոր է պարզել դրա տեղը, դերը և նշանակությունը՝ տնտեսական, մշակութային, քաղաքական ու սոցիալական բոլոր երևույթների համադրությամբ:

Իրավական համակարգի համակարգային-հաղորդակցական ասպեկտը բացահայտում է վերջինի կախվածությունը ոչ իրավական երևույթներից ու գործընթացներից: Իրավական համակարգը կոչված է ներգործել հասարակական կյանքի վրա ու ստիպված է հաշվի նստել նրա վիճակի հետ: Այդ պատճառով էլ իրավունքը հնարավոր չէ ինքնին հասկանալ, այն ինքնաբավարար չէ: Իրավական համակարգում արտացոլվում է հասարակության զարգացման խորը տրամաբանությունը: Իրավական ոլորտում ընթացող գործընթացների վերլուծությունը մեթոդաբանորեն կապված է հասարակական հարաբերությունների միագումարի այն առանձնահատկությունների ուսումնասիրության հետ, որը հանդիսանում է սոցիալական պահանջմունքների կրիչը՝ իրավական կանոնակարգման ոլորտում: Այստեղից բխում է, որ իրավական համակարգի համակարգային բնույթը սահմանվում է հասարակական հարաբերության համակարգային այն հատկանիշի միջոցով, որպես որի նորմատիվ արտացոլանք այն հանդես է գալիս: Իրավական համակարգի կառուցվածքի բարդությունը հանդիսանում է միայն դրանք ձևավորող հասարակական հարաբերությունների բարդության արտացոլանքը: Տվյալ համակարգը գործունեության ու զարգացման ընթացքում իր վրա է կրում հասարակական հակասությունների տարբեր տեսակների ազդեցությունը: Իրավական ողջ համակարգի փոխհարաբերությունները արտաքին մաջավայրի հետ, էապես տարբերվում է արտաքին միջավայրի հետ տվյալ համակարգի փոխազդեցությունից: Չէ՞ որ

համակարգի որակը տարբերվում է այն կազմող տարրերի որակի պարզ միագումարից: Արտաքին միջավայրն իրավական համակարգի վրա գործում է ինչպես խթանող, այնպես էլ հալածող ազդեցություն, որն ինչպես ամրապնդում, այնպես էլ քայքայում է այն: Ավելին, շրջակա միջավայրը կարող է հանգեցնել գործունեության նոր պայմաններին համակարգի ամբողջական անհարմարվողականությանը: Համակարգի վերաբերմունքը միջավայրի նկամամբ, միջավայրի հետ փոխհարաբերությունների բնույթը իրավական համակարգի կայունության, ամրության կարևոր ցուցանիշ է, քանի որ համակարգի ամբողջականությունը պարտադիր կերպով ինքնուրույնություն է ենթադրում արտաքին պայմաններից: Արտաքին միջավայրը կարող է արագացնել կամ դանդաղեցնել իրավական համակարգում ընթացող գործընթացները, դրանց տալ տարբեր ձևեր ու հատնակիշներ, կամ էլ՝ դադարեցնել դրանք: Եթե իրավական համակարգի արտաքին միջավայրում գործում են բավականին կայուն սոցիալական գործոններ, ապա համակարգի վարքագծում ևս երկար ժամանակ կպահպանվի կայունություն: Արտաքին միջավայրի հետ համակարգի ազդեցությունից է էապես կախված տվյալ համակարգի զարգացման ընդհանուր ուղղությունը՝ պրոգրեսիվ կամ ռեգրեսիվ:

Միջավայրը իրավական համակարգերի սահմանման կարևոր գործոն է, սակայն այդ տարբերակման բնույթը չի տարբերվում միանշանակությամբ: Հակադարձ կապերի միջոցով ակտիվորեն ներգործելով արտաքին միջավայրի վրա՝ իրավական համակարգն ունակ է չեզոքացնել իր համար վտանգավոր բոլոր գործոնները՝ մեղմացնելով հասարակական հակասությունները: Մյուս կողմից անգամ նոր պայմանների համար ոչ պիտանի իրավական համակարգը կարող է ինչ-որ ժամանակ պահպանվել՝ զարգացման պահպանողական տենդենցների վերարտադրման ուժով: Իրավական համակարգը հնարավորություն ունի կանոնակարգել սեփական միջավայրի սահմանները՝ փոխելով այն պայմանների միագումարը, որոնք ազդեցություն են գործում իրավական իրականության վրա: Անցումային շրջանում միջավայրի գործոնների փոփոխությունը միանգամայն ինտենսիվ է, ընդ որում չափազանց կարևոր է տվյալ գործընթացը չթողնել իրավական կանոնակարգումից դուրս՝ հասարակական գործընթացների կառավարումն իրականացնելու նպատակով:

Արտաքին, համակարգաձևավորող կապերի ուժով, իրավական համակարգի քաղաքիչներն ստանում են որոշակի գենետիկ հիմք, այսինքն սահմանվում են ոչ թե մեկը մյուսով, այլ նաև նրանով, ինչը նրանց համար ընդհանուր պատճառ է հանդիսանում: Արտաքին միջավայրի շատ գործոններ, ձեռք են բերում իրավաձևավորող նշանակություն, քանի որ դրանցում ստեղծվում ու բացահայտվում է իրավական կանոնակարգման ապագա օբյեկտը: Այս ամենի հիման վրա դիտարկվող համակարգի արտաքին կապերը կարելի է գենետիկ համարել:

Արտաքին միջավայրի արտաքին այն գործոնների մեջ, որոնք անմիջական պատճառա-հետևանքային կապի մեջ են գտնվում իրավական համակարգի կազմակերպման ու գործունեության պայմանների հետ, կարելի է առանձնացնել տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային-գաղափարական, ազգային, աշխարհագրական, հոգեբանական (ինչպես ներազգային, այնպես էլ միջազգային կարգի) գործոնները: Արևմտյան գիտության մեթոդաբանությունը ժխտում է տնտեսական գործոնի որոշիչ նշանակությունը: Սակայն, դժվար թե, կարելի է վիճարկել այն հանգամանքը, որ առկա ֆինանսա-տնտեսական ու նյութա-կազմակերպական ռեսուրսները հանդես են գալիս գործող իրավական կանոնակարգման կարևորագույն երաշխիքների դերում: Օբյեկտիվ տնտեսական օրինաչափությունների նման անտեսումը իրականում հնարավոր է, սակայն որպես սուբյեկտիվիզմի ու պատահական գործոնների դրսևորում: Հասարակական զարգացման գործում որպես ճգնաժամի աղբյուր հանդես է գալիս այն տնտեսությունը, որը հիմնված է սեփականության մասնավոր ձևի վրա ու ազդեցություն է ունենում շահերի կառուցվածքի ու բախման վրա: Կուլտուրայից զուրկ մարդը չի կարող հաղորդակցվել քաղաքակրթության ձեռքբերումների հետ և զրկված լինելով կենսամիջոցներից, պարզապես կկործանվի: Այդ պատճառով արտաքին կապերի տնտեսական գործոնը գրեթե որոշիչ է համարվում: Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները անտեսված են համարվում այն երկրներում, որտեղ տնտեսությունը գործում է թույլ և անարդյունավետ և ուղղորդված է դեպի նեղ, շրջանակային շահերը:

Քաղաքական ու իրավական համակարգերի սերտ կապերը հանգեցնում են

այնպիսի երևույթների ձևավորմանը, ինչպիսիք է քաղաքա-իրավական ռեժիմը: Քաղաքական հոսանքը, կուսակցությունների ու հասարակական շարժումների ծրագրերը, պառլամենտի ֆրակցիաների դիրքորոշումները հանդես են գալիս, որպես իրավական ոլորտում փոփոխությունների նշանակալի հարթակ:

Սկսած 1990-ականներից իրավաբանական ուսումնասիրություններից սկսեցին անհետանալ սոցիալական գնահատականները: Սա, բացասական ազդեցություն ունեցավ ինչպես հասարակության սոցիալական կազմակերպման օրինաչափությունների, այնպես էլ իրավական համակարգի վրա: Բացահայտ գիտական վերլուծության փոխարեն աշխատանքներում սկսեցին ի հայտ գալ դատողություններ քաղաքացիական հասարակության, որպես պետությունից առանձնացված սոցիումի մասին: Լոբլով հանցագործության ու կոռուպցիայի մասին իրական պայմանների մասին, հեղինակների մի մեծ խումբ փորձում էր իրավական դաստիարակության միջոցով բացատրել բացասական այս երևույթների աճը և այլն: Իրավական համակարգը միանգամայն հիվանդագին է արձագանքում սոցիալական նոր գործոնների ի հայտ գալուն: Հասարակության բացության աստիճանի ավելացումը կամ դրա շերտավորման փոփոխությունը միշտ էլ առաջ են բերում իրավական համակարգի բարձր դինամիզմ<sup>147</sup>: Արտաքին համակարգաձևավորող սոցիալական ասպեկտում բացահայտվում է տվյալ իրավական համակարգի համապատասխան տեսակը՝ կախված նրանից, թե ինչ սուբյեկտ է դրված դրա կենտրոնում՝ մարդ, հասարակություն, պետություն կամ ստվերային խմբավորում:

Միջազգային միջավայրի գործոնների նշանակությունը կարող է արտահայտվել արտասահմանյան փորձի փոխառության, արտաքին ազդեցության ներքո իրավական վերափոխությունների արագացման մեջ և այլն: Իրավական համակարգի արտաքին կապերը, այս հարթությունից պետք է հաշվի առնեն ավանդույթները, ազգային յուրահատկությունները և ներպետական իրավունքի այլ առանձնահատկություններ, հակառակ դեպքում փոխադարձ հարստացումը ձեռք է բերվում ուրիշի փորձի ոչ քննադատական փոխանցումով:

---

<sup>147</sup> Տե՛ս **Պողոսյան Գևորգ**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին: Երևան, 2006, էջ 51-52, **Հարությունյան Մանուկ**, Հայ Հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը: Երևան, 2014, էջ 474-475:



Միջավայրի հետ ակտիվ փոխազդեցության արդյունքում ի հայտ է գալիս կապերի նոր տեսակ՝ համակարգի ու միջավայրի միջև հակադարձ կապերը: Իրավական համակարգը ոչ միայն ձևավորվում ու զարգանում է արտաքին միջավայրի ազդեցության ներքո, այլ անհրաժեշտության դեպքում ինքն է կառավարում այն ու պաշտպանում արտաքին միջավայրը: Հակադարձ կապը հանդես է գալիս, որպես կառավարման հիմնական սկզբունք, որի դեպքում իրականացվում է համակարգում տեղի ունեցող փոփոխությունների հակադարձ ազդեցությունը՝ դրանք առաջացնող պատճառների նկատմամբ: Արտաքին համակարգաձևավորող կապերի այս տարատեսակի հատկանշական կողմը կայանում է նրանում, որ դրանցում դիտարկվում է փոխալսմանավորվածություն իրավական համակարգի և արտաքին միջավայրի սեգմենտների միջև: Արդյունավետ իրավական համակարգն ունակ է հակազդել բացասական սոցիալական երևույթների վրա, խթանել ցանկալի հարաբերությունների ի հայտ գալը, կայունացնել հասարակական հարաբերությունները: Այս իմաստով իրավական համակարգն իրեն է հարմարեցնում արտաքին միջավայրը: Բացի այդ, համակարգն ազդելով արտաքին միջավայրի վրա, հակադարձ կապով ձեռք է բերում տեղեկատվություն այդ ներգործության վերաբերյալ: Այսպիսով, իրավական ներգործության արդյունքները հասարակության կյանքի տարբեր ոլորտների վրա կարող են շտկվել: Ստացված տեղեկատվության հիման վրա իրավական համակարգն իր ներկա վիճակը «հասցնում է» մինչև պահանջվող, նպատակային մակարդակին: Հակադարձ կապը կարելի է համարել համապատասխանության կապ, քանի որ դրանք ցույց են տալիս իրավական համակարգի առկա շեղումների մակարդակը կամ իրավական համակարգի առկա վիճակի մոտեցումը դրա նպատակային իրավիճակի զարգացման մակարդակին:

Արտաքին միջավայրի հետ իրավական համակարգի ուղիղ և հակադարձ կապերի ուսումնասիրությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ հասարակության բարեփոխման խնդիրը անցումային շրջանում, չի կարող հաջողությամբ լուծվել առանց հասարակության բոլոր ոլորտների վերափոխման: Միակ ունիվերսալ գործիքը, որն ունակ է գործել նման համակողմանի կանոնակարգող ազդեցություն հասարակության կենսագործունեության առաջատար ոլորտների վրա, հանդիսանում է իրավունքը:

Այսպես, իրավական համակարգը համակարգության որակ է ձեռք բերում իր արտաքին ու ներքին համակարգաձևավորող կապերի շնորհիվ: Իրավական համակարգի բաղադրիչների միջև կապը սահմանափակ է, նպատակահարմար է ու հիմնված է տվյալ համակարգի բաղադրիչների՝ միմյանցից և արտաքին միջավայրի գործոններից կախված լինելու հանգամանքից: Բաղադրիչների սահմանափակ կապի նման սերտ փոխհարաբերությունների առկայությունը պայմանավորում է արտաքին միջավայրի հանդեպ՝ համակարգի ինքնուրույն հանդես գալու հնարավորությունը: Իրավական համակարգի բաղադրիչների կապն էապես ավելի կայուն է, քան այլ երևույթների հետ այդ համակարգի կապը: Սակայն արտաքին կապերը մատնացույց են անում դրա միջհամակարգային կապերի բնույթը, որոնք ձևավորվում են ի պատասխան արտաքին միջավայրի որոշիչ ազդեցության:

Իրավական համակարգի կառուցվածքը խիստ կանոնակարգված է հադիսանում, եթե բոլոր բաղադրիչները միմյանց հետ կապված են խիստ կապվածությամբ, գոյություն ունի ենթահամակարգերի խիստ սուբորդինացիա և ողջ համակարգը գործում է խիստ սահմանված ալգորիթմով: Նման համակարգում վարքագծի ընտրություն չունեն, դրանց գործառույթը սահմանված են, բացառվում է ցանկացած ավտոնոմություն:

Կապերի որակն իրավական համակարգում նախասահմանում է դրա կազմակերպվածության աստիճանը: Իրավական համակարգի կայուն, օպտիմալ, համաձայնեցված կապերը, սահմանվում են նախ և առաջ դրանց կայունությամբ: Չնայած այն հանգամանքին, որ կապերը չեն կարող կրել ամրապնդված, մեկնընդմիջտ սահմանված բնույթ, ապա այս կան այն իրավական համակարգի ամբողջականությունը կախված է դրա համակարգաձևավորող կապերի կայունությունից: Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ իրավական համակարգի ներքին կապերը ավելի քիչ փոփոխությունների են ենթարկվում, քան արտաքինները: Սա կարելի է բացատրել իրավունքի ավելի շատ պահպանողականությամբ՝ համեմատած իրեն շրջապատող իրականության երևույթների: Իրավական համակարգի կապերն ու հարաբերությունները պետք է ոչ միայն կայուն, այլ նաև նպատակահարմար, օպտիմալ: Իրավաբանական գրականության

մեջ, հաճախ մատնացույց է արվում իրավունքի այս կամ այն աղբյուրի նպատակահարմար տեղակայվածության կամ իրավական կանոնակարգման օգտագործման ոչ ադեկվատ կոնկրետ օրինակներ:

Համակարգաձևավորող կապերի թուլացման հետ մեկտեղ իրավական համակարգը կորցնում է ամբողջականության որակը, ինչը թույլ է տալիս դրա առանձին մասերը դիտարկել, որպես ոչ արդյունավետ ու ամբողջից անկախ: Այս դեպքում, բոլոր կապերն ու բաղկացուցիչները դադարում են պատասխանել անհրաժեշտ, համակարգի կողմից ենթադրվող պահանջներին: Իրավական համակարգի չափորոշիչներին հատուկ մշտականությունը չի կարող ապահովել դրա գործունեության նորմալ ռեժիմը, քանի որ դրան առաջադրված համակարգի նպատակն արդեն չի պատասխանում հասարակական զարգացման պահանջմունքներին: Այդ ժամանակ առաջ է գալիս մեկ այլ որակի համակարգի անցման անհրաժեշտությունը:

Իրավական համակարգի համակարգաձևավորող կապերի վերլուծությունն ունի մեծ տեսական ու գործնական նշանակություն, քանի որ թույլ է տալիս ժամանակին կատարելագործել իրավական առկա համակարգը՝ շարունակելով դրա օպտիմալ մոդելի որոնումները:

Տվյալ խնդրի վերաբերյալ գրականության մեջ, մշտապես բաց է թողնվում այն հանգամանքը, որ կապերից բացի գոյություն ունեն նաև իրավական համակարգի այլ, համակարգաձևավորող գործոններ: Մեր կարծիքով կարելի է առանձնացնել իրավական համակարգի համակարգաձևավորող նշանակալի այնպիսի գործոններ, ինչպիսիք են իրավական համակարգի ժամանակը, տարածությունը, նպատակը, խնդիրները, գործունեության արդյունքը, իրավունքի սկզբունքներն ու նորմերը:

Տարածությունն ու ժամանակը հանդես են գալիս, որպես համակարգաձևավորող ակտիվ գործոններ: Տարածությամբ, սահմանափակվում է իրավական համակարգի տևականությունը, իսկ ժամանակը գրանցում է տվյալ համակարգի գոյության տևողությունը: Յուրաքանչյուր իրավական համակարգ ունի իր սեփական տարածությունն ու ժամանակը: Այսպիսով, իրավական համակարգի տարածական ժամանակային բնութագիրը հանդիսանում է դրա որակական սահմանվածության,

անհատականության կարևորագույն կողմերից մեկը: Ընդ որում, տարածությունն ու ժամանակը կարելի է դիտարկել համակարգաձևավորող իրավական իրականության, և որպես ներքին, և որպես արտաքին գործոններ, որոնց միջև հնարավոր են անհամապատասխանություններ:

Պայմանականության բավարար չափաբաժնով, իրավական համակարգի կառուցվածքը կարելի է բաժանել տարածականի ու ժամանակայինի, առաջինն ընդգրկում է իրավական համակարգի մասշտաբային սահմանները ու գրանցում է իրավական ենթահամակարգերի բազամզան մակարդակներ: Երկրորդը հնարավորություն է տալիս բացահայտել ժամանակագրական տևականությունը և որոշակի հաջորդականությամբ ծավալվող իրավական գործընթացները: Իրավական բանականության տվյալ համալիրը կարելի է համակարգ անվանել նաև այն պատճառով, որ դրանում մտնող բոլոր բաղադրիչները միավորված են ընդհանուր տարածա-ժամանակային կառուցվածքով:

Համակարգը ենթադրում է ոչ միայն ցանկացած կապ, այլ նախ և առաջ այնպիսին, որը ենթադրում է բաղադրիչները, դրանց շարժը դեպի միասնական նպատակ: Հենց նպատակի միջոցով է, որ շահերը միավորվում են գիտակցական իրականության միասնության մեջ:

Գործառույթներն իրենցից ներկայացնում են նպատակների շարժման միջոցներ, որոնք հիմնված են համակարգի նպատկահարմար հատկանիշների վրա: Գործառույթների ճիշտ բախումից ու դրանց իրականացման արդյունավետությունից են կախված համակարգի շատ այլ չափորոշիչներ: Հենց գործառույթներն են սահմանում համակարգի կառուցվածքը, բովանդակությունը, նպատակաուղղվածությունը, դերերի բաշխումը և իրավական գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը: Ֆունկցիոնալ կախվածությունը տեղի է ունենում իրավական համակարգի առանձին բաղադրիչների միջև, համակարգի ու բաղադրիչների միջև ընդհանրապես, ընդհանուր համակարգի և արտաքին միջավայրի սեգմենտների միջև: Լինելով համակարգաձևավորող գործոն, գործառույթը հանդիսանում է այլ օբյեկտների հետ փոխհարաբերությունների դեպքում համակարգի հատկանիշների, որակների դրսևորումը:

Հիմքեր կան, որպես համակարգաձևավորող գործոն համարել իրավական համակարգի գործունեության արդյունքը: Արդյունքն հանդես է գալիս հակադարձ կապերի հանգույցի որոշիչ օղակը: Այս հասկացության բնույթը կայանում է նրանում, որ համակարգի ներքին փոփոխությունն առաջացնող գործողությունը, որն հանդիսանում է այդ գործողության արդյունքը, ինքը կարող է փոփոխվել այն բանի ուժով, որ համակարգի նոր վիճակը (արդյունքը) փոխում է այն պայմանները, որոնց դեպքում ի հայտ է եկել տվյալ գործողությունը: Այստեղ արդյունքն հանդես է գալիս, որպես համակարգի ձևավորումն ու զարգացումը խթանող գործոններից մեկը և այդ իմաստով համարվում է համակարգաձևավորող գործոն:

Իրավական համակարգի համար իրավունքի նորմերն ու սկզբունքները հանդիսանում են համակարգաձևավորման անհրաժեշտ գործոնները<sup>148</sup>: Տվյալ տարրերի հետ են կապված իրավական համակարգի բոլոր բաղադրիչները: Իրավունքի սկզբունքներում ու նորմերում օբյեկտիվացվում են համամարդկային գաղափարները, այս կամ այն սոցիալական հարաբերությունների իրավական կանոնակարգման գաղափարները: Լինելով, ընդհանուր ուղեկցող, ինչպես նաև հասարակության ու պետության կամքի կրողները, իրավունքի սկզբունքներն ու նորմերը իրենց շուրջ են միավորում իրավական համակարգի բոլոր այլ բաղադրիչներն իրենց շուրջ են միավորում իրավական համակարգի բոլոր մյուս բաղադրիչները: Նրանց կողմից են գործի դրվում նաև տվյալ համակարգի բոլոր մակարդակները: Իրավունքի սկզբունքները մեկ միասնության մեջ են ձևակերպում իրավական ողջ զանգվածը, իրենց ոգին են դնում իրավական ողջ համակարգում: Իրավունքի սկզբունքները որոշակի ուղղության են ենթարկում տվյալ համակարգի բաղադրիչների շարժը և վերջին հաշվով նախասահմանում են իրավական դրույթների բովանդակությունը:

Նշվածներից բացի, գոյություն ունեն նաև համակարգաձևավորող այնպիսի գործոններ, որոնք իրենց դրսևորում են ոչ թե ամբողջ իրավական համակարգի, այլ դրա բաղադրիչներից մեկի շրջանակներում: Օրինակ, իրավունքի համակարգի նկատմամբ, որպես այդպիսի գործոն հանդես են գալիս իրավական կանոնակարգման առարկան ու մեթոդը: Պոզիտիվ իրավունքի համար՝ դրա ձևը,

---

<sup>148</sup> **Марченко М.Н.** Государство и права в условиях глобализации. М., 2015, с. 265-266.

իրավահարաբերությունների համար՝ սուբյեկտը, իրավաձևավորման ու իրավունքի իրականացման համար՝ սուբյեկտների կազմակերպական գործունեությունը: Արդյունքում դիտվում է իրավական համակարգի համակարգաձևավորող գործոնների բազմամակարդակ միագումար, որն իրենից ներկայացնում է այն երևույթներն ու կապերը, որոնք առաջ են բերում համակարգի ձևավորումն ու պահպանումը:

Իրավական համակարգն ունի մի շարք հատկանիշներ, որոնք այն տարբերում են իրավական և այլ ոլորտների ոչ համակարգային ձևավորումներից: Նման հատկանիշների թվին կարելի է դասել դրան հատուկ կոմպոնենտությունը, ինքնավարությունը, ամբողջականությունը, կազմակերպվածությունը, միասնությունն ու ամբողջականությունը:

Իրավական համակարգի հարաբերական ինքնուրույնությունը պայմանավորում է դրա գործունեության ինքնուրույնությունը: Սակայն, անկախ իր ինքնավարությունից, իրավական համակարգը չի կարող դիտարկվել, որպես փակ համակարգ հաշվի առնելով արտաքին միջավայրի սեգմենտների հետ փոխհարաբերությունների ու փոխգործակցությունների համար՝ դրա բաց լինելու հանգամանքը: Իրավական համակարգի ամբողջականությունը ենթադրում է դրա բաղադրիչային կազմի ամբողջականությունը, որտեղ բոլոր ենթահամակարգերը կրում են որոշակի ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություն՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Որպես իրավական համակարգի ինտեգրատիվ հիմնական որակներից մեկ հանդես է գալիս դրա ամբողջականությունը: Ամբողջական է համարվում իրավական երևույթների միայն այնպիսի խումբը, որը կատարում է ընդհանուր գործառույթ, ինչը չեն կարող իրականացնել այն ձևավորող բաղադրիչներն առանձին վերցրած: Հաշվի առնելով իրավական համակարգի այնպիսի տարատեսակը, ինչպիսին է անցումային շրջանի իրավական համակարգը, կարևոր է նշել, որ իրավական իրականության աստիճանը՝ իր զարգացման տարբեր փուլերում տարբեր է լինում: Անցումային պայմաններում իավական համակարգի ամբողջականությունը հոմոգենից (միատարր) վեր է ածվում հետերոգենի (տարասեռի) ու կորցնում է նախորդ կայունությունը: Իրավական համակարգի ամբողջականության ներկայացման հետ կապակցվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են օղակների հաշվեկուլածությունը,

կայունությունը, սիմետրիկությունը: Սակայն անցումային շրջանի իրավական համակարգերի գոյության փորձը ժխտում է այս կարծրատիպերը: Պահպանելով իր ամբողջականությունը, անցումային շրջանի իրավական համակարգն ունի ծայրահեղ անկայունություն, ներքին հակասություն և ասիմետրիա:

Իրավական համակարգի ինքնատիպությունը ենթադրում է դրա բաղադրիչների համատեղելիությունը, ընդհանրությունը՝ փոխադարձ կապերում ու արտաքին միջավայրի հետ հարաբերություններում: Բաղադրիչների ընդհանրությունը պայմանավորված է գենետիկ օրինաչափություններով, ընդհանուր ֆունկցիոնալ ուղղվածությամբ:

Իրավական համակարգի կարևորագույն առանձնահատկություններից մեկը հանդիսանում է դրա կազմակերպվածությունը, կանոնակարգվածությունը: Տվյալ հատկանիշը ամրագրում է համակարգում առկա բաղադրիչների, հարաբերությունների ու կապերի որոշակի կարգը՝ վերջինիս կառուցվածքում ու գործունեության մեջ: Անցումային իրավական համակարգերի<sup>149</sup> վերլուծության վերաբերյալ կարելի է նշել, որ բաղադրիչների միջև փոխհարաբերությունների բնույթը, դրանց փոխազդեցության բնույթն ու կայունությունը կարող են տարբեր լինել: Կազմակերպվածության մինչև ո՞ր մակարդակում է պահպանվում իրավական համակարգի որակական սահմանվածությունը, որպես այդպիսին: Կարևորն այն է, որ իրավական տվյալ համակարգը կարողանա գոնե մասամբ իրականացնել ֆունկցիոնալ իր նշանակությունը, շարունակի իրավական ներգրծություն ունենալ հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա: Դրա բաղադրիչները կարող են լինել ամորֆ, դրանց միջև հարաբերությունները անկայուն ու անհամաձայնեցված. սակայն սոցիալական միագումար արդյունք ցուցաբերելով, իրավական համակարգը պահպանում է համակարգության որակը: Այսպիսով, իրավական համակարգը, որպես այդպիսին է մնում որոշակի ապակազմակերպվածության պահերի, քանի դեռ այն ունակ է հետապնդել իր նպատակը ու դրանում պահպանվում են համակարգաձևավորող գործոններ: Իրավական համակարգի առկայության կարևոր չափանիշ է հանդիսանում հասարակության որակական որոշակի առանձնահատկությունը, որը ձևավորվել է

---

<sup>149</sup> **Нерсисянц В.С.** Общая теория права и государства. М., 2015, с. 449-450.

տվյալ համակարգի ազդեցության ներքո:

Ելնելով, վերևում բնութագրված կատեգորիաներից, կարելի է տալ իրավական համակարգի հետևյալ սահմանումները, իրավական համակարգը հանդիսանում է իրավական երևույթների ու գործընթացների ամբողջական միասնությունը (պոզիտիվ իրավունք, իրավաձևավորում, իրավունքի իրացում, իրավագիտակցություն), որը ձևավորվում է դրանց փոխազդեցության ու փոխադարձ գործունեության արդյունքում և իրավաբանական ներգործություն է ունենում հասարակական կյանքի վրա:

Գրականության մեջ կա նաև ուշադրության արժանի մեկ այլ բնորոշ, համաձայն որի «Ազգային իրավական համակարգը կոնկրետ պետության տարածքում գործող իրավունքի, իրավաբանական պրակտիկայի, իրավական գաղափարախոսության և իրավաբանական հաստատությունների ամբողջությունն է, որն արտահայտվում է տվյալ պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային առանձնահատկությունները»<sup>150</sup>:

«Իրավական համակարգ» հասկացությունը դասվում է միանգամայն լայն իրավական կատեգորիաների շարքին, որոնք ընդգրկում են բազմաթիվ ու տարատեսակ իրավական բաղադրիչներ: Տվյալ հասկացությունը մատնացույց է անում իրավունքի գոյության բավականին խոշոր պլաստներ, սակայն չի ընդգրկում իրավական ողջ գործունեությունը: Սրա հետ կապված անհրաժեշտ է իրականացնել իրավական համակարգի հասկացության սահմանազատումը այնպիսի միախառնված կատեգորիաներից, ինչպիսին է «իրավական վերնաշենք», «իրավական կյանքը», «իրավական տարածությունը», «իրավական դաշտը» և այլն, որոնք ակտիվորեն օգտագործվում են ժամանակակից իրավաբանական գրականության մեջ:

Նախ և առաջ, հարկավոր է ձերբազատվել «իրավական համակարգ» և «իրավունքի համակարգ» հասկացությունները շփոթելու հանգամանքից: Դրանց միջև տարբերությունը կայանում է իրավական իրականության տարբեր աստիճանների ընդհանրացման մեջ: Իրավունքի համակարգը, համաձայն իր մասին ձևավորվող կարծիքի, հանդես է գալիս, որպես ամբողջական ձևավորում, իրավական նորմերի միասնություն, որոնք բաշխված են ըստ ոլորտների ու ինստիտուտների՝ իրավական

<sup>150</sup> Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, էջ 639:



կանոնակարգման առարկային ու մեթոդներին համաձայն: Իրավական համակարգի մասշտաբներում իրավունքի համակարգը ենթահամակարգի դիրք է զբաղեցնում դրա այնպիսի բաղադրիչի շրջանակում, ինչպիսին է պոզիտիվ իրավունքը:

«Իրավական համակարգ» հասկացության հետ մեկտեղ նախորդ շրջանի հայրենական իրավաբանական գրականության մեջ կիրառվում էր «իրավական վերնաշենք» տերմինը: Արևմտյան գիտության մեթոդաբանությունը ժխտել է հասարակական-տնտեսական ձևավորման հասկացությունը, տնտեսական հիմքի կատեգորիայի, քաղաքական ու իրավական վերնակառույցի գիտական ընկալումը: Իրավունքի մարքսիստ-լենինյան տեսության մեջ կարծիք կար, որ իրավական կատեգորիան հարում է հասարակական համակարգի մակարդակին ընդհանրապես ու արտահայտում է դրա ձևավորող կառուցվածքը: Ելնելով սրանից ձևակերպվում էին նաև տվյալ հասկացության մոտեցումները: Վերնակառույցը դիտարկվում էր, որպես զույգային հասկացություն՝ հիմքի նկատմամբ, այսինքն հասարակության բոլոր ոչ գաղափարական երևույթները: Իրավական վերնակառույցի խնդիրը կոչված էր արտահայտել ոչ միայն իրավական երևույթների ընդհանրացման բարձրագույն մակարդակը, այլ նաև մարդկանց հոգևոր ու պրակտիկ գործունեության միասնական գործընթացը իրենց կյանքի իրավական ոլորտում:

Ընդհանրապես կարելի է նշել, որ «իրավական համակարգ» և «իրավական վերնակառույց» հասկացությունները ընդհանուր առմամբ համընկնում են, սակայն նշված կատեգորիաներից վերջինում ընդգրկում էր նաև ոչ գերիշխող իրավական գաղափարախոսությունը, իրավական գիտակցության բոլոր ձևերը: Իրավական համակարգը, նրա կարծիքով ստեղծվում է իշխող դասի կողմից՝ բացառապես սեփական շահերի պաշպանության, սեփական կամքն արտահայտելու ու ամրագրելու նպատակով: Կարծիք կա, որ իրավական համակարգն, ընդհանրապես չի կարող սահմանափակվել այնպիսի երևույթներով, որոնք համապատասխանում են իշխող մեկ դասի: Այս դեպքում այն կդառնա ոչ թե հասարակության իրավական համակարգը, այլև իշխող դասի իրավական համակարգը: Իսկ անցումային հասարակության կառույցում նման դաս բացակայում է: Պետական կամքը, որը մասնակցություն է ունենում իրավունքի ձևավորման գործում, չի հանդիսանում իշխող դասի «մաքուր

կամքը», այլ այն կամքը, որն ընդհանրացնում է սոցիալական ընդհանրությունների կամքի հարաբերակցությունը:

Գիտական կատեգորիաների հարաբերակցությունը արդյունավետ է համարվում նման հարաբերակցության հուսալի չափանիշների բացահայտման դեպքում: Տվյալ դեպքում հարաբերակցվող հասկացությունները կարելի է համեմատել ըստ ծավալի կամ բաղադրիչային կազմի, ըստ նպատակային լարվածության, ըստ բաղադրիչների կցման (կապակցվածության) աստիճանի:

«Իրավական հասկացություն» և «իրավական վերնակառույց» հասկացությունների հարաբերակցության առումով դժվար է համաձայնվել այն հեղինակների հետ, ովքեր ենթադրում են, որ տվյալ հասկացություններով ձևավորված սոցիալական իրականության շրջանակները ծավալով նույնական են: Իրավական համակարգի կողմից չեն ընդգրկվում իրավաբանական հաստատությունները, իրավաբանական գիտությունը, որոնք տեղին է ընդգրկել «իրավական վերնակառույց» հասկացության մեջ: Իրավական վերնակառույցի կատեգորիան բնութագրում է իրավական երևույթների տեղը՝ տնտեսական հիմքի նկատմամբ, իսկ «իրավական համակարգ» հասկացությունը՝ ծառայում է իրավական իրականության համակարգային կապերը, դրա կազմակերպումն ու կառուցվածքը, ֆունկցիոնալ ուղղվածությունը արտահայտելու համար: Իրավական համակարգի հասկացության օգտագործումը ենթադրում է իրավական իրականության ամբողջական, համակարգային ընկալումը գենետիկ, գործնական, նորմատիվ, իրավաբանական-մտավոր ասպեկտներում, ստատիկայում ու դինամիկայում: Իսկ իրավական վերնակառույցը իրավական իրականությունն արտահայտում է իր բոլոր դրսևորումներում, այդ թվում ոչ համակարգային ու ոչ կանոնակարգված դեպքերում: Բացի այդ, իրավական համակարգի բաղադրիչների միջև փոխհարաբերությունները շատ ավելի ամուր են, կայուն, որոշակի, քան իրավական վերնակառույցի բաղադրիչների դեպքում է:

Եվ այսպես, իրավական համակարգը, որպես իրավական իրականության երևույթների պարփակված համալիր, միանգամայն ինքնուրույն տեղ է զբաղեցնում համակարգային .ու ոչ համակարգային իրավական ձևավորումների մեջ: Իրավական համակարգի գոյության իրականությունը պայմանավորված է դրա բաղադրիչային

կազմի պայմանականությամբ ու մի շարք համակարգաձևավորող գործոններով, այդ թվում իրավական համակարգի բաղադրիչների՝ միմյանց և ընդհանուր համակարգի ու արտաքին միջավայրի կապերի միջոցով: Իրավական համակարգի հասկացությունն արտահայտում է իրավական իրականության համակարգության անհրաժեշտ և բնութագրական հատկանիշները:

## ԳԼՈՒԽ 2

### ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

#### 2.1. Գլոբալացումն իրավական ոլորտում. զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկությունները

Գլոբալիզացիան հասարակական գիտություններում արդեն մեծ տարածում գտած հասկացություն է: Լայն տարածում են գտել նաև այն պնդումները, ըստ որոնց մարդկությունն ապրում է մի ժամանակաշրջանում, երբ հասարակական կյանքի երևույթները մեծամասամբ պայմանավորված են գլոբալ գործընթացներով, որտեղ աստիճանաբար վերանում են ազգային մշակույթը, ազգային տնտեսությունը և ազգային այլ սոցիալ-անտեսական երևույթները:

Տեսական գրականության մեջ «գլոբալիզացիա» ենթադրում է որպես բազմաշերտ, լայնածավալ գործընթաց, որը միջազգային ասպարեզում ներառում է քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերը<sup>151</sup>: Գլոբալիզացիայի գործընթացն, ըստ էության, օբյեկտիվ օրինաչափություն է, որը բխում է արդի ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումներից:

Ինչպես նշում է Գ. Հարությունյանը. «Նոր հազարամյակ մարդկությունը թևակոխեց վերաիմաստավորման անհրաժեշտությամբ և հասարակական տեսության կանոնակարգման ու կայուն զարգացում երաշխավորելու լուրջ փնտրտունքներով... Շրջանառության մեջ դրված «գլոբալիզացիա», «ունիվերսալիզմ», «միջազգային ժողովրդավարություն», «համաշխարհային համակարգ», «վերպետական սահմանադրություն» և բազում այլ հասկացություններ պահանջում են ոչ միայն իմացական, այլև իրավագիտական ու քաղաքագիտական խոր իմաստավորում, ժողովրդավարական պետության հիմնական սկզբունքների հետ այնպիսի բաղդատում, որպեսզի որոշակիացվեն կայուն և քաղաքակիրթ զարգացման չափանիշներ ու այդ ոլորտում

<sup>151</sup> Տե՛ս **Зорькин В.Д.** Право в условиях глобальных перемен. М., 2013; Նույնի, Цивилизация права и развитие России. М., 2015; **Марченко М.Н.** Государство и права в условиях глобализации и теория. М., 2015 և այլն:

միջազգային արդյունավետ գործակցության շրջանակները»<sup>152</sup>:

Գլոբալիզացիայի գործընթացի արդյունքները իրավական բնագավառում ներկայումս շոշափելի են հատկապես Եվրամիության շրջանակներում, որտեղ ընդունվել են մի շարք հիմնարար բնույթի փաստաթղթեր, որոնք, ըստ էության, վերաբերում են նշանակություն ունեն (օրինակ՝ հիմնարար պայմանագրերը): Եվրոպայի խորհրդի շրջանակներում իրավական գլոբալիզացիան հետամուտ է հետևյալ նպատակների իրականացմանը անդամ պետությունների (հատկապես հետսոցիալիստական) քաղաքական համակարգերի ժողովրդավարացում, իրավունքի գերակայության հաստատում և մարդու իրավունքների պաշտպանության իրական երաշխիքների ապահովում: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ գլոբալիզացիայի գործընթացները սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական ոլորտներում առայժմ ոչ բոլոր դեպքերում են դրական արդյունք տալիս, քանի որ ազգային իրավական համակարգերը գտնվելով զարգացման տարբեր աստիճանների վրա, դժվարությամբ են հարմարվում որակական նոր տնտեսական, սոցիալական և քաղաքական իրողություններին:

Ժամանակակից հասարակության մեջ գիտական գիտելիքի կիրառման գոտիների ընդարձակումը բացարձակապես չի տանում դեպի սոցիալական փոփոխությունների գծային հետագիծը: Հակառակը, դրանում մրցում են տարբեր գիտական հայեցակարգերը, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի ստեղծագործական ներուժ, որը տեսանելի ազդեցություն է գործում սոցիալական իրողության ձևավորման վրա: Ուստի ազգային իրավական համակարգերի շրջանակներում նպատակահարմար է թվում օգտագործել իրավագիտության ներուժը<sup>153</sup>, ուսումնասիրել դրա զարգացման միտումներն ու ընդհանուր առմամբ իրավական համակարգի ու դրա առանձին բաղադրիչների վրա գլոբալացման բացասական ազդեցությունները շտկելու հնարավորությունների հնարավորությունները:

Գլոբալացման գործընթացների հետևանքով իրավունքի փոփոխությունները տեղի են ունենում երկու հիմնական ճանապարհներով՝ «գլոբալացում-իրավունք», այսինքն՝ գլոբալացման գործընթացի բուն հետևանքները փոփոխություններ են առաջացնում

<sup>152</sup> Տե՛ս **Գ.Գ. Հարությունյան**, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքներ: Երևան, 2003. էջ 5; Նույնի՝ Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016, էջ 11-12:

<sup>153</sup> Տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** Հայ իրավագիտության ձևավորման առանձնահատկությունները և ազգի հիմնախնդիրները //Լրաբեր հասարակական գիտությունների, № 6(641), Երևան, 2014, էջ 141-148:

օբյեկտիվ իրավունքում /օրինակ՝ պետությունների մաքսային օրենսդրության փոփոխությունները տարածաշրջանային ինտեգրման շրջանակներում արտահանման-ներմուծման հարաբերությունների զարգացման հետևանքով/, կամ «իրավունք-գլոբալացում», այսինքն՝ երբ իրավունքի միջոցով փորձեր են արվում ուղղել գլոբալացումը որոշակի ուղիով, օրինակ, ազգային իրավունքի մեջ այլ պետությունների նորմերի ներդրումը, որոնք վերափոխված են ազգային առանձնահատկությունների նկատմամբ կիրառմամբ:

Քանի որ ժամանակակից իրավաբանական գրականության մեջ չկա հստակ սահմանում «իրավունքի գլոբալացում» կամ «իրավական գլոբալացում» հասկացության համար, հնարավոր է թվում սույն ատենախոսության շրջանակներում հետևյալ կերպ հասկանալ իրավական գլոբալացումը. իրավունքի գլոբալացումը մի գործընթաց է, որը պայմանավորված է գլոբալացման ընդհանուր գործընթացներով, բերում է ունիֆիկացված իրավական սկզբունքների ու նորմերի, իրավական տեսությունների ձևավորումն ու ճանաչումը, ինչպես նաև բերում է իրավական համակարգերի փոխ-գործության զգալի ուժեղացմանն ու նպաստում է համաքաղաքակրթական իրավական համակարգի ստեղծմանը:

Արդի ժամանակաշրջանում, ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը. «տեղի է ունենում հասարակական տարաբնույթ գործընթացների աննախադեպ միջազգայնացում, տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային հարաբերություններն զգալի չափով վերաբեռնական բնույթ են ստանում»<sup>154</sup>:

Ժամանակակից իրավական գլոբալացման հիմնական առանձնահատկություններն են.

1. Միջազգային և ազգային իրավական համակարգերի առանցքն է դառնում մարդը, նրա արժանապատվությունները, իրավունքներն ու ազատությունները:

2. Իրավական համակարգերի կայուն և բնականոն զարգացման հիմնական նախապայմաններից է (իրավական օրենքի) գերակայությունը հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառներում (որոնք ենթակա են իրավական կարգավորմանը):

---

<sup>154</sup> Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016, էջ 32:

3. Իշխանությունների բաժանման համակարգը և իրավունքով իշխանության (պետական և տեղական ինքնակառավարման) սահմանափակումը:

4. Անկախ դատական իշխանության մարմինների համակարգի ստեղծումը, որպես իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք:

5. Հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը (օրինակ՝ սոցիալական արդարության, իրավական հավասարության, ազատության, սոցիալական պաշտպանվածության, անհատի իրավունքների առաջնահերթության և հարակից արժեքների ներմուծումը և ապահովումը ազգային իրավական համակարգում):

6. Միջազգային, տարածաշրջանային, ազգային իրավական համակարգերի հումանիզացումը և համամարդկային արժեքների իրավաբանական ամրագրումը և դրանց անշեղ իրականացումը՝ միջազգային և ներպետական իրավակիրառ պրակտիկայում:

Գլոբալացումը, որպես համաշխարհային սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական լայնամասշտաբ գործընթաց, իր ազդեցությունն է թողնում նաև ազգային իրավական համակարգի վրա:

Գլոբալացման պայմաններում համակարգի կազմակերպման մակարդակին, նրա կառավարման աստիճանի բարձրացմանը, քաղաքակրթության բուն գոյությանն սպառնացող հիմնահարցերի ու հակասությունների լուծման գործում մեծանում ու կարևորվում է իրավունքի դերը: Հասարակության և ողջ մարդկության կյանքում իրավունքի դերի մեծացման, հասարակության կենսագործունեության կայունացման ապահովումը 20 և 21-րդ դարերում դարձել է սոցիալական այդ երևույթի զարգացման հիմնական միտումներից մեկը:

Ժամանակակից պայմաններում իրավունքի՝ կարգավորիչ այդ ամենահզոր համակարգի առջև ծառացել է ևս մեկ կարևոր խնդիր, գլոբալացման գործընթացների կառավարման, դրանց ներդաշնակեցման խնդիրը: Իրավունքը հանդես է գալիս որպես գլոբալացման գործիք և, միաժամանակ, որպես դրա գործընթացների կառավարման միջոց:

Նշված հանգամանքները պայմանավորվում են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական համակարգում փոփոխություններ՝ ներառյալ դրանց փոխգործակցության բնույթը:

Իրավունքի զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից մեկն է հանդիսանում միջազգային և ներպետական իրավական համակարգերի խորացումը, որն արտացոլում է մեկ այլ ընդհանուր օրինաչափություն՝ փոխգործակցության խորացումը ազգային հասարակության և միջազգային հանրության միջև: Միջազգային և ներքին ազգային իրավունքի խորացումը պայմանավորում է այս վերջինի այսպես կոչված միջազգայնացումը: Իրավունքի միջազգայնացման տակ հասկանում են իրավունքի սկզբունքների և ազգային օրենսդրությունների մերձեցում, իրավական տարբեր համակարգերի փոխներազդեցության խորացում<sup>155</sup>: Տնտեսական ու սոցիալական նոր պայմաններում տարբեր պետությունների իրավական համակարգերը պետք է լինեն համատեղելի և համագործակցեն մեկը մյուսի հետ: Դա առաջին հերթին հնարավոր է դառնում ներքին իրավունքի հանդեպ միջազգային իրավունքի գերակայության ճանաչման և, երկրորդ հերթին, միջազգային իրավունքի ազդեցության տակ ներքին իրավունքի ինտենսիվ փոփոխման շնորհիվ:

Փոփոխման եղանակով ազգային իրավունքի միջազգայնացումը մասնավորապես ենթադրում է դրա նորմերի համապատասխանեցումը, այսպես կոչված, միջազգային իրավական ստանդարտներին: «Միջազգային իրավական ստանդարտ» հասկացությունը առաջ է եկել նախորդ դարի կեսերին և ամրապնդվել է իրավաբանական գրականության մեջ: Իրավունքի ստանդարտացումը հանդիսանում է ժամանակակից հասարակական ողջ կյանքի ստանդարտացման իրավաբանական արտացոլումը: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում է միջազգային պայմանագրերի նորմերը»: Ստանդարտացումն ընդգրկել է մարդկանց կյանքի բոլոր բնագավառները, տնտեսական ոլորտում այն դրսևորվել է որպես արտադրության և սպառման ստանդարտացում, սոցիալական ոլորտում՝ որպես

<sup>155</sup> **Зорькин В.Д.** Право в условиях глобальных перемен. М., 2013; Նոյնի, Цивилизация права и развитие России. М., 2015.



այսպես կոչված զանգվածային մշակույթի ձևավորում:

Իրավական ստանդարտացումը դրսևորվում է որպես այս կամ այն հասարակական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպես նաև պետական մասշտաբով նվազագույն նորմերի և պահանջների սահմանում: Իրավական ստանդարտներն ընդգրկում են իրավական կարգավորման ամենատարբեր ոլորտները: Առաջին հերթին դրանք անձի իրավունքների և ազատությունների միջազգային իրավական ստանդարտներն են: Խոսվում է նաև արդարադատության իրականացման, ձեռներեցության, ֆինանսական (օրինակ, ֆինանսային հաշվետվության միջազգային ստանդարտների) և այլ ոլորտներում միջազգային ստանդարտների մասին:

Միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների ազդեցության տակ արմատապես վերափոխվել է մարդու իրավունքներին վերաբերվող, ինչպես նաև քաղաքացիական, քրեական, վարչական օրենսդրությունները, դատավարական և դատարանակազմության մասին ազգային օրենսդրությունները: Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական դատարանի կողմից մի ամբողջ շարք օրինազների փորձաքննությունները հաստատեցին դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական ստանդարտներին:

Ներպետական և միջազգային իրավունքի աճող և խորացող փոխգործակցությունը պայմանավորում ու պահանջում է ազգային օրենսդրության ներդաշնակեցում Եվրոպական իրավական չափանիշներին և Եվրասիական Միության իրավական ակտերին:

Եվրասիական Միության երկրների օրենսդրությունների նախևառաջ տնտեսական ու ձեռներեցական մերձեցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դրանք գտնվում են ընդհանուր տնտեսական տարածքում և ունեն ավանդական պատմական, սոցիալական, մշակութային, տնտեսական կապեր: Այդ նպատակին հասնելու համար որպես ամենաօպտիմալ ճանապարհ կարող է դիտվել կողմնորոշումը դեպի Եվրոպական հանրության ձևավորված կամ ձևավորվող իրավական ստանդարտները:

Հասարակական գործընթացների կառավարման բնագավառում իրավունքի դերի

աճը դրսևորվում է նաև իրավական կարգավորման ընդլայնման և խորացման տեսքով: Այդ միտումը, պայմանավորված իրավական կարգավորման առարկայի բարդացմամբ, բնորոշ է ինչպես ազգային, այնպես էլ ողջ աշխարհին: Իրավական կարգավորման ոլորտի ընդլայնումը կապված է ինչպես այն բանով, որ իրավունքի գործողությունը տարածվեց սոցիալական իրականության միանգամայն նոր, վերջերս ծագած բնագավառների վրա, այնպես էլ դրա տարածմամբ ազգային օրենսդրի տեսադաշտից դուրս գտնվող ոլորտների վրա: Առաջացել են իրավունքի և օրենսդրության նոր բնագավառներ, ճյուղեր, ինստիտուտներ, ինչպիսիք են ինֆորմացիոն օրենսդրությունը, շրջակա միջավայրի, գիտության, տեխնիկայի մասին օրենսդրությունը, էներգետիկայի մասին օրենսդրությունը, բժշկական իրավունքը և այլն:

Նշված միտումը զգալի չափով պայմանավորող գործոն է հանդիսանում ողջ քաղաքակրթության գիտատեխնիկական և ինտելեկտուալ զարգացումը: Բացի իրավական կանոնակարգման ընդլայնումից, գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է ավանդական իրավական ինստիտուտների էվոլյուցիոն զարգացմանը: Մասնավորապես, գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում կարևոր փոփոխություններ է ապրում սեփականության իրավունքի օբյեկտների որակական և քանակական փոփոխման տեսքով: Այսպես, մտավոր (ինտելեկտուալ) սեփականության (գրական, գեղարվեստական, արտադրական) օբյեկտների ի հայտ գալու հետ մեկտեղ էականորեն ընդլայնվեց, այսպես կոչված, «անմարմին» ունեցվածքի ծավալը: Զանազան էներգակիրների հաշվին մեծացավ նաև «մարմնավոր» ունեցվածքի վերաբերյալ սեփականության իրավունքի օբյեկտների ցանկը:

Ժամանակակից ազգային իրավունքը իր նորմերի համակարգում պետք է հաշվի առնի գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտների՝ նյութական արտադրության, սոցիալական, քաղաքական հարաբերությունների, հոգևոր բնագավառների վրա: Այս կապակցությամբ գիտատեխնիկական առաջընթացի կառավարման գործում իրավունքի դերը պետք է փոխվի: Շեշտերն այսօր պետք է դնել իրավունքի պահպանիչ գործառույթի և գիտատեխնիկական առաջընթացի վնասակար հետևանքների սահմանափակման կամ

այդ առաջընթացի ձեռքբերումների օգտագործման արգելմանն ուղղված իրավունքի պահպանիչ ենթահամակարգի վրա: Դա հատկապես վերաբերվում է ռազմական տեխնոլոգիաներին, ատոմային էներգետիկային, գենետիկական հետազոտություններին, բժշկական կենսաբանությանը, գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքներին: Ազգային օրենսդրությունը պետք է խիստ պետական վերահսկողություն սահմանի սոցիալական կյանքի այն ոլորտների ու գործընթացների վերաբերյալ, որոնց ոչ բնականոն գործունեությունը կարող է վտանգ ներկայացնել մարդկանց մեծ խմբերի համար: Ազգային օրենսդրությունը այս առումով ակնհայտորեն հետ է մնում ժամանակի պահանջներից:

Իրավունքի և իրավակարգավորումների արդի զարգացման պայմաններից նկատվում է, որ իրավական կարգավորման ոլորտի ընդլայնման հետ մեկտեղ գործում է նաև մեկ այլ միտում, իրավաբանական կանոնակարգման կրճատում. հասարակական որոշ հարաբերությունների իրավական կարգավորման փոխարինում կարգավորման այլ, ոչ իրավական ձևերով: Սակայն այս միտումը կարող է հիմնավոր լինել միայն իրավական կարգավորման առանձին ոլորտների համար, իսկ ընդհանուր առմամբ իրավունքի համար ժամանակակից պայմաններում բնորոշ է իրավական կարգավորման ընդլայնման միտումը, պայմանավորված մարդկային հարաբերությունների տարաբնույթ ընդլայնմամբ և իրավական կարգավորման բուն առարկայի բարդացմամբ:

Իրավական կարգավորման ոլորտի ընդլայնումը ուղեկցվում է նաև մեկ այլ միտումով, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման խորացմամբ և դրանց համակողմանի կանոնակարգմամբ: Դեռ 20-րդ դարի երկրորդ կեսին իրավագետները ուշադրություն դարձրեցին իրավական կարգավորման այս ուղղության վրա: Այս առումով, կարելի է ընդգծել, որ ժամանակակից իրավական համակարգի զարգացման մայրուղին հենց իրավակարգավորումների խորացումն է: Օրենսդրությունը դառնում է ավելի կոնկրետ, հստակ և մանրամասն: Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընդլայնումն ու խորացումը հանգեցրեց ազգային իրավական համակարգում նորմատիվ - իրավական ակտերի քանակի էական ավելացման:

Պետությունների փոխկապակցվածության աստիճանի շարունակական մեծացմամբ պայմանավորված իրավունքի զարգացման միտումների շարքում անհրաժեշտ է նշել իրավունքի աղբյուրների համակարգի փոփոխումը: Անգլո-սաքսոնյան իրավունքի երկրներում, որտեղ իրավունքի աղբյուրների շարքում առաջնային տեղ էր պատկանում դատական նախադեպին, աճեց նորմատիվ-իրավական ակտի դերը: Օրենքը գերակայություն ստացավ դատական նախադեպի հանդեպ, իսկ դատական նախադեպը մնում է օրենքի մեկնաբանման, կիրառման և զարգացման կարևոր միջոց<sup>156</sup>:

Իր բացառիկ հատկությունների շնորհիվ նորմատիվ-իրավական ակտը մնում է իրավունքի գերակայող աղբյուր ռոմանագերմանական իրավունքի պետություններում: Դրա հետ մեկտեղ դրանցում կարևոր դեր է սկսել խաղալ դատական պրակտիկան, այդ թվում նաև միջազգային-իրավական դատական պրակտիկան: Ձևականորեն դատական պրակտիկան Հայաստանի իրավական համակարգում պարտադիր չէ համանման հետագա գործերի քննման ժամանակ, սակայն առաջին ատյանի դատարանները առաջվա համեմատ ավելի հաճախակի են ղեկավարվում բարձր ատյանի դատարանների դատական պրակտիկայով<sup>157</sup>:

Այսպես, օրինակ, իր որոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանն ուղղորդում է դատական պրակտիկան ձգտելով ոչ միայն պաշտպանել մարդու իրավունքները և ազատությունները, այլև իրավական հիմքեր ստեղծել քաղաքացիական, քրեական և վարչական կոնկրետ գործերով կանխատեսելի արդարադատություն ձևավորելու համար: Կանխատեսելի, հետևաբար նաև վստահելի արդարադատության ձևավորման առաջին փուլը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացումն է: Երկրորդ, ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցող փուլ է կայացած նախադեպային որոշումների կիրառության ապահովումը պրակտիկայում:

Առաջացել է իրավական այնպիսի երևույթ, ինչպիսին է մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկայի հաշվառումը ազգային դատական

<sup>156</sup> Մանրամասն տե՛ս **Багдановская Н.Ю.** Источники права на современном этапе развития "общего права". Дисс. ... д-ра. юрид. наук. М., 2007.

<sup>157</sup> Տե՛ս օրինակ, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 2, 2013:

մարմինների գործունեության մեջ<sup>158</sup>:

Գլոբալացման պայմաններում ավելի զգայուն են իրավական համակարգում գործող ազգային իրավունքի աղբյուրները: Այս առումով, իրավունքի համակարգի փոփոխումի կապված է նաև նորմատիվային պայմանագրի որպես իրավունքի տեսակի աճող դերի հետ: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ իրավակարգավորումների ոլորտում առավել մեծ տարածում է ստանում կարգավորման դիսպոզիտիվ ձևը, որն իրավահարաբերության կողմերին հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար որոշել դրված նպատակներին հասնելու ուղիները, պայմանագրի, համաձայնագրի միջոցով սահմանել իրավունքներն ու պարտականությունները՝ տարբերակների ընտրության հնարավորություն չտվող կոշտ իմպերատիվի (հրամայականի) փոխարեն»:

Նորմատիվային բովանդակությամբ պայմանագիրը հանդիսանում է իրավական ակտ, որը ձևակերպում է իրավունքի երկու կամ ավելի սուբյեկտների առանձին, համաձայնեցված իրավական նորմեր սահմանող կամարտահայտումները, ընդ որում՝ այդ նորմերի կատարումը համարվում է պարտադիր: «Նորմատիվ պայմանագիրը համաձայնագիր է, որը ամրագրում է համապարտադիր իրավական նորմեր և որի առնվազն մի կողմը պարտադիր իշխանական լիազորություններով օժտված մարմին է»<sup>159</sup>: Կարծում ենք, որ իրավունքի աղբյուրների այս տեսակը ունի հեռանկարային ապագա: Գլոբալ զարգացման և փոխկախվածության ամրապնդման, սոցիալական կյանքի գլոբալ ինֆորմատիզացման, շուկայական տնտեսության բարձրտեխնոլոգիական զարգացման պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում ոչ թե կենտրոնացված հարկադրական, այլ համատեղ համաձայնային-կամավոր իրավական կարգավորումը:

Ժամանակակից աշխարհում իրավական կարգավորման հատկանշական գծերից է իրավական կարգավորման ապակենտրոնացման միտումը, որը դրսևորվում է կենտրոնական և տեղական օրենսդրության դերի և ծավալի վերաբաշխման տեսքով:

Վերջին տարիների նորմատիվային բազայի քանակական և կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս ազգային օրենսդրության աղբյուրների դինամիկան.

<sup>158</sup> Տե՛ս օրինակ՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպերի կիրառումը ՀՀ դատարանների կողմից: Երևան, 2011:

<sup>159</sup> Պետություն ր իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, էջ 303:

Ազգային իրավունքի նորմատիվ-իրավական բոլոր ակտերի ընդհանուր ծավալի աճի ֆոնի վրա առավել արագ տեմպերով է աճում օրենսդրության ծավալը:

Քաղաքացիական հասարակության զարգացումը կապված է սոցիալական փոփոխությունների, իրավական ու քաղաքական հարաբերությունների էական փոփոխությունների հետ<sup>160</sup>: 17-րդ դարում քաղաքացիական հասարակության իրավական ձևակերպում հանդիսացավ մարդկանց իրավաբանական (ձևական) հավասարության ճանաչումը՝ իրավունքներով և ազատություններով նրանց օժտման հիման վրա: Բուն քաղաքացիական հասարակությունը ծագում է սոցիալական կառույցներից պետության առանձնացման, նրա՝ որպես հասարակական կյանքի համեմատաբար ինքնուրույն ոլորտի մեկուսացման և միաժամանակ հասարակական մի շարք հարաբերությունների ապապետականացման ընթացքում և արդյունքում: Անձնական (մասնավոր) և հանրային (ընդհանուր) շահերի ոլորտների տարաբաժանումը իր արտացոլումն է գտնում նրանում, որ իրավունքի համակարգն էլ է բաժանվում երկու բլոկի՝ մասնավոր և հանրային<sup>161</sup>: Քաղաքացիական հասարակության զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, որ մարդկանց իրավաբանական հավասարության ճանաչումն ու ամրագրումը ամենևին էլ չի ապահովում սոցիալական հավասարությունը: Բանվոր դասակարգի ճնշման տակ զարգացած երկրների օրենսդրություններում 20-րդ դարում ամրագրվում է «սոցիալական իրավունքների» ցանկը: Երկրորդ աշխարհամարտից հետո այդ այսպես կոչված «երկրորդ սերնդի իրավունքները» ստացան միջազգային ճանաչում: Այսօր համարյա բոլոր ժամանակակից պետություններն իրենց քաղաքացիներին երաշխիքներ են տալիս սոցիալ-տնտեսական իրավունքների իրագործման վերաբերյալ, ամրագրելով այդ իրավունքները սոցիալական օրենսդրության մեջ:

20-րդ դարում զարգացած բոլոր պետություններում բուռն կերպով զարգանում է սոցիալական օրենսդրությունը, ընդ որում՝ վերջին տասնամյակներին՝ առավել ինտենսիվ կերպով: Այս միտումը բնորոշ է նաև Հայաստանի Հանրապետությանը, ինչի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ազգային օրենսդրության մեջ անհրաժեշտ է

<sup>160</sup> См. **М.Н. Марченко** Правовое государство и гражданское общество (теоретико-правовое исследование). М., 2015, էջ 525-526:

<sup>161</sup> Մանրամասն տե՛ս **Айкянц А.М** Актуальные проблемы совершенствования частного права в Армении. Дисс. ... д-ра юрид. наук. М., 2006.

կողմնորոշվել դեպի սոցիալական իրավունքի համալիր զանգվածի լայն սպեկտրի զարգացումը, որը կներառի սոցիալական ապահովման, առողջապահությանն ու կրթությանը վերաբերող օրենսդրությունները:

Այս գործընթացներով պայմանավորված միտումը կարելի է բնորոշել որպես իրավունքի սոցիալացում: Պետության սոցիալական գործունեության ընդլայնման արդյունքում ավելացավ հանրային իրավունքի գործողության ոլորտը:

Պատմական իրողությունների հետևանքով Հայաստանը հայտնվեց յուրահատուկ իրավիճակում: Վերջին երկու տասնամյակներում ազգային իրավունքի զարգացման մեջ կարելի է տեսնել երկու փոխկապակցված ուղղություն: Անցյալ դարի վերջում Հայաստանի անցումը շուկայական հարաբերությունների հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում հանգեցրեց մասնավոր-իրավական սկիզբների ավելացմանը (այդ միտումը բնորոշ է հետխորհրդային բոլոր պետություններին): Արմատական բարեփոխման ենթարկվեցին իրավունքի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են ընտանեկան, քաղաքացիական, աշխատանքային, տնտեսական իրավունքը: Ձևափոխման ենթարկվեցին իրավունքի այն ճյուղերը, որոնք ավանդաբար համարվում էին հանրային:

Հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում մասնավոր-իրավական սկիզբների ամրապնդումը ազգային իրավական համակարգում կյանքի կոչեց մեկ այլ միտում. ազգային օրենսդրության համակարգի մեջ գոյություն ունեցող համալիր գոյացությունների (սոցիալական, բնապահպանական, տրանսպորտային, առողջապահական, լրատվական օրենսդրությունների զանգվածներ) սրընթաց զարգացում և նորերի ստեղծում: Չափազանցություն չի լինի ասել, որ համալիր նորմատիվային կարգավորումը ժամանակակից պայմաններում դառնում է ազգային օրենսդրության զարգացման հիմնական ուղղություններից մեկը:

Դրա հետ մեկտեղ իրավիճակի յուրահատկությամբ հանդերձ, ազգային իրավական համակարգի վրա ներազդում են նաև իրավական գլոբալացման միտումները: Միջազգային հանրության հետ կապերի ամրապնդումը, Հայաստանի ձգտումը դառնալ նրա լիիրավ անդամ սոցիալական պետության կառուցման ճանապարհով բնորոշեցին նաև հակառակ մի միտում, հանրային (վարչական)

իրավունքի ակտիվ ներխուժում մասնավոր իրավունքի ոլորտ: Դա դրսևորվում է օրինակ պայմանագրային իրավունքի և ընդհանրապես քաղաքացիական-իրավական բուն բովանդակության ձևափոխման տեսքով: Բազում երկրների (այդ թվում նաև Հայաստանի) օրենսդրությունները զարգանում են դեպի պայմանագրային հարաբերությունների բոլոր առումների ավելի ու ավելի մեծ կանոնակարգման ուղղությամբ: Որպես դրա հիմնական նպատակ նշվում է պայմանագրի «թույլ» կողմի պաշտպանության անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, այս գործընթացը բերում է նահանջի պայմանագրային դասական սկզբունքներից, պայմանագրերի ազատության սահմանափակման, պայմանավորվող կողմերի հավասարության, ինչպես նաև դրանց բովանդակության ստանդարտացման:

Մասնավոր իրավունքի մեջ հանրային իրավունքի ներխուժումը բնորոշվում է նաև 20-րդ դարում սկսված և ներկայումս գլոբալացման պայմաններում ողջ աշխարհում շարունակվող սեփականության իրավունքի ինստիտուտի ձևափոխմամբ՝ դեպի սոցիալականացում: Սեփականության իրավունքը կորցնում է իր բացառիկ բնույթը: Գույքի տիրապետման, օգտագործման ու տնօրինման վերաբերյալ սեփականատիրոջ բացառիկ իրավասությունները ենթարկվեցին իրավաբանական լուրջ սահմանափակումների, սեփականության որոշ տեսակների հարկադրական օտարման, դրանց շահագործման պարտադիր կարգի սահմանման և այլն: Ազգային օրենսդրությունը (<< Սահմանադրությունը, Քաղաքացիական, Հողային և այլ օրենսգրքերը արտացոլում են այդ միտումը, մասնավորապես սահմանելով ունեցվածքի՝ պետական կարիքների համար հարկադիր օտարման հնարավորություն, սեփականության որոշ օբյեկտների օգտագործման կարգավորում և այլն):

Սոցիալական ոլորտի և տնտեսության պետական կարգավորման ժամանակ հանրային և մասնավոր իրավունքի նորմերի զուգորդումը պետք է որպես նպատակ ունենա հասարակության և պետության շահերի օպտիմալ հարաբերակցություն, ընդ որում պահպանելով ձեռներեցության ազատությունը:

Այսպիսով, արդի պայմաններում ավելի ու ավելի է ընդլայնվում մասնավոր-իրավական և հանրային-իրավական կարգավորման մեթոդների զուգորդումը ազգային օրենսդրության տարբեր ճյուղերում: Իրավունքի համակարգի զարգացման առումով



տվյալ միտումը կարելի է բնութագրել որպես մասնավոր և հանրային իրավունքի միջև սահմանների ողողում, իսկ օրենսդրության համակարգի վերաբերյալ՝ որպես հասարակական հարաբերությունների նորմատիվ համալիր կարգավորման վերած:

Իրավունքի համակարգի զարգացման շրջանակներում կարելի է նկատել կառուցվածքային մեկ այլ միտում, դատավարականության (ընթացակարգայնության) աճ իրավական, իրավական կարգավորման գործում, ինչը դրսևորվում է դատավարական կարգավորման ոլորտի ընդլայնման, դատավարական նորմերի թվի ավելացման, ընթացակարգերի բարդացման, դատավարական ձևի կատարելագործման տեսքով: Դատավարական- ընթացակարգային կարգավորումը դառնում է ավելի հստակ և մանրամասնված: Դատավարական իրավունքի զարգացման մեջ նկատելի է հետևյալ կարևոր օրինաչափությունը, որքան ավելի զարգացած է հասարակությունը, այնքան ավելի մանրամասն է ամրագրված օրենսդրության մեջ սոցիալական կարգի, քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված գործունեությունը: Այս առումով, ազգային իրավական համակարգում առաջացան դատավարական նոր գոյացություններ. ճյուղեր, ենթաճյուղեր, ինստիտուտներ՝ դատավարական, կատարողական, դատական սահմանադրական իրավունք, հարկային գործընթաց և այլն: Ընդլայնվում է գոյություն ունեցող դատավարական նորմատիվային գոյացությունների, օրինակ՝ վարչական իրավունքի կարգավորման առարկայի բովանդակությունը<sup>162</sup>:

Կարելի է ենթադրել, որ ըստ ազգային իրավունքի ընդհանուր զարգացման ընթացքի՝ դատավարական բլոկը ընդկայնվելու է ու զարգանալու, ընդ որում իրավունքի կառուցվածքում նրա ծավալը լինելու է շատ ավելի նկատելի: Միանգամայն հավանական է, որ դատավարական իրավական նորմերի այն խմբերը, որոնք այսօր ենթաճյուղերի դեր են կատարում, առաջիկայում կվերափոխվեն ինքնուրույն ճյուղերի (օրինակ, առաջ կգան վարչական-դատավարական, սահմանադրական-դատավարական իրավունք), իսկ այն նորմերը, որոնք այսօր հանդես են գալիս որպես դատավարական ինստիտուտներ իրենց «մայրական» ենթաճյուղերում, կձևավորվեն

<sup>162</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Ընդ. խմբ.՝ Գ. Դանիելյանի: Երևան, 2012, էջ 54-55:

որպես ենթաճյուղեր (օրինակ աշխատանքային դատավարություն, հարկային-դատավարական իրավունք):

Դատավարական կարգավորման ոլորտի ընդլայնումը հանդիսանում է մեկ այլ կարևոր օրինաչափության՝ պետությունների իրավական համակարգերում դատավարական իրավունքի նշանակության ու կարգավիճակի բարձրացման արդյունք: Ժողովրդավարական իրավական պետության պայմաններում դատավարական իրավունքը դառնում է հասարակության մեջ օրինականության, արդարության և իրավակարգի ապահովման անհրաժեշտ միջոց: Դեռ հռոմեացիներն էին ասում. «Պահպանելով դատավարության կարգը, մենք պահպանում ենք նաև օրենքը»: Ազգային դատավարական իրավունքի արմատական վերափոխումը վերջին տասնամյակում վկայում է այն մասին, որ ազգային իրավական համակարգը հետ չի մնում համաշխարհային իրավունքի զարգացման միտումներից:

Գլոբալացման գործընթացներով պայմանավորված մարդկանց կյանքի բոլոր կողմերի բարդացումը կապված է վերջին տարիներին հասարակության քաղաքականացման հետ: Քաղաքական տարածքն այսօր այնքան է ընդլայնվել, որ փաստորեն հավասարվել է մարդկային տարածքին: Հասարակության հետ մեկտեղ քաղաքականացնում են նաև նրա սոցիալական շատ ինստիտուտներ, այդ թվում և իրավական ինստիտուտները: Այդպիսի քաղաքական իրավունք է հանդիսանում պետական (սահմանադրական) իրավունքը՝ իրավունքի մի ճյուղ, որի կարգավորման ոլորտի մեջ են մտնում քաղաքական հարաբերությունները մեկ երկրի շրջանակներում<sup>163</sup>: Սահմանադրական իրավունքն ամրագրում է հասարակության քաղաքական համակարգի հիմքերը, բնորոշում է պետության քաղաքական կուրսը, պետական որոշումների ընդունման մեխանիզմը, ընտրական համակարգը, ինչպես նաև կարգավորում է ներքաղաքական հարաբերությունների լայն սպեկտր: Վերջին տասնամյակի ընթացքում ազգային սահմանադրական իրավունքը ամբողջովին նորացվել է, նրա առարկան զգալիորեն ընդլայնվել է, հատկապես 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի եղանակով ընդունված ՀՀ Սահմանադրության նոր փոփոխված խմբագրությունը: Արմատական փոփոխությունների է ենթարկում ընտրական

<sup>163</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Դասագիրք բուհերի համար: Երևան, 2012, էջ 15-16:

իրավունքը, իշխանության ներկայացուցչական մարմինների գործունեությունը, օրենսդրորեն ապահովվում է բազմակուսակցականությունը, քաղաքական և գաղափարախոսական բազմակարծությունը, խոսքի ազատությունը, ընդդիմախոսության գոյությունը, հրապարակայնությունը, հիմնվել է սահմանադրական վերահսկողության համակարգը:

Ներքին հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հետ մեկտեղ աշխարհում նկատվում է նաև արտաքին քաղաքականության սահմանադրականացում: Ըստ երկրների սահմանադրական իրավունքում աճում է պետության արտաքին քաղաքականությունը, այս բնագավառում նրա նպատակին, սկզբունքներին, իշխանության մարմինների լիազորություններին նվիրված նորմերի քանակը: Այդուհանդերձ միջպետական արտաքին-քաղաքական հարաբերությունների մեծ մասը կարգավորվում է միջազգային հանրային իրավունքով, որի դերն ու նշանակությունը, չնայած առանձին դեպքերի, տասնամյակներում շարունակում է աճել: Պետության մեջ և միջազգային ասպարեզում իրավական նորմերի կողմից քաղաքական հարաբերությունների ավելի ու ավելի լայն սպեկտրի միջնորդայնացումը վկայում է գլոբալացման գործընթացների պայմաններում իրավունքի քաղաքականացման միտման մասին:

Իրավունքի և քաղաքականության հարաբերակցության խնդիրը գոյություն ունի վաղուց: Իրավաբանական գրականության մեջ շատ է խոսվում իրավունքի գերակայության և իրավական պետության մասին: Սակայն իրական կյանքը ցույց է տալիս, որ իրավունքի ու քաղաքականության ընդհարման դեպքում գերակայում է մեծ մասամբ քաղաքականությունը: Քաղաքական հարաբերությունների ոլորտում իշխանությունների գործունեության հանդեպ ժողովրդի կողմից վերահսկողության ապահովումը, քաղաքականության ժողովրդավարական, բաց, կանխատեսելի և արդյունավետ բնույթի հաստատումը կնպաստի իրավունքի կարգավորիչ դերի մեծացմանը: Քաղաքականությունն այսօր պետք է գործի իրավական տարածության մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ է քաղաքական հարաբերությունների հստակ և մանրամասն իրավական կանոնակարգում: Այս դաշտում ազգային իրավունքը անհերքելի ձեռքբերումների հետ մեկտեղ բնորոշվում է նաև ակներեւ բացերով և

անկատարելիությամբ: Վերջին երկու տարիների ընթացքում ազգային քաղաքական կառուցվածքի առանձին հարցերը կարգավորող օրենսդրական ակտերի մեջ արվեցին մի շարք փոփոխություններ: Բարեփոխվել է մասնավորապես ընտրական իրավունքը, քաղաքական և հասարակական կազմակերպությունների մասին օրենսդրությունը և այլն: Սակայն այդ բարեփոխումներն ուղղված էին առաջին հերթին, քաղաքական հարաբերությունների կարգավորման ոլորտում պետական սկիզբների ամրապնդմանը, ինչը մեկ անգամ ևս խոսում է իրավունքի հանդեպ քաղաքականության գերակայության մասին: Այնինչ քաղաքականության հանդեպ իրավունքի գերակայության ապահովումը կնպաստեր նրան, որ օրենսդիրներն ուշադրություն կդարձնեին պետական ծառայողների պատասխանատվության բարձրացման և քաղաքացիների կողմից պետական ապարատի գործունեության հանդեպ վերահսկողության հարցերին: Արդեն բազում տարիներ գիտական հասարակայնությունը քննարկում է քաղաքացիների դիմումների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվության քաղաքացիների համար հասանելիության մասին, ինչպես նաև քաղաքացիների և պետական ծառայողների փոխհարաբերությունները կարգավորող օրենքների ընդունման անհրաժեշտությունը:

Համաշխարհային պատմությունն իրենից ներկայացնում է ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց ձգտում դեպի ավելի ու ավելի մեծ ազատություն: Անձնական կախվածության, ճնշման, կեղեքման տարբեր ձևերից ձերբազատման՝ պատմության մեջ տեսանելի գործընթացը միաժամանակ նաև իրավական առաջընթաց է՝ այդ զարգացող ազատության դրսևորման, գոյության և պաշտպանության իրավական (և պետական) ձևերում արտահայտվող գործընթաց<sup>164</sup>: Ժամանակակից ազգային իրավական համակարգը դառնում է հասարակական կյանքի ժողովրդավարացման և հումանիզացման, անձի, նրա ազատության, իրավունքների ու շահերի սահմանման, ապահովման և պահպանման կարևորագույն միջոց:

Ազգային իրավունքի և օրենսդրության մեջ ևս ամրապնդվում են ժողովրդավարության և հումանիզմի միտումները: Անցած տարիների ընթացքում հսկա

---

<sup>164</sup> Нерсисянц В. С. Философия права. М., Норма. 2006, с. 25.

աշխատանք է արվել ազգային օրենսդրության ողջ համակարգի բարեփոխման ուղղությամբ: Ընդունվել են նշված միտումները արտահայտող կարևորագույն օրենսդրական ակտեր (Քրեական դատավարության, Քաղաքացիական դատավարության, Վարչական դատավարության օրենսգրքերը, Դատական օրենսգիրքը և այլն):

Փոփոխություններն, առաջին հերթին, առնչվեցին սահմանադրական դիրավունքին, ինչն արտահայտվեց, ինչպես արդեն ասվել է, ազգային պետության կառուցվածքի և գործունեության ժողովրդավարական սկզբունքների զարգացման և խորացման, մարդու իրավունքների ու ազատությունների որպես բարձրագույն արժեք հռչակման, դրանց ապահովման ու պաշտպանման մեխանիզմների ստեղծման տեսքով:

Միջազգային հանրային իրավունքի զարգացումը վկայում է մարդու իրավունքների ավելի ու ավելի հանգամանալից և համակողմանի միջազգային-իրավական կարգավորման մասին: Ազգային իրավական համակարգը հաշվի է առնում 20-րդ դարում ձևավորված իրավական ստանդարտները, ամրագրված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում Քաղաքական ու քաղաքացիական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին դաշնագրերում, քաղաքացիների այս կամ այն կատեգորիաների (կանանց, երեխաների, հաշմանդամների և այլն) պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիաներում: Հայաստանի կողմից վավերացումը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան, և դրան կից Արձանագրությունը, կոնվենցիայի ու Արձանագրությունների մեկնման և կիրառման հարցերով Մարդու իրավունքների հարցերով Եվրոպական դատարանի պարտադիր դատավարության ճանաչումը ազգային պետության առջև դնում է օրենսդրության հետագա կատարելագործման խնդիր՝ հաշվի առնելով Եվրոպայի Խարիրդի իրավունքը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Հանրային իրավունքի (սահմանադրական, վարչական, պետական, կառավարման) արմատական՝ բարեփոխումները պայմանավորված է նաև նրանով, որ ազգային նոր օրենսդրությունում հաշվի են առնվել ստանդարտներ, որոնց

գերակայությունն է հանդիսանում մարդու իրավունքների պաշտպանությունը ադմինիստրացիայի կամայականություններից, կառավարման կայունությունը, դրա արդյունավետության ապահովումը, գործադիր իշխանության անխտիր բոլոր սուբյեկտների գործունեության դատական վերահսկումը: Սահմանադրական և վարչական իրավունքի նորմերն ու ինստիտուտները ձեռք են բերում նոր բովանդակություն, ուղղված իրավաբանական այնպիսի գոծուն մեխանիզմների և ընթացակարգերի ստեղծմանը, որոնք կապահովեն քաղաքացիների և նրանց միավորումների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը հանրային ադմինիստրացիայի կազմակերպման ու գործունեության ոլորտում:

Ժողովրդավարացման և հումանիզացման հետ կապված առավել նկատելի փոփոխությունները տեղի են ունեցել դատավարական իրավունքի ճյուղերում: Դա հանգեցրեց քրեական իրավունքում քաղաքացիների իրավունքների պաշտպանության ամրապնդմանը<sup>165</sup>, ներմուծվել է նախաքննության մարմինների բոլոր գործողությունների և որոշումների բողոքարկման ինստիտուտը, քննչական որոշ գործողությունների դատական սանկցավորում և այլն: Դատավարական կարևոր ձեռքբերումներ են վարչական պատասխանատվության ենթարկված անձանց իրավունքների երաշխիքների էական ընդլայնումը, հավասարության և օրինականության սկզբունքի հռչակումը վարչական պատասխանատվության միջոցների կիրառման ժամանակ<sup>166</sup>: Ամրապնդվում է բոլոր տեսակի դատավարություններում կողմերի մրցակցության և հավասարության սահմանադրական սկզբունքը: Քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում կատարված զգալի փոփոխությունները նպատակ ունեին բարձրացնել քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության մակարդակը:

Ազգային իրավական համակարգի բարեփոխման հետագա ուղղություններից մեկն է հանդիսանում քրեական քաղաքականության հումանիզացումը, ինչն իր արտահայտությունն է գտնել քրեական օրենսդրության նորացման մեջ. Քրեական

<sup>165</sup> Մանրամասն տե՛ս **Аветисян С.С.** Проблемы разграничения преступного от не преступного поведения. Ереван, 2011; Նույնի, Проблемы уголовно-правовых охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016.

<sup>166</sup> Մանրամասն տե՛ս **Դանիելյան Գ.Բ.** Վարչական պատասխանատվություն: Երևան, 2002:

օրենսգրքով սահմանված համակարգից հանվել են պատիժների որոշ տեսակներ, ներմուծվել են դրանց ավելի մեղմ տարբերակներ, կոնկրետացվել են քրեական հիմքերը, նվազեցվել է քրեական պատասխանատվությունից և պատժից ազատման օրենքի ռեպրեսիվության մակարդակը<sup>167</sup>:

Ազգային իրավական համակարգի զարգացման միտումներից է նաև շրջակա միջավայրի արդյունավետ և օպտիմալ պահպանումը: Կասկած չկա, որ այսօրվա էկոլոգիական հիմնախնդիրների լուծումից է կախված ապագա սերունդների ճակատագիրը:

Այս կապակցությամբ մեծանում է մոլորակի էկոլոգիական անվտանգության իրավական հստակ և մանրամասն կարգավորման, բնական միջավայրի պահպանման և պաշտպանման, բնական պաշարների խելամիտ և արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: Արդի բոլոր պետությունների իրավական համակարգերում ծագել է իրավական նոր գոյացություն՝ բնապահպանական (էկոլոգիական) իրավունքը, որի գաղափարախոսական հիմքն է հանդիսանում էկոլոգիական անվտանգության և հաստատուն զարգացման ապահովումը:

Էկոլոգիական գործոնը որոշակի ազդեցություն է գործում իրավունքի հետագա զարգացման վրա: Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ ժամանակակից իրավական զարգացման կարևորագույն միտումներից մեկն է դառնում իրավունքի էկոլոգիացումը:

Ինտենսիվ կերպով զարգանում է բնապահպանական օրենսդրությունը: Այն իրենից ներկայացնում է իրավական նորմերի ընդարձակ զանգված, որն առաջին հերթին ներառում է բնապահպանական օրենսդրությունը, որի կարգավորման առարկա են հանդիսանում շրջակա միջավայրի պահպանման և պաշտպանության ոլորտի հասարակական ինչպես նաև բնապաշարային օրենսդրությունը, որը կարգավորում է հասարակական հարաբերությունները բնական պաշարների խելամիտ օգտագործման, պաշտպանության, պահպանման, վերականգնման բնագավառներում (ջրային, հողային, անտառային օրենսգրքեր, ընդերքի, բուսական ու կենդանական աշխարհի մասին օրենսդրություն և այլն): Բնապահպանական օրենսդրության համալիր զանգվածի մեջ են մտնում նաև իրավունքի այլ ճյուղերի «էկոլոգիացված»

<sup>167</sup> Մանրամասն տե՛ս **Аветисян С.С.** Приоритеты и перспективы нового Уголовного кодекса Армении (социально-правовая концепция). Ереван, 2012:

շատ նորմեր: Դրանցից են մասնավորապես Քրեական օրենսգրքի նորմերը էկոլոգիական հանցագործությունների մասին, Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի նորմերը բնապահպանության ոլորտում իրավախախտումների վերաբերյալ և այլն:

Հասարակության կյանքում բնապահպանական գործոնի դերի աճը պահանջում է էկոլոգիական նորմերի անխտիր և համակողմանի հաշվառում տնտեսական ցանկացած գործունեության կարգավորման ժամանակ: Անկասկած, էկոլոգիական իրավունքի դերն այս ոլորտում էլ ավելի է մեծանալու: Լուծում, իրավական ամրագրում և զարգացման խթանում են պահանջում զարգացում ապրող էկոլոգիական մոծումների ու գանձումների հավաքագրմանն ուղղված գործունեությունը, էկոլոգիական արտոնագրումը, էկոլոգիական հավատարմագրումը և բնապահպանական բնույթի մի շարք այլ հրատապ հիմնախնդիրներ: Եվ այն բանից, թե որքան համահունչ կլինի օրենսդրության արձագանքը բնապահպանական խնդիրների վերաբերյալ, կախված կլինի ոչ միայն մեր կյանքի որակը, այլև ապագա սերունդների կյանքը:

Եվ այսպես, գլոբալացման գործընթացների վերափոխիչ ազդեցությունը ազգային իրավական համակարգի նորմատիվային բաղադրակազմի վրա դրսևորվեց մի շարք ուղղություններում: Գլոբալացման գործընթացները, առաջին հերթին, առաջ բերեցին միջազգային և ներպետական իրավունքի մերձեցման և փոխգործակցության խորացման, ինչն էլ պայմանավորեց իրավունքի ստանդարտացում և միջազգայնացում:

Ժամանակակից, այդ թվում ազգային իրավունքի զարգացման մեկ այլ կարևոր միտում է հանդիսանում իրավական կարգավորման ընդլայնումն ու խորացումը: Դա, իր հերթին, հանգեցրեց ազգային իրավունքում և օրենսդրությունում նորմատիվային նոր գոյացումների ծագմանը և հին գոյացությունների ձևափոխմանը: Իրավունքի աղբյուրների համակարգի փոփոխումը՝ որպես գլոբալացմամբ պայմանավորված կարևորագույն միտումներից մեկը, ազգային իրավական համակարգում դրսևորվեց դատական պրակտիկայի, նորմատիվային պայմանագրերի դերի աճի տեսքով: Պետական քաղաքականության սոցիալացումը և 21-րդ դարերի առավել զարգացած պետություններում ակտիվացրեց հանրային իրավունքի գործողության ոլորտի



ընդլայնումը: Ազգային իրավունքի համակարգում դա հանգեցրեց մասնավոր և հանրային իրավունքի միջև սահմանների ողողման, իսկ օրենսդրության համակարգում՝ համալիր նորմատիվային գոյացությունների աճի: Ժամանակակից իրավունքի զարգացման միտումների շարքում անհրաժեշտ է նշել ժողովրդավարական պայմաններում իրավական ընթացակարգերի ու գործընթացների աճող նշանակությունը, ինչպես նաև բուն իրավունքի ժողովրդավարացումն ու հումանիզացիան: Էկոլոգիական ճգնաժամի սրացումը պայմանավորում է բնապահպանական նորմերի մեծացող նշանակությունը:

Ինչպես արդեն նշվել է, միջազգային հանրության հետ ազգային հասարակությունների խորացող փոխգործակցության պայմաններում իրավական զարգացման որոշիչ միտումն է դառնում ներպետական և միջազգային իրավական համակարգերի ավելի սերտ փոխգործակցությունը: Ներպետական իրավունքի հանդեպ միջազգային իրավունքի գերակայության ճանաչումը, ինչպես նաև միասնական, մեկ համալիրի մեջ քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության միավորումը առաջ բերեցին ազգային իրավունքի նոր աղբյուրների (ձևերի) օգտագործման: Այդպիսիք են, օրինակ, միջազգային (վերազգային) նախադեպերը և միջազգային սովորույթները:

Միջազգային իրավական արդի զարգացումների բնորոշ առանձնահատկություններից է ոչ միայն այն, որ իրավական գլոբալացման ու միջազգային իրավունքի դերի բարձրացման պայմաններում միջազգային և ազգային իրավական համակարգերի ներդաշնակման հրատապ նոր խնդիրներ են առաջադրվում, այլև ակնհայտ է դառնում մայրցամաքային (ռոմանագերմանական) և նախադեպային (ընդհանուր) իրավական համակարգերի մոտեցման հրամայական պահանջը:

Այս կապակցությամբ, անհրաժեշտ է ընդգծել, որ եվրոպական իրավական համակարգում բացառիկ կարևորելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության երաշխավորի, ներպետական իրավական համակարգերը, այդ թվում՝ առաջին իրավական համակարգը, եվրոպական դատարանի նախադեպային որոշումներն ընդունվում են որպես կատարման համար պարտադիր իրավական ակտ

և ներպետական (ազգային) իրավունքի աղբյուր<sup>168</sup>:

## **2.2. Իրավագիտությունը և ազգային իրավական համակարգի զարգացման հիմնախնդիրները**

Ազգային իրավական համակարգի զարգացման վրա որոշակի դերակատարում ունի նաև իրավական գիտությունը, որը կոչված է ժամանակակից մարտահրավերներին գիտականորեն հիմնավորված լուծումներ և հանձնարարականներ առաջրկել:

Այս իմաստով, իրավական ոլորտում գլոբալացման գործընթացների ազդեցության անցկացված վերլուծության հիման վրա հնարավոր է թվում առանձնացնել իրավագիտության զարգացման միտումները: Դրանք հետևյալն են երևում.

1. Անհրաժեշտ է հստակորեն սահմանել ազգային պետության տեղը, նշանակությունն ու դերը գլոբալացման պայմաններում՝ քաղաքականության, մշակույթի, քաղաքակրթական, իրավական, ազգային ինքնության ոլորտում:

Դա իրավագիտության առաջնահերթ խնդիր է, քանի որ ըստ Ե.Ա. Լուկաշևայի արդարացի կարծիքի, «պետության դիրքից, դրա ռազմավարական շահերից է մեծապես կախված ժողովրդի ու յուրաքանչյուր մարդու՝ առանձին վերցրած, իրենց իրավունքների ու ազատությունների, հասարակության մշակույթի ու ավանդույթների արժանապատվության, դրա յուրօրինակության ու ինքնարժեքության պահպանումը»<sup>169</sup>: Դա հատկապես կարևոր է նաև Հայաստանի համար:

2. Ինչպես նշում է Գ.Ս. Ղազինյանը. «Իրավական համակարգի նման բարեփոխիչ գործընթացի նախադրյալն իրավաբանական կրթությունն ու իրավագիտությունն է: Այն պետք է կարողանա մշակել բարեփոխումների հայեցակարգ և ծրագրեր իրավական համակարգի ամեն մի բաղադրատարրի վերակառուցման համար՝ նպատակ ունենալով ստեղծել կայուն և իրավական բնույթի օրենսդրություն, լավ կազմակերպված ու արդյունավետ գործող պետական ապարատ, ապահովելով իրավագիտակցության

<sup>168</sup> Տե՛ս նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն: Երևան, 2005, էջ 7:

<sup>169</sup> **Право и права человека в условиях глобализации (научная конференция) // Государство и право. 2006. N 2. С. 105.**

բարձր մակարդակ»<sup>170</sup>:

3. Ազգային պետությունների ու իրավական համակարգերի գլոբալացման պայմաններում պահպանման ու ամրապնդման գծով միջոցառումները՝ ապահովելու ու պաշտպանելու համար սեփական պետաիրավական շահերն ու հոգևոր-մշակութային արժեքները չպետք է հակադրվեն այլ ժողովուրդների ու երկրների շահերին ու արժեքներին, ինչպես նաև համակրթական արժեքներին ու շահերին:

Գլոբալացման գործընթացը պետք է զարգանա իր վրա ազգային պետությունների ու դրանց իրավունքների ակտիվ ազդեցության ներքո՝ գլոբալ-համակարգային ամբողջականության բոլոր ազգային պետությունների շահերը ներդաշնակորեն զուգորդող աստիճանական կայացման ուղղությամբ, այլ ոչ թե զարգացած երկրների՝ այլ երկրների նկատմամբ տիրապետության փաստացի սահմանման ուղղությամբ:

4. Անհրաժեշտ է հստակ սահմանել Հայաստանի գլոբալացման գործընթացների մեջ մտնելու ռազմավարությունը, հաշվի առնելով ազգային շահերն ու առաջնահերթությունները: Ընդ որում սահմանել այն սկզբունքներն ու պայմանները, որոնց կատարման ժամանակ կաճեին գլոբալացման դրական արդյունքները և նվազեցվեին դրա բացասական հետևանքները:

Դրա համար հարկավոր է ելնել հիմնական սկզբունքից՝ գլոբալացման մարդկային չափումից, որը պետք է ցույց տա մարդու, ժողովուրդների, իրենց կենսակերպի վրա ազդեցության ամբողջ ընդգրկույթը: Մարդու իրավունքներն ու ժողովուրդների իրավունքները հանդիսանում են ժողովուրդների կենսագործունեության այն գլխավոր արժեքային բնութագրերով, որոնք կոչված են ապահովել ազատությունը, արդարությունը, արժանապատվությունը, ազգի ինքնությունը:

Հենց այդ արժեքների պրիզմայի միջոցով է հարկավոր գնահատել ու ընկալել գլոբալացման կողմերն ազգային պետության ու իրավական համակարգի համար:

5. Միասնական մոտեցում մշակել գլոբալացման՝ իբրև բազմակողմանի երևույթի նկատմամբ ընկալման նկատմամբ, ոչ միայն ֆինանսատնտեսական տեսանկյունից, որը շոշափում է, առանց բացառության բոլոր պետությունների կենսագործունեության բոլոր ոլորտները:

<sup>170</sup> **Ղազինյան Գ.Ս.** Հայ իրավագիտության ձևավորման պատմական առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները // լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (641), Երևան, 2014, էջ 148:

6. Հատուկ արդիականություն է ստանում գիտական գործունեության զարգացումն ու որակական կատարելագործումը, որն անքակտելիորեն կապված է գոյություն ունեցող իրավական փորձի հետ, ժամանակակից պետության հստակ իրավական քաղաքականության մշակումը, որը և պետք է հաշվի առնի հասարակության ու պետության արդի պահանջները՝ միջին ու երկարաժամկետ հեռանկարի վրա հաշվարկի հետ զուգորդված: Արևմուտքի առավելապես զարգացած երկրների կլանող ձգտումներին հակազդելու եղանակներից մեկն է հանդիսանում շահերի, մշակութապատմական ու աշխարհագրական առանձնահատկությունների ընդհանրության հիման վրա:

7. Տեսական ու ճյուղային իրավական գիտությունների ներուժի հիման վրա միավորել բազմաթիվ տեսությունները, հայեցակարգերը մարդու իրավունքների ոլորտում՝ մարդու իրավունքների հիմնարար հայեցակարգերում, որոնք կողմնորոշված են սեփական քաղաքացիների վրա, չկրկնօրինակելով արևմտյան հայեցակարգերը: Ժամանակակից իրավագիտությունը պետք է ավելի քննադատորեն վերաբերվի սեփական առաջնահերթություններին ու խնդիրներին:

8. Պետական մակարակի վրա ապահովել քաղաքացիների իրավագիտակցության ու իրավական մշակույթի առաջնահերթային զարգացումը՝ հաշվի առնելով ազգային մտածելակերպի ձևավորման մշակութապատմական համատեքստը: Մեր կարծիքով, դա մի շարք պատճառներով առաջնահերթ ուղղություն է:

Առաջինը, իրավագիտակցության ու իրավական մշակույթի մակարդակից անմիջականորեն կախված է ինչպես նորմատիվ-իրավական ակտերի բովանդակությունը, այնպես էլ իրենց կիրառման արդյունավետությունը:

Երկրորդը, իրավական համակարգի համապատասխան մակարդակը ազգային պետության ու դրա իրավական համակարգի համաշխարհային գլոբալիզացիոն գործընթացների մեջ հաջողությամբ մտնելու անհրաժեշտ նախադրյալ է՝ առանց վնասելու ազգային-պետական շահերը:

9. Անհրաժեշտ է ստեղծել արդյունավետ իրավական մեխանիզմ, որն ապահովում է պետության ադեկվատ արձագանքը գլոբալացման մարտահրավերներին:

Որպեսզի դա չդառնա ձևական հոչակում, նպատակահարմար է թվում մշակել

այդպիսի մեխանիզմները ինչպես տեսական, այնպես էլ կոնկրետ ճյուղային գիտությունների մակարդակի վրա:

Օրինակ, մշակել մոդելային ակտեր կամ հոչակագրեր, որոնք պարունակում են արդյունավետ օրենսդրության ստեղծում դրա կատարման ու պահպանման հսկողության ստեղծում: Հասարակության ու բնության ոլորտի նկատմամբ կիրառելիս այդպիսի ռազմավարությունը սահմանված է Շրջակա միջավայրի ու զարգացման գծով ՄԱԿ-ի Կոնֆերանսի Հոչակագրում, որն ընդունվել է Ռիո-դե-ժանեյրոյում 1992 թ.-ին: Հոչակագիրը պարունակում է բնապահպանական իրավունքներին, արդյունավետ բնապահպանական օրենսդրության ու դրա կատարմանը վերաբերվող դրույթները<sup>171</sup>:

10. Ժամանակակից աշխարհում մեծանում է գիտնական տեսաբանների ու փորձագետների նշանակությունը՝ նոր արժանապատիվ աշխարհակարգ ձևավորելու նպատակներով: Գլոբալացման պայմաններում չի կարելի առաջնահերթությունը տալ տեսությանը կամ փորձին, համաիրավական գիտությանը՝ հատուկ իրավական հետազոտությունների նկատմամբ: Այդ ամենը պետք է տեղի ունենա միասնության ու սերտ փոխկապակցվածության մեջ: Դրա հաստատումները մեկն արդեն իսկ հստակ որպես իրավաբանության ինքնուրույն ոլորտ հաստատված հարաբերական իրավագիտություն է:

11. Ժամանակակից իրավագիտությունը պետք է ապահովի վաղաժամ մասնագիտական կանխատեսում ու ազգային իրավական համակարգի վրա գլոբալացման բացասական ու դրական ազդեցության սահմանում: Դրա համար անհրաժեշտ է գլոբալացման ազդեցության տակ տեղի ունեցող գործընթացների օբյեկտիվ, քննադատական վերլուծություն, որոնք շոշափում են պետության և հասարակության կենսագործունեության բառացիորեն բոլոր ոլորտները:

Այդ ուղղության մեջ հնարավոր չէ հրաժարվել ժամանակակից իրավական գիտությունների համալիր հետազոտություններից: Առաջին հերթին անհրաժեշտ է զարգացնել համեմատական իրավագիտությունը, անցկացնել համեմատական-իրավական հետազոտություններ՝ ինչպես մակրո-, այնպես էլ միկրոմակարդակներում: Հենց համեմատական իրավագիտության գիտական ներուժը թույլ կտա առանց

---

<sup>171</sup> Декларации Конференции ООН по окружающей среде и развитию Рио-де-Жанейро в 1992 г.

առավելագույն կորուստների ներկառուցվել գլոբալիզացիոն գործընթացների մեջ ու թույլ կտա ազգային իրավական համակարգին արժանի տեղ զբաղեցնել ժամանակակից իրավական համակարգերի շարքում:

Ընդհանրացնելով իրավական ոլորտում գլոբալացման հետազոտությունը, մեր կարծիքով, հարկավոր է առանձնացնել դրա հատկապես նկատելի ազդեցության հստակ սահմանված բաժինները, որոնք լուրջ փոփոխություններ են բերում ժամանակակից աշխարհի պետությունների ու իրավական համակարգերի փոխգործության համար.

- իրավագիտություն.
- իրավական համակարգերի փոխադարձ մերձեցում ու համագործակցություն.
- պետությունների գործունեության իրավական կարգավորում.
- իրավական մշակույթ:

Գլոբալացման պայմաններում ազգային իրավական մշակույթի հետազոտման ժամանակ հարկավոր է ի նկատի ունենալ մի քանի մեթոդաբանորեն կարևոր հանգամանքներ:

Առաջինը, հնարավոր է իրավական մշակույթի զարգացման միայն միտումների նշումը, քանի որ քանակական կանխատեսումների ցանկացած փորձերն անհաջողության են մատնված: Երկրորդը, հայրենական մշակույթն իրավական մշակույթի ոչ պակաս կարևոր բաղադրիչ է և հանդես է գալիս իբրև հասարակության ու իրավական համակարգի մասին այս կամ այն դատողության յուրօրինակ նախախիմք: Հենց մշակույթի գիտակցման միջոցով էլ այսօր կանխորոշվում է Հայաստանի՝ իբրև ինքնուրույն պետության, զարգացման պատմամշակութային ճանապարհի յուրահատկությունը: Ուստի ժամանակակից սոցիոմշակութային իրադրության երևույթն անհրաժեշտ է դիտարկել ինչպես իրավական մշակույթի ներքին վիճակի դիրքից /դրա բովանդակայի կողմ/, այնպես էլ հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ փոխադարձ կապի մեջ, քանի որ սոցիո-մշակութային իրադրությունը հենց պայմանավորված է պատմական, քաղաքական, էթնիկական, տնտեսական ու սոցիալական պատճառների մի ամբողջությամբ:

Երրորդը, ազգային իրավական համակարգի վիճակի ու իրավական մշակույթի

էության հետազոտումն անհրաժեշտ է իրականացնել ոչ թե ձևական-իրավաբանական մոտեցման դիրքից, այլ հոգևոր-մշակութաբանական մոտեցման դիրքից, որի ներուժը թույլ է տալիս ուսումնասիրել իրավունքի խորքային, հոգևոր հիմքերը, թույլ է տալիս պատկերացում ձևավորել իրավական մշակույթի մասին՝ ռուսական ազգային մշակույթի աշխարհայացքային, մտավոր իմաստների համալիրի միջոցով:

Չորրորդը, ժամանակակից ազգային տրանսֆորմացիոն փոփոխությունների առանձնահատկությունները պետք է դիտարկվեն սոցիոմշակութային շրջապատի համատեքստում, ելնելով հասարակության՝ իբրև ոչ թե ինստիտուտների համակարգի, այլ իբրև արժեքների իրացման գործընթացի մասին, որոնք իրենցից ներկայացնում են տեղի ունեցող երևույթների գնահատման ունիվերսալ չափանիշներ՝ ըստ իրենց այս կամ այն ուղղվածության /բացասական կամ դրական/ աստիճանի: Ելնելով դրանից, Հայաստանի պատմական դինամիկայի բոլոր սոցիոմշակութային երևույթները կարելի է բերել երեք հիմքային արժեքների՝ անկախության, հոգևորության, ինքնավարության գաղափարներին, որոնք որոշակի կողմնորոշիչներ են հանդիսանում ոչ միայն հասարակական կառուցվածքի վերլուծության ու գնահատման, այլև իրավական համակարգի կառուցման համար:

Ազգային իրավական մշակույթի ժամանակակից վիճակի սահմանման նկատմամբ տարբեր տեսակետերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարող է բնութագրվել ավանդույթի ու մոդեռնիզացիայի /նորարարության/ միտումների համատեքստում, այն է՝ այդ միտումների ու տարբեր պետաիրավական ձևերում իրենց հետ առնչվող տարբեր երևույթների համաներկայությամբ:

Երրորդը, Հայաստանի ժամանակակից դրության ու իրավական մշակույթի էության հետազոտումն անհրաժեշտ է իրականացնել ոչ թե ձևական իրավաբանական մոտեցման դիրքերից, այլ հոգևոր-մշակութաբանական մոտեցման դիրքից, որի ներուժը թույլ է տալիս ուսումնասիրել իրավունքի խորքային, հոգևոր հիմքերը, թույլ է տալիս պատկերացում ձևավորել իրավական մշակույթի մասին՝ ազգային մշակույթի աշխարհայացքային համալիրի միջոցով:

Չորրորդը, ժամանակակից Հայաստանում տրանսֆորմացիոն փոփոխությունների առանձնահատկությունները պետք է դիտարկվել սոցիալ-մշակութային շրջապատի

համատեքստում, ելնելով հասարակության՝ իբրև ոչ թե ինստիտուտների համակարգի, այլ արժեքների իրացման գործընթացի մասին պատկերացումից, որոնք իրենցից ներկայացնում են տեղի ունեցող երևույթների գնահատման ունիվերսալ չափանիշեր՝ ըստ իրենց այս կամ այն ուղղվածության /բացասական կամ դրական/ աստիճանի: Ելնելով դրանից, Հայաստանի պատմական դինամիկայի բոլոր սոցիոմշակութային ֆենոմենները կարելի է հանգեցնել երեք հիմքային արժեքներին՝ անխակության, հոգևորության, ինքնատիպության գաղափարներին, որոնք հանդիսանում են որոշակի կողմնորոշիչներ ոչ միայն հասարակական կարգավորման վերլուծության ու գնահատման համար, այլև իրավական համակարգը կառուցելու համար:

Ազգային իրավական մշակույթի ժամանակակից վիճակի սահմանման նկատմամբ տարբեր տեսակետների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարող է բնութագրվել ավանդույթի ու արդիականացման /նորարացման/ համատեքստում, այն է՝ այդ միտումների ու դրանց հետ կապված երևույթների համատեղ ներկայությանը տարբեր պետաիրավական ձևերում:

Ընդ որում անվանված միտումները ներթափանցում են իրավական մշակույթի ողջ կառուցվածքը, դրանք բացահայտվում են ինչպես դրա բովանդակային, այնպես էլ՝ ձևական բաղադրիչի հետազոտման ժամանակ, ստանալով երբեմն բավականաչափ յուրօրինակ ձևեր, որոնք կարող են պայմանավորել իրավական մշակույթի և ընդհանուր առմամբ ազգային իրավական համակարգի հետագա զարգացումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար ենք համարում անցկացնել ժամանակակից ազգային իրավական մշակույթում ավանդույթի ու արդիականացման միտումների ավելի մանրամասն վերլուծություն:

Իրավական նորարարությունների ամրապնդման սկզբնական փուլի ներքին մեխանիզմը սխեմատիկորեն կարելի է նկարագրել հետևյալ կերպ: Ազգային իրավական ավանդույթը միասեռ չէ. հիերարխիկ, ավտորիտար, պարտիկուլյարիստական սկզբունքների հետ մեկտեղ այն պարունակում է նաև էգալիտար, ժողովրդավարական ու ունիվերսալիստական արժեքները: Հավանաբար, որոշակի նմանության որոնումը, որը սկսում է իրավական նորարարությունների սկզբից հետո տեղի է ունենում իրավական ավանդույթի հենց այս՝ առավել մոտ բովանդակություն ունեցող իրավական



ավանդույթի հատվածում: Նոր իրավական արժեքներն ու ինստիտուտները վերափոխվում են: Իրենք միանում են ավանդական /առավել մոտիկ ոգով ու սկզբունքով/ ավանդույթների հետ, ծնելով արժեքային, կոգնիտիվ ու ինստիտուցիոնալ «հիբրիդներ»: Ժամանակակից արժեքները ծածկվում են ավանդույթի տակ, այսինքն՝ ձեռք են բերում ավանդական թաղանթ /որպես օրինակ կարող է ծառայել Հայաստանի զարգացման «սեփական» կամ «երրորդ ճանապարհ» հայեցակարգը/: Այդ ժամանակ պակաս կարևոր չէ այն հարցը, թե ինչ է տեղի ունենում մյուս «կեսի» հետ, այսինքն՝ իրավական ավանդույթի հետ, որը մտել է երկխոսության մեջ կամ սիմբիոզի մեջ ժամանակակցության հետ: Ինչպես մեզ թվում է, նոր համատեքստում վերակառուցվում է կառուցվածքն ու փոխվում են ավանդույթի հատկանիշները: Սկսվում է ավանդական բաղադրիչների մուտացիան. իրենց բաղադրիչների մասով դրանք աստիճանաբար մոտենում են հիբրիդային ձևի հակառակ «կեսի» հետ: Ավանդույթը «վերամեկնաբանվում» է նոր ձևով: Եթե նորի յուրացումն ընթանում է ռեդուկցիայի միջոցով, ապա հնի ադապտացումն իրականացվում է մուտացիայի միջոցով՝ ավանդույթը բացահայտում է նոր հատկությունները:

Իրավական գիտակցության ու իրավական մշակույթի մեջ գործընթացների մեծ մասը հարկավոր է որակել հաշվի առնելով իրենց «երկակի» կարգավիճակը, այն է տարբեր ձևերով իրավական նորարարությունների ու ավանդույթների առկայությունը:

Նորարարություններն ու ավանդույթները միշտ ներկա են եղել ազգային մշակույթում և իրավական մշակույթում՝ մասնավորապես: Դրա ակնհայտ վկայությունները ներկա են մեր օրերին, դրանք մեծ քանակությամբ ներկա են նաև մեր երկրի մշակութաիրավական պատմության մեջ:

Ավանդույթի ու արդիականացման միտումները դրսևորվում են իրավական մշակույթի նյութական բաղադրիչի ոլորտում: Այդ առումով առավելապես ակնառու են հանդիսանում նաև օրենքի ու օրինականության մասին պատկերացումները հայ հասարակության ժամանակակից իրավական մշակույթում:

Եզրակացնելով գլոբալացման պայմաններում ազգային իրավական համակարգի զարգացման առանձնահատկության վերաբերյալ, հարկավոր է նշել հետևյալը.

1. Ազգային իրավական համակարգի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել,

որ այսօր այն կարող է բնութագրվել երկու միտումների համատեքստում՝ ավանդույթի ու արդիականացման, այն է՝ տարբեր պետաիրավական ձևերում նորարարությունների ու ավանդույթների համաներկայությամբ: Ընդ որում իրավական համակարգի ոլորտում ժամանակակից մշակութային ու իրավական արժեքները ծածկվում են ավանդույթի տակ, իրենք միացվում են ավանդականներին, ծնելով արժեքային, կոգնիտիվ ու ինստիտուցիոնալ հիբրիդներ:

2. Նորարարություններով ու ավանդույթներով պայմանավորված յուրօրինակ էկլետիզմը միշտ ներկա է ժամանակակից ազգային իրավական համակարգում, սակայն, այսօր Հայաստանում էկլետիզմն ունի նոր, հետմոդեռնիստական որակ՝ ամենը թույլատրված է, ամենը հնարավոր է: Երկու այս փոխկապակցված միտումների առկայությունը ծնում է հասարակության տարբեր խմբերի որոշակի հետմոդեռնիստական ոչ միաժամանակություն, երբ որոշներն իրենց հայացք են նետում դեպի անցյալ, իսկ ուրիշները հնարավորություններ ունեն լիովին օգտվելու ներկայի բարիքներով: Նման հետմոդեռնիստական ոչ միաժամանակությունը, որն ի հայտ է եկել իբրև գլոբալացման հետևանքներից մեկը, մեծացնում է հնարավորությունների թիվը՝ անձի ու հասարակության կողմից սեփական շահերի ու նպատակաուղղվածությունների իրացման համար, սակայն, ժամանակային տարբեր շերտերի երկրի այս բաժանումն անվտանգ չէ: Մոդելն ապագայի համար կարող է առաջանալ դրանից միայն այն ժամանակ, երբ Հայաստանը կգա սեփական անցյալի նկատմամբ ըմբռնմանն ու համաձայնությանը և ճանապարհ կգտնի այնպիսի ժամանակակից կյանքի մեջ, որը կմիավորի հասարակությունը բազմակարծիության հիմքերով: Ընդ որում կարևոր է հասկանալ, որ եթե նորարարությունները չեն ընկալվում իբրև անհրաժեշտ ու կառուցողական, չեն առաջացնում դրական հույզեր, այլ, ընդհակառակը, հրահրում են զանգվածային դիսկոմֆորտ վիճակ, ապա դա կարող է առաջացնել սոցիալական ագրեսիվության պոռթքում բնակչության որոշ մասի մոտ»:

3. Նշված ավանդույթների հետազոտումը բերում, է այն եզրակացությանը, որ հենց իրավական համակարգը և իրավական մշակույթը, որոնք պայմանավորում են ազգային իրավական համակարգի բնույթը, թույլ է տալիս վերջինիս հարաշարժությունը՝ մշտապես փոխարինելով արտաքին միջավայրի հետ, դրա

ժամանակակից գոյության համատեքստի դերում հանդես եկող գլոբալացման գործընթացների հետ: Ընդ որում իրավական համակարգը վերափոխվում է ինչպես ինքն իր ներսում սեփական հոգևոր, մշակութային, իրավական ինստիտուտների ու սկզբունքների նորացման ու կատարելագործման շնորհիվ, այնպես էլ հարաբերություններ կառուցելով ժամանակակից այլ իրավական համակարգերի հետ, հաշվի առնելով սեփական շահերն ու պահանջները:

Մյուս կողմից, այս միտումների ներկայությունը ազգային իրավական մշակույթում թույլ կտա ավելի արդյունավետ ու արագ վերականգնել հայ իրավական ու փիլիսոփայական մտքի ժառանգականությունը, որոնցում երևում է հայրենական իրավական մշակույթի «փրկության» հնարավոր տարբերակներից մեկը:

4. Ժողովրդի իրավագիտակցության մեջ ավանդույթի այնպիսի համընդհանուր ճանաչված յուրօրինակ ատրիբուտների բարձրացում, ինչպիսիք են «պետությունը», «իրավունքը», «օրինականությունը», «արդարությունը», «արդարադատությունը», և հարակից այլ արժեքները հավասար չափով կարող են գնահատվել նաև իբրև ազգային մշակույթի և մտածելակերպի դրսևորում, և իբրև շարունակվող արդիականացման վկայություն: Կարելի է պնդել, որ իրավական ընդհանուր պատկերացումների ավանդականությունը զուգորդվում է ճանաչողական ու արժեքային ձեռքբերումներով: Իրավագիտակցությունը որոշ չափով դառնում է ավելի դիֆերենցված և ավելի իրատեսական:

Ազգային իրավական համակարգին և իրավական մշակույթին ամբողջականություն հաղորդելու ու վերադարձնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին սեփական ինքնության ինքնաճանաչումն ու ինքնորոշումը, քանի որ այդ են պահանջում ազգային խնդիրները և դրանց համարժեք լուծմանն ուղղված ազգային ինքնագիտակցությունը (այդ թվում իրավագիտությունը) և ազգային ողջ ներուժը (այդ թվում սփյուռքահայության):

### **2.3. Ազգային իրավունքի զարգացման միտումները իրավական գլոբալացման պայմաններում**

Արդի ժամանակաշրջանում իրավական համակարգերի փոխազդեցությանը

համամիասնականացումը ընդհանուր գլոբալացման կարևոր բաղադրիչներից են<sup>172</sup>: Ինչպես նշեցինք, գլոբալացումը համաշխարհային, մակրոտարածաշրջանային և ներազգային մակարդակներով էական ազդեցություն է գործում պետական-իրավական ինստիտուտների նորմերի և հարաբերությունների ձևափոխման, վերափոխման և արդիականացման վրա, այն խթանում, արագացնում ու նորացնում է ունիվերսալացման գործընթացները իրավունքի, պետության կազմակերպման և գործառնության բնագավառներում<sup>173</sup>: Այս ամենը բնորոշում է ազգային իրավական համակարգի ներկա վիճակի և զարգացման հեռանկարների վրա ընդհանուր գործընթացների հիմնական ուղղությունների բովանդակության և իմաստի իրավաբանական վերլուծության հրատապությունը՝ հաշվի առնելով համաշխարհային միտումները, արտասահմանյան փորձը և ազգային իրավական համակարգի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները: Գլոբալացման իրավական առումների հետազոտության գիտական և գործնական նշանակությունը իրավական քաղաքականության հայեցակարգի մշակման համար կարևորվում է նաև այն հանգամանքով, որ իրավաբանական գրականության մեջ այս հիմնահարցը անբավարար է հետազոտված<sup>174</sup>:

Գլոբալացման գործընթացներին հաջող և արգասաբեր մասնակցությունը պահանջում է համապատասխան կերպով գիտականորեն իմաստավորված ու հիմնավորված արտահայտման իրավաբանական արդյունավետ ձևերի կիրառում, հարափոփոխ և հակասական ժամանակակից աշխարհում ազգային նպատակների պաշտպանում և իրագործում, ներպետական և միջազգային հարաբերություններում երկրի իրավական քաղաքականության մտածված և հետևողական հայեցակարգ: Այդ հայեցակարգում, որը նպատակահարմար է ամրագրել պաշտոնական մակարդակով, պետք է իրենց հստակ ձևակերպումը ստանան ժամանակակից իրավական համակարգի կատարելագործման և զարգացման կոնկրետ ուղղություններն ու ձևերը՝ հաշվի առնելով արտասահմանյան զարգացած երկրներում իրավական համակարգերի գլոբալացման և համամիասնականացման գործընթացները, ինչպես նաև

<sup>172</sup> **Марченко М.Н.** Тенденции развития права в современном мире. М., 2015, с. 62-68; Նույնի, Характерные черты и особенности романо-германского права //Государство и право. № 3, 2016, с. 5-11.

<sup>173</sup> Մանրամասն տես՝ **Зорькин В.Д.** Право в условиях глобальных перемен. М., 2013:

<sup>174</sup> Տե՛ս **Скурко Е.В.** Очерки теории права. М., 2013, էջ 57-58:

համաշխարհային քաղաքականության և միջազգային իրավակարգի ձևափոխման արդի միտումները:

Դրա հետ մեկտեղ ժամանակակից ազգային իրավական, սոցիալական, ժողովրդավարական պետության հաստատման և հետագա զարգացման ուղղությունները պետք է մշակվեն և իրականացվեն իրավական քաղաքականության հունում՝ հաշվի առնելով ժամանակակից միջազգային սկզբունքները և ստանդարտները, գլոբալ աշխարհում երկրի ազգային, պետական ինքնիշխանության պաշտպանման և ամրապնդման իրավական եղանակները: Համապատասխանաբար, ազգային իրավական համակարգի կատարելագործման և զարգացման հիմնահարցերը ևս պետք է իմաստավորվեն և լուծվեն, հաշվի առնելով ներպետական պահանջմունքները և համաքաղաքակրթական ձեռքբերումները, որոնք մարդկությունը կուտակել է քաղաքական-իրավական զարգացման նախորդ փուլերում և որոնք պետք է պահպանվեն, հարստացվեն և զարգացվեն ժողովուրդների և պետությունների համաշխարհային համակեցությունում նաև իրավական համակարգերի գլոբալացման և ունիվերսալացման պայմաններում:

Ձևավորվող որակապես նոր պայմաններում մեր երկրի առջև խնդիր է ծառացել իր պետաիրավական քաղաքականության շրջանակներում զորավիգ լինելով և ամրապնդելով իր պետական ինքնիշխանությունը, պաշտպանելով իր ազգային շահերը և ժամանակի փորձությունն անցած համանշանակալից ձեռքբերումները, ժամանակակից իրավունքի բնագավառում ակտիվ և նախաձեռնիչ կերպով մասնակցել միջազգային իրավակարգի ոլորտում նորմերի ինստիտուտների և ընթացակարգերի բարեփոխմանն ու նորացմանը, միաժամանակ կատարելագործել և նորացնել իրավունքի իր ազգային-իրավական համակարգը (միջազգային իրավունքի բարեփոխվող սկզբունքների և նորմերի ոգուն համահունչ): Իրավաբանական գլոբալացման ոլորտում հաջողությունը զգալի չափով կախված է լինելու համաշխարհային իրավակարգի առաջիկա վերափոխման մասնակիցների ունակությունից և պատրաստակամությունից՝ պահպանելով անցյալի իրավական ձեռքբերումները, հարստացնել դրանք նոր, ավելի զարգացած (և պատմականորեն ավելի առաջավոր) իրավական (ու նաև պետական-իրավական) ձևերով, նորմերով, ինստիտուտներով ու

ընթացակարգերով, որոնք կվերաբերեն ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջազգային հարաբերություններին<sup>175</sup>:

